

91.99

2-24

1001  
2986

891.99 TUZ - DURMI

I - 74 UNIVERSITY OF

1001  
2986

891.99 TUZ - DURMI

I - 74 UNIVERSITY OF

DURMI

9767 151-59

419. 15/Jan/50

X

891.99


-6 NOV 2011

7-246

Ա.Ա.

002-ԳԸՐՈՒ

983



ԱՐՄԵՆԻԱ

ԳԱՅՐԱԿԱՆ

1001  
2987

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԻՆգ

ԴՈՐԾՈՂՈՒԹԵԱԿՄԵ

Տպարան «ԵԽՐԱԿ» Ալեքսանդրապոլիցիւ

1909

7/11/1922

ԳՐՈՒԹՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐՄԷԽՆ երիտասարդ, 25—30 տարհեկան,  
հագուստը զէյթունցու, այսինքն սալմայ  
թևերով կարճ բաճկոնակ, անդրավարտիքը  
վերևում լայն, քանի իջնում է ներքեւ նե-  
ղանում: Գլխին փոքրիկ սև փաթաթոցով  
արախչին. հաստ շալից գոտիկ, որի մէջ  
միշտ խրած է մի կեռ դանակ և երկու ա-  
տրճանակ, կշտից կախ կեռ սուրը, կրծքին  
խաչաձև փամփուշտներ, ձեռին հրացան,  
միայն սուրբ Յովհաննու վանքում առանց  
փանփուշտների և հրացանի: Ոտներին կամ  
սև ճղմաներ, կամ չուստեր: III-րդ գործո-  
ղութեան մէջ հագած է եւրօպական շորեր,  
գլխին ցիլինտը:

ՖԱԹՄԱՆ փաշայի աղջիկը, 18—20 տա-  
րեկան, I-ին գործողութեան ժամանակ հա-  
գած է երկար սպիտակ շրջազգիստ, զլխին,  
կրծքին թիւրքական զարդ ու զարդարանք  
և քօլ: II-րդ և III-րդ գործողութիւններում  
նոյն շորեր, միայն հերարձակ, առանց գըլ-  
խի զարդերի: IV-րդ և V-րդ գործողու-  
թիւնների մէջ սև շրջազգիստ և աւելի  
պարզ:

Սէի՞ղէ 40—45 տարեկան, հագած  
թիւրքական տարազի շորեր, գլխին իւղուտ  
ֆէս, առանց զէնքի. վանքում հագած է կըլ-  
տըր, երկար անթարի, ձեռին երկար տէ-  
րողորմեայ, զլիի ֆէսը փաթաթոցով:

ԻԲՐԱՀԻՄ 60—65 տարեկան, Աղանայի  
վիւայէթի փաշան, փաշայական շքանշաննե-  
րով, թիւրքական սպայի շորեր, զլիին  
բարձր մուք կարմիր ֆէս, կշտից քաշ ա-  
րած կեռ սուրը. վանքում վիրաւորի երկար  
որեր, զլիին ֆէս և մի սուր վիրակապե-  
րով փաթաթուած:

ՔԱԹԻՊ 30—35 տարեկան, նոյն թիւրք  
սպայական շորեր, առանց զէնքի:

ՄՈՒՍԱՅ ԲԷԿ 25—30 տարեկան, թիւր-  
քական շքեղ շորեր, զինւած ոտից ց'զլուխ,  
զլիին ֆէս փաթաթոցով:

ԳՐԻԳՈՐ և ԽԱԶԻԿ Եւրոպական շորեր,  
Ալիներին ֆէս:

ԱՅԻՇԱՅ թուրք աղջիկ, Ֆաթմանի ա-  
զախինը, 18—20 տարեկան, նոյն Ֆաթմա-  
նի շորերը, միայն առանց զարդի և աւելի  
պարզ:

ՂՈՒՑՈՒԹ փաշայի կինը, 50—55 տա-  
րեկան, Ֆաթմանի շորերի նման, միայն ա-  
շիլի պարզ զլիին ոսկէ զարդեր:

ԵՐԵՔ ԹԻՒՐՔ ԿՐՈՆԱԿՈՐՆԵՐ Ճերունի-

ներ, թիւրք՝ կրօնաւորի շորեր, այսինքն  
ոտներին կարմիր ճզմայ, վրաներից լայն  
սև արա, տակից անթարի՝ գոտիկով, իսկ  
զլուխներին սպիտակ, հաստ ծաղկաւոր փա-  
թաթոցով չալմաներ:

ԱԼՕ Սէխապէի խորհրդակիցը, նոյն  
Սէխապէի շորեր, երիտասարդ, աչքի մէկը  
կոյր:

ԱԼԻ ոստիկան, թիւրք սպայական շո-  
րեր, կշտից կախած կեռ սուրը:

ՍՈՒՐԵՆԵԱՆ 65—70 տարեկան, սպի-  
տակ ալիքներով, մետաքսից և արծաթից  
ասեղնազործած զէթունցու շորեր, բիրման  
շալից հաստ գոտի, զլիին ֆէս փոքրիկ  
փաթաթոցով, գոտիկում դանակ, ոտքերին  
սև ճզմաներ, անդրավարտիքը լայն:

ԾԵՐՈՒՆԻ սպիտակ ալիքներով, Սուրէ-  
նեանի շորերի նման, միայն աւելի պարզ,  
ձեռին ցուպ, անզէն:

ԱՇՈՒՂ կոյր, նոյն շորեր, ձեռին ջու-  
թակ:

ԶԵՅԹՈՒՆՅԻՆԵՐ Արմէնի շորերը, կող-  
քերից սուրը, գոտիկներում դանակ, ատր-  
ճանակ, կրծքերին, կոնակներին փանփուշտ-  
ներ, ձեռներին հրացաններ:

ՎԱՐԴԱՎԵՏ երիտասարդ, վարդապետա-  
կան շորեր:


ՎԻՐԱԿՈՐՆԵՐ կոշտ շալից երկար վերաբերներ, չորրորդի ոտը վիրակապերով կապված:

ԹԻՒՐՓ ԶԻՆԻՈՐՆԵՐ թիւրքական զինուորական շորեր, այսինքն մութ կապոյտ կտորից կարճ բաժկոնակ՝ տակից նոյն գոյնի ժիւեթ, մէջքերին գոտի, անդրավարտիքը լայն, ծայրերը հաւաքած ծնկերի տակ գուլպաների մէջ, ոտներին չուստեր կամ կոնտուրաներ, գլխներին ֆէսեր փիւսկիւտվ, ձեռներին սվիններով իրացաններ, կրծքերին փանփուշտներ:

ԱՀՄԵՏ երիտասարդ, գիշերապահ, նոյն զինուորական շորեր:

ԽԱՓՇԻԿ սպասաւոր, սևամորթ, կոինձ մազերով, գլխին ֆէս փիւսկիւլով, թուրքական շորեր, անզէն. մէջքին կարմիր մետաքսեայ գոտի, որի ծայրերը վերջանում են երկար ծոպերով:

(Անցքը կատարվում է Կիլիկիայում,  
XIX-րդ դարի վաթունական  
թվականներին):



## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ I

(Ցեսարանը ներկայացնում է պարտէզ, բեմի խորքութ բարձրանում է մի պալատանման տուն, որից մի գուռ է բացվում դէպի պարտէզը. աւելի հեռուն երեսում են լեռներ, լուսնի աղօտ լոյսը սփոված է պարտէզի վերայ):

Տ Ե Ս Ի Լ Ա

ԱԷԽՊԵ ԵՒ ԱԼՕ

(Սառերի միջից զգուշութեամբ առաջ են գալիս):

ԱԷԽՊԵ. (Չորս կողմը նայելով). Զի երեսում:

ԱԼՕ. Այս անգամ էլ զուր անցաւ, ափսոս, գարձեալ մի հարիւր ոսկի կորցրինք:  
ՍէխՊԵ. Ոչ, էլ ձեռքիցս չի կարող փախչել, միայն պէտք է զգոյշ լինել, եթէ ոչ կեանքերս վտանգի մէջ է:

ԱԼՕ. Անհոգ եղէք, եթէ նա Զէյթունի առիւծն է, դէ մենք էլ երեխաներ չենք:

ՍէխՊԵ. Յամենայն դէպս զգուշութիւն, միայն զգուշութիւն է պէտք. Արմէնը քանչութեան հետ, ունի և սատանի ինքը ու ձարպիկութիւն: (Լսվում է ուսների ձայն).  
Մարդ է գալիս, երկի նա է, շուտ, պահվենք ծառերի մէջ, Ալօ, զգուշ... (Երկուսն էլ պահվում են ծառերի մէջ,)

S b U h L β

ՆՈՅՆՔ ԵՒ ԳԻՇԵՐԱՊԱՀ ԱՀՄԵՏ

**ԱՀՄԵՏ** (Ձեռին նրացան, զինված, ներս  
մտնելով մի քիչ կանգ է առնում, գլուխը  
բաւլղալ փարաքում, վերարկուն կոճկում եւ  
յետոյ սկսում է յես ու առաջ ման զալ պա-  
լատի առաջ): Ե՞յ աշխարհ, ես այստեղ ցըր-  
տից պիտի գողգողամ, ամբողջ գիշերը ինչ-  
պէս մեռեների ողի տան շուրջը պիտի գե-  
գերեմ, որպէսզի իմ փաշայի, իմ աղայի  
ըունը հանդիսաւ լինի, որովհետև թնչպէս  
քաղցած մարզիկ կարող են նրա քունը  
խանգարել, կարող են նրա սնդուկին մօ-  
տենաւ, որի մէջ նիրհում են ոսկիների կոյ-  
տեր... կոյտեր, որոնք մեզ պէս հարիւրա-  
ւոր թշվառներին կաղատէր այսպիսի և սոյ-  
նանման զժոխային կեանքից: (Քիչ ման  
զալով յես ու առաջ եւ կանգնելով). Օ՛,  
ցուրտ է, ցնւրտ, աշնան գիշեր կ'նշանակէ  
դժոխք, նրա նման ցուրտ, խաւար ու եր-  
կար... (Սան զալով). Ե՞ս, ցուրտ է...

S b U h L φ

**ԱՀՄԵՏ, ԱՅԻՇԱ, ՊԱՀՎԱԾ, ՍԷԽՊէ ԵՒ ԱԼԾ**

**ԱՅԻՇԱ.** (Փարաքված եյրամի մէջ կամա-  
ցուկ մօտենում է), Ահմետ:

**ԱՀՄԵՏ.** (Շուր զալով, խրոխ), Ո՞վ է:  
ԱՅԻՇԱ. Ահմետ, ես եմ:

**ԱՀՄԵՏ.** Այիշա, գու ես, այս ժամին ինչ  
դործ ունիս այստեղ: (Մօտենում է):

**ԱՅԻՇԱ.** Քեզ հետ խօսելիք ունիմ:

**ԱՀՄԵՏ.** Ասա սիրելիս: (Բոնում է Այի-  
շայի ձեռից):

**ԱՅԻՇԱ.** Ամօթ է Ահմեդ, այժմ դրանց  
ժամանակը չէ:

**ԱՀՄԵՏ.** (Հեղնելով). Ի հարկէ պէտք է  
ամաչէլ աստղերից, մէկ էլ քեղանից:

**ԱՅԻՇԱ.** (Ձեռը ազատելով Ահմետի ձե-  
ռից): Ահմետ, վերջ տուր:

**ԱՀՄԵՏ.** Այիշա, սիրելի ինձ, ես թէն  
խեղճ, բայց վարդի պէս պիտի պահեմքեզ,  
ունիմ մի սիրտ, որը ամբողջապէս քօնն է:

**ԱՅԻՇԱ.** Լաւ, զրանք յետոյ: Ահմետ, ե-  
թէ ինձ սիրում ես, լսիր իմ խնդիրս և  
կատարիր:

**ԱՀՄԵՏ.** (Նորից Այիշայի ձեռից բռնե-  
լով, կրէն): Ասա հոգիս, կը լսեմ, կը կա-  
տարեմ, եթէ տաս կրակն էլ մտիր, կը  
մտնեմ:

**ԱՅԻՇԱ.** (Ահմետին մի կօղմ տանելով,  
ցածր) Ահմետ, իսկապէս զու ինձ սիրում  
ես և ուզում ես ինձ կին առնել:

**ԱՀՄԵՏ.** (Սեղմելով ձեռը): Օ՛, զրան  
խօսը չ'կայ:

ԱՅԻՇԱ. Եթէ այդպէս է, ևս քեզանից մի խնդիր ունեմ, խոստացիր, որ կը կատարիս:

(Այս խօսակցութիւնների ժամանակ Սիխափէն զգուշութեամբ զլուխը դուրս է հանում ծառերի շարեւերից, մի առժամանակ լսում է եւ նորից պահիում):

ԱՀՄԵՏ. Ուզում ես ինձ մինչև անգամ առոչող կրակի կամ խանձող գնտակի դէմ ուղարկիր, պատրաստ եմ կատարելու քո ցանկութիւնը:

ԱՅԻՇԱ. (Խօրհրդաւոր). Ահմետ, ինչպէս ես և դու իրար սիրում ենք, չք որ այնպէս էլ ֆաթման խանումը կարող է մի որիշին սիրել:

ԱՀՄԵՏ. Ի հարկէ:

ԱՅԻՇԱ. Եւ ինչպէս որ մենք ենք ուզում իրար տեսնել, չք որ այնպէս էլ նրանք են ուզում:

ԱՀՄԵՏ. (Հաւաթութեան նօան անելով). Ի հարկէ:

ԱՅԻՇԱ. Եւ ինչպէս որ մենք ենք զգուշանում մարդկանցից, չք որ այնպէս էլ նըրանք են զգուշանում:

ԱՀՄԵՏ. Դրան խօսք չկայ, բայց դու այն ասա, ինչ ես ուզում ինձանից:

ԱՅԻՇԱ. Ես ինձրում եմ քեզանից, որ մի առժամանակ հեռանաս այստեղից. Ֆաթ-

ման խանումը հէնց այստեղ տեսակցելու է իր սիրելու հետո:

ԱՀՄԵՏ. Ո՞չ, ոչ, դա անկարելի է, ես չեմ կարող թոյլ տալ այդ բանը. Սյիշա, տէրս ինձ պատւիրել է հսկել իր գանձերի վերայ, իսկ ֆաթման խանումն էլ նրա գանձերից մէկն է, ես չեմ կարող հանդիսատես լինել, թէ ինչպէս մի ուրիշը կը գրկէ, կը համբուրէ ֆաթման խանումին: Ո՞չ, Սյիշա, կեանքս ուզէիր չէի ինայիւր բայց այդ...

ԱՅԻՇԱ. (Կտրելով). Ուրիշն դու ինձ չես սիրում, բոլորը կեղծ է, բոլորը շինծու: (Ուզում է հեռանալ):

ԱՀՄԵՏ. (Բռնելով). Սիրելիս, մի կատաղիր, ես չեմ կարող դաւաճանել սիրոջս:

ԱՅԻՇԱ. Ի՞նչ դաւաճանութիւն, ֆաթման խանումը ուզում է տեսնել իր սիրած տղամարդուն: Դա ոչ քո կողմից դաւաճանութիւն է, ոչ էլ նրա կողմից մեղք: Կինու տղամարդ եղել են իրար սիրելու համար:

ԱՀՄԵՏ. Բայց...

ԱՅԻՇԱ. (Կտրելով). Ես քեզ բան եմ ասում, եթէ դու մէկ էլ ուզում ես սկ աչերը և կլոր թշերը տեսնել կատարեր ինդիրս:

ԱՀՄԵՏ. (Կրօս, փարաբելով Սյիշային). Վայ մեռնեմ քո սկ աչերին, իմ սիրուն հուրիւ: (Համբուրում է):

ԱՅԻՇԱ. (Կուրս պրծնելով). Սուտէ, սուտ  
այդ բոլորը, ոռու ինձ չես սիրում:

ԱՀՄԵՏ. (Եր զլիսին խփելով) Վայ մե-  
ռիր զլուխ, Այիշա, քեզ մատաղ, մի տան-  
ջիր ինձ:

ԱՅԻՇԱ. Կեղծ խօսքնր, խարում ես,  
ինչպէս խամաճուկ առանց սիրելու ինձ շո-  
յում ու զգվամ ես:

ԱՀՄԵՏ. (Բոնելով Այիշայի ձեռից եւ  
զգիլով) Մի խօսիր, մի, ես սիրում եմ  
քեզ, սիրում և ինչ որ պահանջես, պատ-  
րաստ եմ կատարելու:

ԱՅԻՇԱ. Լաւ, ուրեմն, այժմ ինչ որ  
ինդրեցի կատարիր, իսկ յետոյ մենք ժա-  
մանակ կունենանք իրար տեսնելու:

ԱՀՄԵՏ. Բայց ով է ֆաթման խանումի  
սիրելին, Այիշա:

ԱՅԻՇԱ. Թէ ով է, թող մնայ այդ, միայն  
դու խոստացիր, որ կը կատարես խսդիրս  
և այս բոլորը մեր մէջ կը մնայ գաղտնիք:

ԱՀՄԵՏ. Խնպատճառ Մուսա բէկը կ'լի-  
նի, այդ քաջ տղամաբգը, որի սուրը ան-  
ցեալ գարուն հազարաւոր գեաւուրներ մոր-  
թուեց: Տղամարդ է, արժէ:

ԱՅԻՇԱ. Մուսա բէկն է, կամ մի ուրիշն  
է, այդ քործը չէ, միայն այժմ մեր նը-  
շանը այս կը լինի, երբ պալատից կը լսես  
չոնկուի ձայնը, մի առժամանակ հեռացիր

այստեղից և երբ երկրորդ անգամ նորից  
կը լսես չոնկուի ձայնը, կարող եռ վերա-  
դառնալ: (Ազգում է նեռանալ):

ԱՀՄԵՏ. Այ չարանձի, այդ բոլորը լաւ,  
բայց առանց փէկէշի մի քայլ անգամ չեմ  
անի, այս էլ կանխիկ եմ ուղարմ:

ԱՅԻՇԱ. Ի՞նչ փէշէշ:

ԱՀՄԵՏ. Մի զոյդ համբոյր քո այդ գող-  
արիկ թշերից:

ԱՅԻՇԱ. (Մատենալով): Առ, ահա, դեկիս,  
միայն ինչ որ քեզանից ինդրեցի, կատարիր:

ԱՀՄԵՏ. (Համբուրելով): Ահմետը քո ծա-  
ռան է, Ահմետը քո ստրուկը, կը լսէ, կը  
կատարէ և կը լուէ:

ԱՅԻՇԱ. Լաւ, լաւ, բաւական է, ուշ է,  
պէտք է շտապիւր (Պատրաստվելով նեռանալ  
եւ մի եւկու քայլ անկով): Հասկացմը, երբ  
կը լսես չոնկուի ձայնը, հեռացիր, իսկ  
երբ նորից կը լսես, եկ: (Գնում է):

### Տ Ե Ս Ի Լ Դ

ԱՀՄԵՏ, ՊԱՀՎԱԾ ՍէԽՊէ եկ ԱՀՕ

ԱՀՄԵՏ. (Մատիսի): Սեկի տչեր, ծանր  
պարտականութիւն զրիր իմ վերայ, բայց  
ինչ արած, որպէսզի Այիշայի աշերը միշտ  
նայեն իմ աշքերի մէջ, պէտք է յանձն առ-  
նել: (Միջոց): Բայց ով պէտք է լինի այդ

Քոռ-օղլին. անպատճառ Մուսա բէկը կը լի-  
նի, նա է: Իմ կարծիքով տերս, իրահիմ  
փաշան էլ այդ բանի գէմ ոչինչ չունի, նա  
ուրախութեամբ կ'տայ իւր աղջիկը այդ  
քաջ, հարուստ և հզօր բէկին: Բա էլ ի՞նչու  
էի ես ընդիմանում, ֆաթման խանումը  
գեղեցիկ, Մուսա բէկը քաջ ու հարուստ,  
իրահիմ փաշան համաձայն, ես էլ իմ կող-  
մից համաձայն, թող ուրախանան, թող  
խնդան: (Ասփօմ է չոնկուռի մելամախճիկ  
ձանը) Ա՛, հեռանամ, գալիս են... ինչ սի-  
րուն է նվազում, անպատճառ Այիշայիս  
մատներն են: (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ Ե

ՍէԽՊէ ԵՒ ԱԼՕ

(Գաղտնազողի դուրս են գալիս ծառերի մի-  
ջից և երկիրածութեամբ չորս կողմերն են  
նայում. չոնկուռի ձայնը մի առժամանակ  
շարունակվում է յետոյ լուսմ)

ՍէԽՊէ. (Ալօին): Տեսար, լսեցիր:

ԱԼՕ. Տեսայ, երկի այդ աղջիկը Արմէնի  
համար է ժամադրութիւն պատրաստում:

ՍէԽՊէ. Այժմ ինձ համար պարզ է բո-  
լորը:

ԱԼՕ. Ի՞նչպէս:

ՍէԽՊէ. Ախր ինձ զարմանը էր պատճա-

ոռւմ թէ Արմէնը ի՞նչ գործ ունի այս կող-  
մերը, իսկ այժմ պարզ է. դէ, շտապենք:

ԱԼՕ. Ո՞ւր շտապենք և ինչ անենք:

ՍէԽՊէ. Պէտք է Մուսային իմաց տալ:  
ԱԼՕ. Մուսային, ի՞նչու. (Ցոյց տալով):

Ահա փաշան, ահա զօրանոցը:

ՍէԽՊէ (Հեղենական ձգեռվ): Հէյ, շատ  
անփորձ ես, մեզ ի՞նչ օգուտ, իթէ միայն  
Արմէնին կալանաւորել տվինք, պէտք է  
գէպրից օգուտ քաղիկ:

ԱԼՕ. Մեր օգուտը այն կը լինի, որ  
փաշան կը վարձատրէ:

ՍէԽՊէ. Փաշայից շատ շատ կը ստա-  
նանք մի հարիւր ոսկի և մի մաշալլա. ոչ,  
ԱԼՕ, գործերս գիտենանք: Դու այժմ մնայ  
այս պարտիզում և հետեւիր Արմէնին, իսկ  
ես երթամ Մուսային բերեմ այստեղ:

ԱԼՕ. Մուսային բերեմ, ինչու:

ՍէԽՊէ. Ինչու, որսվէնեակ Մուսան ֆաթ-  
մանի փեսացուն է, որովհետեւ նա կատաղի  
գազան է, որովհետեւ աղջեցիկ բէկ է, որով-  
հետեւ շատ հպարտ ու յանդուգն է, նա երբ  
լսէ թէ Արմէնը փաշայի պարտէզումն է  
մէն մինակ կը վագէ գէպի Արմէնը, որպէս-  
զի միւս օրը պարծենայ իր քաջութեամբ:

ԱԼՕ. Ե՛, ի՞նչ օգուտ:

ՍէԽՊէ. Այն օգուտը, որ նըանք կաշ-  
խատեն իրար մորթելու: Եթէ սպանվեց

Արմէնը, մեղ համար նոյն է, ելի կըստառանանք մի բատկ ոսկին ու մաշալան. իսկ եթէ սպանվեց Մուսան, օ, այն ժամանակ հրափր Ալօ, ամբողջ Աղանան մերը կը լինի:

Ալօ Հասկանում եմ, բայց ի՞նչ ես մտադիր ահելու:

ՍէԽՊէ Այդ յեսոյ, այժմ շտապենք, Դու այս կողմերը մնայ և դիտիր, հսկիր, հետեկիր, լսիր գառն բացվելու ձայնը: (Սէխպէն մեղմուրեամբ խփելով Ալօի ուսին): Դէ գնանք, ֆաթման խանումո գալիս է:

### ՏԵՍԻԼ Զ

#### ՖԱԹՄԱՆ ԵՒ ԱՅԻՇԱ.

(Զգուշուրեամբ տանից դուրս են զալիս Ֆաթման ու Ալիշան. Ալիշան ձեռին բոնած ունե շննկուսը):

ՖԱԹՄԱՆ. (Չորս կողմբ նայելով): Այիշա, ամեն զգուշութիւն ձեռք առել ես, Ահմետը հաւատարիմ է քեզ:

ԱՅԻՇԱ. Իմ սկ աչերը նրան կաշկանդել են այնպէս, ինչպէս քո գեղանի դէմքը քո քաջին: Նա ինձ չի խարի, նա արդէն իր փէշքչը ստացաւ, նա գոն է:

ՖԱԹՄԱՆ Ի՞նչ, փող տվիր:

ԱՅԻՇԱ. Ո՞չ, խանում, մի զոյկ համբոյը տոի, նրա փէշքչը այդ է:

ՖԱԹՄԱՆ. Համբոյը, բայց Այիշա, գու սիրում ես Ահմետին, թէ ինձ համար յանձն առար այդ զոհողութիւնը:

ԱՅԻՇԱ. Խանում, քեզ կը պատահի երիտասարդ սիրո, որ չը սիրէ. թէս իմ Ահմետը մի խեղճ գիշերապահ զինոր է, թէս աղքատ, բայց հարուստ է սրտով, մենք հրաջանիկ ենք, որովհետեւ իրար սիրում ենք:

ՖԱԹՄԱՆ. Այս, երջանիկ էք, Այիշա, որովհետեւ մտրգուս երջանկութիւնը ոսկին, ակն ու մարգարիտը չէ, ոչ էլ պատիւը, պաշտօնը. այլ երջանիկ է այն մարդը, որը գտնուում է իր սիրելու մօտ: Է՞յ, Այիշա, որքան գժրազգ եմ ես, իմ սիրելին, իմ հոգոյս հատորը քրիստոնեայ լինելով, ես զրկւած եմ, ես տանջւում եմ, որովհետեւ եթէ իմ հայրը իրրահիմ փաշան տեսնէ մեղ իրար սիրելով կամ մինչեւանգամ կասկածէ, զարհուրելի հատեանըներ կունենայ:

ԱՅԻՇԱ. Խանում, թող կրօնը փոխէ քո քաջը, որովհետեւ կրօնը փոխելով ոչ միայն քեզ, այլև կըստանայ մհծամիծ պարզեներ:

ՖԱԹՄԱՆ. Այիշա, ամեն կողմից զրժը բախտ եմ, Արմէնս ոչ միայն քրիստոնեաց է, այլև ճանաչւած փէղայի:

ԱՅԻՇԱ. (Ահաբեկված): Ֆէղայի, խա-

նում, էլ ինչու սիրեցիր այդ Փէղայուն:

ՖԱԹՄԱՆ. Որովհետև նա քաջ էր, գեղցիկ, պարկեշտ. որովհետև բարի էր, ուղորմող, անձնազո՞ն: Օ՞հ, Այիշա, չը գիտես թէ որքան վատ ժամանակներում ենք ապրում: Նա մեղաւոր չէ, որ Փէղայ է, երբ մերոնք մորթօտում էին նրա եղայրներին, քոյրերին, երբ նրանց տան ծուխն ու մուխը բռնել էր երկինքը, այն ժամանակ մարդիկ եղան, որ պաշտպանեցին իւրայիններին, մարդիկ եղան, որ ճգմեցին անմեղներին մորթօտող դահիճներին և վաստակեցին Փէղայի անունը և որից խորշում են բուլոր. մի խօսեցուր, Այիշա, խոցոտ է իմ սիրուր, մի խօսեցուր, որովհետև պատկերանում են իմ աչքի առաջ անցած արհավիրքները:

ԱՅԻՇԱ. Բայց խանում, չէ որ դու այնտքան գեղեցիկ ես, քո հայրը այնքան պատռվ ու հարուստ, որ կարող ես քո փեսացուն ընտրել ամենարարձր բէկերից:

ՖԱԹՄԱՆ. Բէկերից... այն, բոլորի ցանկութիւնը այդ է, բոլորը ցանկանում են, որ գառնամ բէկի կամ բէկպատէի կին, որոնք երբ հարրած, դադրած վերադառնան մարդասպանութիւններից, աւարառութիւնից, զլարճանան, ուլախանան ինձանով, Խեղճ ենք մենք, Այիշա. Բնչ է մահմեդական

կինը, տղամադու համար զվարձութեան գործիք, ուրիշ ոչինչ...

ԱՅԻՇԱ. Խանում, որտեղ տեսար և սիրեցիր այդ Փէղայուն:

ՖԱԹՄԱՆ. Երբ հայրս դեռ Պօլսում էր, ես սովորում էի մի Փրանսիացի վարժուհու մօտ, իսկ իմ սիրելի Արմէնն էլ բժշկական ուսումնարամի սան էր և շուտ շուտ էր պատահում այդ կնոջ տանը: Այդտեղ մենք ծանօթացանք, ծանօթանալով սիրեցինք իրար և շատ այսպիսի լուսնեակ զիշերներ ենք անցկացրել իրար զգվելով, սիրելով մինչև որ վրա հասան այս սև տարիները և հայրս նշանակվելով Ագանայի վալի, մենք եկանք այստեղ իսկ Արմէնը զնաց իր հայրենիք, Զէյթուն, որը այստեղից երկու օրվայ ճանապարհ էր:

ԱՅԻՇԱ. Բայց յետոյ նորից ինչպէս իրար տեսաք, չէ որ այստեղ դու բոլորովին փակւած ես հարեմում:

ՖԱԹՄԱՆ. Մի անգամ ոտները շղթայած, վէրքերով ծածկված, արեակէզ մի Փէղայի բերին. գանակոծում էին խեղճին, նեղում. նա վերջապէս ուժապառ նստեց հարեմի գէմ ու դէմ ծառի տակ, ես նայում էի հարեմի պատուանից. ա, վեր նայեց, նրա աչքերը հանդիպեցին իմ աչքերին, Արմէնն էր, իմ սիրելին, երկու տարի կորցը-

բած, մոռացած, հոգուս խորքերում թաղված սէրս: Նա զարմացաւ, որովհետեւ չը դիտէր՝ թէ մհնք Պօլսից տեղափոխվել ենք այստեղ:

**ԱՅԻՇԱ.** Խանում, Երբ էր այդ:

**ՖԱԹՄԱՆ.** Սրանից մի երկու ամիս առաջ: Աշտարակում բանտարկւած այն հուժեկու տղամարդն էր, որի մի բուռն քաջերը մի վաշտ գորք գետին փոելով բանտի զըռները ջարդեցին և աղատեցին իրենց գըլեխաւորին, իրենց ընկերին, որի համար շինուած էր կախաղան և որին լոյսը բացվելուն պիտի բարձրացնէին անարդ սիւնի վիրայ:

**ԱՅԻՇԱ.** (Անաբեկլված): Ո՞հ, քո Արմէնը այն ֆէղայի աւազակն է, որը իւր ձեռները լիցան է հարիւրաւոր մուսուլմանի արեան մէջ, այն աւազակն է, որը իր զէյթունցիւներով սարսափ է տարածել Ազանայի շըրջակայքում... Խանում...

**ՖԱԹՄԱՆ.** Լոիր, Այիշա, մի անարդիք այն մարդուն, որը ստիպված է սպանութիւններ գործելու, մի անարդիք այն քաջին, որը աւազակների, մարդկազանների արիւնն է թափում. լոիր, յարգիր այն մարդուն, որը թշվառների պաշտպանը, որբերի հայրն է, որը սրբում է սկաւոր մայրերի արտասութը:

**ԱՅԻՇԱ.** Բայց չէ որ գեաւուր է այդ

քաջը, չէ որ նա պիղծ գեաւուրներին է պաշտպանում:

**ՖԱԹՄԱՆ.** Այիշա, ամօթ քեզ, կնոջ սիրալ այդքան կոշա լինելու չէ, կինը պիտի խղճայ թշվառներին. թշվառներին, որոնց թշվառութիւն բղիում է մեր թշվառութիւնից: Այիշա, ինչ զանազանութիւն քըրիստոնեայի և մուսուլմանի մէջ, չէ որ նրանք բոլորն էլ մարդիկ են. մարդիկ, ոչ բոնք դարերից ի վեր իրար հետ են ապրում: որոնք մի երկրի ծնունդ են, բայց որոնց բաժանել է Ղուրանը ու Աւետարանը. գու պաշտիք քո Ղուրանը, նա թող պաշտէ իր Աւետարանը. բայց գու խտրութիւն մի գնիր նրա և քո մէջ, որովհետեւ դուք երկուսդ էլ մարդիկ էք. մարդիկ, ոչ բոնք պարտական են իրար սիրելու:

**ԱՅԻՇԱ.** Խանում, ես մի խեղճ աղջիկ եմ, ես չեմ հասկանում այդպիսի բաներ, ես զիտեմ և զգում եմ միայն մի բան, այն է, որ հաւատարիմ ստրուկն եմ իմ Փաթման խանումի, նա եթէ ինդայ՝ ես էլ կը ինդամ նա եթէ լայ՝ ես էլ կը լամ: Նա է իմ ուրախութիւնը, խնդութիւնը և նրա ցանկութիւնն է իմ կամքը:

**ՖԱԹՄԱՆ.** Շնորհակալ եմ, Այիշա, ես գիտեմ այդ բանը և զրա համար քեզ յայտնեցի իմ զաղտնիքը:

ԱՅԻՇԱ. Բայց ի՞նչ միջոցով նա քեզ  
յայտնեց, որ այս երեկոյ գալու է:

ՓԱԹՄԱՆ. Նրա նամակը երեկ դու բերեր ինձ:

ԱՅԻՇԱ. (Զարմացած). Ե՞ս:

ՓԱԹՄԱՆ. Այո դու, չէ՞ որ երեկ էյրա-  
մում փաթաթւած կնոջ ձեռից դու առար-  
ծաղկանկարը, որը իբրև թէ փաշայի աղջը-  
կան ընծայ է բերել և բերիր ինձ. Այդ ձե-  
ռագործի ծաղիկների մէջ գրված էր մի  
նամակ, այդ նամակը Արմէնիցն էր, իսկ  
բերողը նրա երիտասարդ ընկերներից մէկը:

ԱՅԻՇԱ. Ո՞րքան ճարպիկ... (Հեռվից  
լսվում է երգի ձայն):

ՓԱԹՄԱՆ. Հեռացիր նրա ազդանշանն է,  
ինձ սպասիր տան պարտիզում:

ԱՅԻՇԱ. (Հեռանալով). Միայն շոտպե-  
ցէր, բաւականին ուշ է, (Գնում է):

S E U H L E

ՑԱԹՄԱՆ ՄԻԱՅՆԱԿ

ՑԱԹՄԱՆ. (Նստելով մի ժայռի բեկորի  
վերայ): Ո՞հ, նրա ձայնն է, նրա գեղեցիկ  
մեղեղին, որը շատ անգամ է շոյել իմ լը-  
սողութիւնը: Նա է, իմ անգին Արմէնը.  
Խեղճ, կեանքիդ գարունը նոր բացված  
աստանդական թառամում ես սարեր ու ձո-

բեր: Քո ուսը կոշտացել է հրացանից, քո  
սուրը մաշվել մարդիկ կոտորելուց. դու  
խոնճացած ես, դու դադրած. քեզ արիւնա-  
խում գաղան են կանչում՝ այն ինչ դու  
հեղ, խոնարհ, մարդասէր հս. միայն դահիճ  
դահիճների, մահի հրեշտակ մարդ գաղան-  
ների: (Դառնալով դեպի հեռութ): Արի իմ  
սիրելի, արի հանգստացուր քո վաստակած  
գլուխը իմ կրծքին, որը քո միակ բարե-  
կամն է այստեղ, որը քո գերին է, որը  
ցանկանում է քեզ հետ լինել քեզ հետ շըն-  
չել, քեզ գուրգուրել, քեզ պաշտել... որին  
դու երջանկութիւնը, խնդութիւնը պար-  
ծանքն ես, որը քո գգվանքին, քո սիրուն է  
կարօտ, որի կարօտակէզ աշերը մնացել է  
ճանապարհող...

S E U H L E

ՑԱԹՄԱՆ ՈՒ ԱՐՄԷՆ

ԱՐՄԷՆ. (Երեւալով պարտիզի ծառերի  
միջից, հրացանը ուսին, կեռ ոուրը հաւ ա-  
րած կըտից, երկու ատրենանակներ եւ դանակը  
գոտկում. իսկ փամփութեները խաչած եւ կա-  
պած կրծքին. օտար մօտենում է Ֆարմանը,  
երկու հայլ է անօւմ դեպի Արմէնը եւ թեւերը  
պարզում): Փաթման, իմ չքնաղ, իմ հրեշ-  
տակ... (Փարզում են):

**ՓԱԹՄԱՆ.** (Կարողին): Արմէն, միթէ իւրականութիւն է, երազ չէ արդեօք:

**ԱՐՄԷՆ.** Ինըը կեանքը երազ է, որովհետեւ վերջին տարիների ծանր դէպեքերի տակ իմ գլուխը ծանրացել է, իմ ուղեղը մշուշով է պատել. ինձ թվում է թէ խարխարում հմ խաւարի մէջ... Այս, ինձ համար երազ է աստանդական թափառումները, մերայնոց կոտորածները, զիւղերի բոցն ու ծուխը, հոսած արիւնը... երազ է մայրերի ողբն ու կականը, յուսահատական կանչինները... Ինձ համար խաւարի միջից էին փայլում մարդակերպ գաղանների սվինները, արիւնաշաղաղ սրերը և զոների օրհասական հանչոցները. այդ բոլորը ինչ որ անբնական, ինչ որ տարօրինակ էր և տարօրինակ մեր այս հանդիպումը. ուր Բոսֆորի ափերը, ուր Զէյթունի լեռները... Արմէնը ու Փաթման փոխանակ Բոսֆորի գեղածիծաղ ափերին իրար զզվելու, գուրգուրելու, Զէյթունի լեռների սատրուաններին գաղտնագողի են տհսակցում գաղտնագողի, որովհետեւ հանգամանքները ւրմէնին մղել են դէպի ֆէգայութիւն, դէպի մարդասպանութիւն...

**ՓԱԹՄԱՆ.** (Արմէնի ձեռները սեղմելով կարօգին): Արմէն, մի անարգիր ինձ, ես մեղաւոր չիմ, որ կոչվում եմ այն մարդու զաւակ, որը գազան ու գանձիմ է անմեղների: Մի անարգիր, որ մոււլումնի գուստը եմ, մեղաւոր չէ մուսլու-

նա գատաւոր է աւազակների, մարդասպանների, որոնք ամեն օրէնք, իրաւունք ոտնաւակ տալով իրենց արարքները ստերով, զրպարտութիւններով արդարացնելով, քանդում, սպանում, այրում, յոշոտում են անմեղ մարդկանց, անմեղի, որոնց մեղքը միայն այն է, որ թոյլ են, անզէն, անպաշտպան:

**ԱՐՄԷՆ.** (Յարմոնին կրծին սեղմելով): Փաթման, մի խօսիր գու մուսլուման, մուսլումանին մի անարգիր: Միթէ իրահաճմ փաշայի աղջիկն է խօսում, այն հզօր փաշայի, որի հարիւրաւոր վաշտերը մահ ու աւերմունք սփոեցին Զէյթունի շուրջը: (Յուզված բանած Յարմանի ձեռները): Խօսում է այն մարդու գուստը, որը ծիծաղում էր մայրերի վայնասունի, հայրերի գիւկների տան բոց ու ծուխի. և վերջապէս յոշոտված հայ մանկաի վերայ. մի խօսիր, մի անարգիր քո ծնողին, նու իր պարտականութիւնը կատարեց իրեկ զինուր հլու է իր մեծերին, իրեկ հայրենասէր պաշտպանում է հայրենիքը՝ անզէն թոյլ խեղճ մարդկանց գէմ:

**ՓԱԹՄԱՆ.** (Յուզված): Արմէն, մի անարգիր ինձ, ես մեղաւոր չիմ, որ կոչվում եմ այն մարդու զաւակ, որը գազան ու գանձիմ է անմեղների: Մի անարգիր, որ մոււլումնի գուստը եմ, մեղաւոր չէ մուսլու-

մանը, մեղաւոր են առհասարակ վատ մարդիկ, որոնք իրենց փառասիրութեան իրենց ընչաքաղցութեան մոլութիւնների համար մորթոտում են հազարաւոր մարդկանց, քարու քանդ են անում հարիւրաւոր գիւղ ու քաղաք։ Միթէ մուսլումանը կամ հէնց թիւրք ժողովուրդը մեղսակից է զրանց, միթէ նա էլ նոյն գաղան արիւնախում մարդկանց համամիտ է կամ խրախուսում է. — Ո՞չ, նա էլ նոյն թշվառներից է, նրանց էլ են կեղեքում թալանում անարգում նըրանք էլ զոհեր են արիւնախում գաղանների միայն այն դանազանութեամբ, որ մուսլումանին, որոնք աւելի անպաշտպան աւելի խեղճ և աւելի ճնշված են. բայց և որոնք դատապարտվում են, որովհետև ճարպիկ մարդիկ նրանց շնորհն են փաթաթում արիւնոտ լաթերը, Արմէն, անաչառ եղիր, Աւետարանի և Ղուրանի դանազանութիւնից մի մոլորվիր. պաշտպանիր խեղճին, նոյն է, նա մուսլուման է թէ բրիստոնեայ, թիւրք է թէ հայ։

ԱՐՄԵՆ. Կը սիրեմ խեղճը, անարգվածը, թոյլը, կեանքս կը զոհեմ նրա համար, որին ոտնատակ են տալիս, որին կեղեքում, թալանում, տրորում են, է՛ ֆաթման, մի կարծիր, որ ես այս սուրը, այս հրացանը կը բում եմ, որպէսզի վրէժինդիր լինեմ իմ

արիւնակիցների փոխան. ոչ, իմ դեգերելը, ինձանից հոսած արիւնը, իմ գործած թալանները, ասպատակութիւնները միշտ ուղղված են զէպի հարստահարիչները. իսկ թէ զրանք ում են հարստահարում, այդ նոյն է, նոյն է թիւրք, քիւրդ, հայ, նոյն է ինձ համար. ամեն մէկը, որի կոչումն է մարդ իսկ տիտղոսը թշվառ. զարձուր աշքդ, պալատներ, ոսկի, բէհէզ, համատամ կերակուրներ և կըքերով յղփացած մարդիկ. — իսկ զրանց շարքում ցուրտ, քաղց, ցնցոտի և թշվառ մարդիկ, ես սիրում եմ թշվառը. յարգում ցնցոտին, գուրդուրում ցուրտն ու քաղցը. իսկ ատում շռայլը, ցոպը, մոլին՝ որոնց աղբիւրն ու հիմքն է մարդկանց սիջուկ քրտինքը, աղի արտասուրը և թշվառութիւն։

ՓԱԹՄԱՆ. (Փարվելով վզովը կաթօգին). իսկ ես սիրում եմ նրան, որը չարութեան հալածիչն է, որը թշվառ մարդկանց շրջապատող ցրտի, քաղցի ու ցնցոտիների փոխան, աշխատում է պարզել նրանց երջանկութիւն, երջանկութիւն իր բոլոր բարիքներով։ Այդ գու ես, Արմէն, զրան գու ես ձգտում. ձգտում քո ամբողջ ուժով, էութեամբ. գու այդ բանի համար չես խնայի ոչ մի բան, ոչ քո կեանքը. ոչ քո արիւնը և ոչ էլ ինձ եղկելուս։

**ԱՐՄԵՆ.** (ՄԵշելով). Ֆաթման, անուշիկ ֆաթման, միթէ կասկածում ես իմ սիրոյս, միթէ մեր այսօրվայ տեսակցութիւնը առ հաւատչեայ չէ այդ բանին:

**ՖԱԹՄԱՆ.** (Լալով). Ես գուստը եմ այն դահձի, որը մորթոտել է քո ծնողներին, եղբայրներին, քո քոյրերին, որը երդվեալ թշնամի է քեզ, որը քո գլուխը գնահատել է. և որի դատեր գու պիտի սիրես:

**ԱՐՄԵՆ.** (Կրծքին սեղմելով). Ես սիրում եմ ֆաթմանին, որի սիրտը այդ բոլորի վերայ ցաւում է այնպէս, ինչպէս իմ սիրտը, ինձ համար իբրահիմի գուստը չը կայ, այլ կայ մի զինակից հրեշտակ, որը յօգուտ թշվառի՝ փոխանակ սուր հրացանի, գործ է դնում իւր գորովալի խօսքերը, ողորմածութիւնը. ասա, ֆաթման, ասա գու սրտակից ես ինձ, գու սիրում ես այն ֆէդայուն, որը իւր ձեռները լվանում է քո հօր զինւորների արեան մէջ:

**ՖԱԹՄԱՆ** (Քզիկելով) Ես սիրում եմ այդ ֆէդայուն, ես գովում եմ նրա նպատակը. բայց աղերսում եմ խնայել այն մարդկանց, որոնք թէկ մուսլիման, բայց նոյն ողորմելի ու ինչն մարդիկներն են, որոնք ոչ թէ իրենց կամօր, այլ ուրիշի ստիպմամբ են կատարում ոճիրը:

**ԱՐՄԵՆ.** (Զղաձգաբար) Ոճիր.—Կ խնայել.

—Ո՞ւմ խնայել, այն մարդուն, որը իր սուրբում է իմ մօտիկի կուրծքը. խնայել այն մարդուն, որի գնդակին զոհ է գնում իմ եղբայրը, քոյրը, ազգականը. ես մարդապան չեմ, ոչ աւազպակ, ոչ աւարտոու և ոչ էլ մի անխիզն գաղան, այլ մի զինւոր, որը պաշապանում է իւրայիններին, որը վրէժինդիր է գէպի իր քար ու քանդ օճաւլը: (Փզիկելով) Ֆաթման, սիրելիս, թողնենք գրանք, թողնենք աշխարհային գծուծ հաշիւները և սլանանք գէպի վեր, գէպի սիրոյ աշխարհը, սիրոյ. որը կրծում է իմ սիրտը և որն է իմ երջանկութիւնը:

**ՖԱԹՄԱՆ.** (Վզովի փարվելով). Արմէն, սիրելիս, այս սլանանք գէպի սիրոյ աշխարհը, գէպի այդ երջանկութեան վայրը, բայց որը և շրջապատված է ծանր փշերով, որին բաղխում են արեան ալիքներ. որտեղ հնչում է թշվառ մարդկանց լացն ու կականը: Արմէն, սիրենք իրար, բայց և այնպէս սիրենք և թշվառը, սիրվենք ընկածին: ամօքենք կարօտին:

**ԱՐՄԵՆ.** (Քզիկելով) Ֆաթման, այս սիրենք, և սիրենք անխափիր, թիւրը թէ հայ, ըիւրդ թէ գրուց: (Լովում է ոտների եւ խօսակցութեան ձայներ):

**ՖԱԹՄԱՆ.** (Ալլայրված). Փախիր Արմէն, գալիս են, ազատիր կեանք:

**ԱՐՄԷՆ.** (Փաթմանին մեղմ զգվելով): Հեռացիր դու, ով իմ հրեշտակ, ով իմ նազանի կոյս: (Համբաւելով): **Ստացիր համբոյրս,** ով գիտէ մէկ էլ որտեղ և ե՞րբ:

**ՖԱԹ.** (Փարվելով եւ համբաւելով) **Մընաս բարեան Արմէն, միայն զգուշ, պաղատում եմ, հեռացիր:** (Փաթման հեռանում է եւ անյայտանում ծառերի շարքում: Արմենը նոյնպէս ուզում է հեռանալ եւ բայիրը ուզում է դեպի հակառակ կողմը):

### Տ Ե Ս Ի Լ Թ

**ԱՐՄԷՆ, ՄՈՒՍԱ, ԲԷԿ ԵՒ ՍԵԽՊԵ**

(Արմենը տեսնելով Մուսային ու Սէխպէին, պահփում է մի ծառի յետիում: Մուսա բեկը զինքած, հրացանը ձեռին, իսկ Սէխպէն նրա յետից զգուշութեամբ յառաջանում են):

**ՄՈՒՍԱ.** Պահապանը մինչեւ անգամ չի երեսում: Բայց ուր է քո ասած թռչնիկը, Սէխպէ, չը լինի թուաւ:

**ՍԵԽՊԵ.** Տէր, երեկեանից ես հետեւում էի նրան և քիչ առաջ էլ տեսայ նա յառաջանում էր գէպի այս կողմը, ես վազեցի ձեզ մօտ իմաց տալու, որ թռչնիկը թակարդումն է, բայց թէ ուր գնաց, այդ չեմ կարող ասել: Միայն տէր, զգուշ, դա ֆէղացի Արմէնն է:

**ՄՈՒՍԱ.** (Հոնուալսվ): Ֆէղայի Արմէն, հա, հա, հա... իսկ ես ով եմ, ճանաչում ես ինձ, ես Մուսան են: (Ցոյց տալով սաւը): Տեսնում ես այս օրհնեալ գործիքը, կ'պառկեցնէ այդպիսի հարիւրաւոր զարշկի ֆէղայի Արմէններ: Դու այն ասա, Սէխպէ, քեզ ինչը ստիպեց մատնելու քո արիւնակցին:

**ՍԵԽՊԵ.** Եփենզըմ, ես սուլթանի հաւատարիմ ստրուկն եմ, իսկ քո հպատակ ծառան, ի յարկէ, իմ վսեմափայլ տէրը չի մոռանայ իր ծառային և ես կը ստանամ իմ ընծան: Տէր, թողնենք այդ, այժմ մտածենք թնչպէս անել, որ այդ լեռնցին ծուղակը ընկնի:

**ՄՈՒՍԱ.** Փախել է քո լեռնցին, ինչ են դրանք վախկոս, սննքոր, ստոր արարածներ, երեխ միայն ոտներիս ձայնը նորալեղին ցամաքացրեց և քո քաջը գէպի իր լեռները համբարձաւ:

**ՍԵԽՊԵ.** Ո՞ր քաջի համար ես պատմում, Արմէնի, է, տէր իմ, ձեր գէմ ինչ է նա: Եւ գիտէք, հէնց այդ լըրութիւնն է ինձ տանջում, թէ հայը ինչ, զէնքը ինչ, ախր մենք ձեր ոտքի փոշին ենք, ձեր ստրուկը ձեր ծառան, մենք որդունք ենք ձեր վսեմութեան գէմ, մենք...

**ԱՐՄԷՆ.** (Մասի յետից դուրս բաշելով)

և Սեխապէի գլխին ձեռով հարւածելով, որի ժէսը բնինում է զետին): Լոիր անզզամ, աշմօթ, ամօթ քեզ, ստոր արարած: (Դառնաւով Մուսային, որը հրացանն է պատրաստով): Իսկ մենք, քաջ ասպետ, հրացանները մի կողմը գնենք, կովենք քաջի զէնքով: (Սույր հանելով): Ես պատրաստ եմ:

**ՄՈՒՍԱ.** (Կատաղած հրացանը մի կողմը շպրտելով եւ սույր բաժեկով): Լու, գոռող չայ, յանուն Սուլթանի շուտով կը ճաշակեմ սրի թափը: (Յարձակվում է Արմենի վրայ):

**ԱՐՄԷՆ.** (Նոյնպէս յարձակվելով Մուսայի վեալ): Կը պաշտպանվիմ ես յանուն թըշշառի... (Մի երկու վայրեկան է տեսում մենամարտը, որի ընթացքում Սեխապէն զետնից իր ժեսը վերցնելով փախչում է):

**ՄՈՒՍԱ.** Թոջ ես, հայ, քաջ և կամակոր, ԱՐՄԷՆ. (Սույր խրելով բեկի կուրծքը): Մեսիր, բէկ, ընդունիր հարվածը:

**ՄՈՒՍԱ.** (Տարութերվելով). թեւր բուլացած փոփում է զետին): Հայ, հզօր է քո բազուկը, բայց մերոնք կը լուծեն վրէժը:

Արմէն (Սույր տեղը գնելով): Մեղառոր չեմ, որ ապանում, մորթում եմ, մեղառոր չեմ քո արեան զէմ, այդ գուք էք ստիպում, զուք մղում զէսի ոճիրը:

**ՄՈՒՍԱ.** (Հօգեկարէ): Ես մեռնում եմ...

Մուսայի ոգին... վրէժ կը պահանջէ... ձեր լեռներում արեան ծով... կը կազմվի...

**ԱՐՄԷՆ.** (Բոնելով Մուսային եւ իիչ վեր բարձրացնելով): Հանգստացիր, Մուսա բէկ, վէրքդ այնքան էլ վտանգաւոր չէ:

**ՄՈՒՍԱ.** Թող ինձ... թող... ինչ... պիտ մեռնեմ հայի... ֆէդայի Արմէնի... ձեռքերի վրայի... նչ, նչ... թռալ...

**ԱՐՄԷՆ.** (Թողնելով): Թող լինի քո կամքը, ահա հեռանում եմ, միայն շատ ցավում եմ, որ պատճառ եղայ քո մահվան (Հեռանում է):

## Տ Ե Մ Ի Լ Ժ

**ՄՈՒՍԱ, ՄԻԱՅՆԱԿ**

**ՄՈՒՍԱ.** (Վերից տանջվելով հոգեկարէ): Հեռանում ես... որովհետեւ քիչ յետոյ... պատասխան պէտք է տաս... Օ՛, միթէ... Մուսան... այն հզօր բէկը... այսպէս անօգնական պիտ մեռնիր... (Լսվում է իրարացնում եւ ձայներ): Եկան... բայց ուշ է... Մուսան մեռնում է... մեռնում դեռ ջահել ջիւան... (Մեռնում է):

## Տ Ե Ս Ի Լ Ժ Ա

### ՄՈՒՍԱ, ՍԷԽՊԵ ԵՒ ԶԻՆՈՐՆԵՐ

**ՍէԽՊԵ.** (Զինորների հետ զահերով ներս վազելով): Զերդ գսեմութիւն, բէկ, միք վը-հատփի, եկանք: (Տեսնելով դիակը ուղապատում են եւ օվարած նայում. Սէխպէն շնօւմ է դիակի առաջ եւ ձեռներով ուսափում է սիրը): Զերդ գսեմութիւն, բէկ, բէկ, լսիր ծառայիդ: (Թօղնելով դիակը եւ դառնալով զինորներին): Արդէն ուշ է, մեռել է, վազեցէք փախստականի յետելց, պէտք է ձայն տալ փաշային, այստեղ հայերի կողմից դավագրութիւն կայ, այդ հո գիտեմ և կարող եմ պարզել: (Զինորների մի մասը այս ու այն կողմից վազելով դուրս են գնում, իսկ Սէխպէն տապ տապ բայլերով դիմում է դեպի փառայի տունը մի երկու զինոր դիակի մօս են):

Փառագոյրը իշնում է:

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ 11

(Ցեսարանը ներկայացնում է արևելիան ճաշակով կահաւորփած մի շքեղ սենեակ. դէմ ու զէմ թիւքական բազմցներ, ծածկված թանկագին գորգերով. իսկ պատերի առաջ գրված փափուկ բարձեր: Երկու կողմը պահարաններ, որտեղ գրված են սուրճի պարտաներ և կայլաններ: Ըռաստաղից կախված է չահեր, պատերից հայելիններ):

## Տ Ե Ս Ի Լ Ը

### ՍէԽՊԵ, ՄԻԱՅՆԱԿ

**ՍէԽՊԵ.** (Կանգնած բեմի տուազ): Վերջապէս իմ թշնամիները իմ ձեռումն են, որովհետև իրահիմ փաշային որ կողմը ուղինամ, այն կողմը կը դարձնեմ: Ես նպատակիս հասայ, Ադանայի բոլոր հայերը սըրանից յիշոյ կը գողան ինձանից: Սէխպէն այսուհետև հզօր է, մեծ է, իշխան է, ամենայն ինչ է: (Ապիր): Ինձ կոչում են կեղտոտ, կարելի է էգուց կոչեն շուն, թողառն, գրանից բնչ. չէ՞ որ փաշայի մօս յարգանքս կավելանայ և ով գիտէ, այսօրփայ կեղտոտ կամ շուն Սէխպէն, էգուց կարող է դառնալ Սէխպէ փաշայ... Թող մերայնոնք ինձ ատեն, ես իմ գործը գիտեմ, իմ ոտների տակ կը տրորեմ այն ամենին, որոնք ինձ խեթ կը նայեն: Հոգիդ արքայութիւն

գնայ, Մուսա բէկ, քո մեռնելուց ես մեծաւ  
մեծ օգուտներ կարող եմ ստանալ, վաղուց  
ուզում էի թէ հակառակորդներիս ճպմել,  
թէ նրանց ոսկիները իբրև փրկանք գըր-  
պանս ամբարել ե թէ կառավարութիւնից  
պատիւներ վաստակել, վերջապէս ֆէտայի  
Արմէնի սուրը և ըո արիւնը այդ բանին  
արժանացրին: Իսկ թէ տուժողը անմեղ է,  
արդար է, մեղսակից է, այդ իմ գործը չէ,  
նպատակիս հասնելու համար էը զոհեմ ա-  
մեն ինչ, մինչև անգամ եթէ պահանջելու  
լինեն կոյս աղջիկու ու կինս, նրանց էլ կը  
ծախեմ:

### Տ Ե Ս Ի Լ Բ

#### ԻԲՐԱՀԻՄ, ՔԱԹԻՊ ԵՒ ՍԷԽՊԵ

(Ներս են մտնում Իրանիմ փառան եւ Քարիար. Սէխ-  
պէն երաց տեսնելով, երկրպածութեամբ բարեւում է  
մինչեւ գետին, ձեռք տանում կրծին. բերին եւ նա-  
կատին. Իրանիմը ձեռք նակատին տանելով պատա-  
խանում է բարեւին, նոյն կերպ եւ Քարիար. Իրանի-  
մը նսում է մի բազմացին, բիկն է տափս բարձերին.  
Քարիար նսում է միւս բազմոցին, սեղանի առաջ,  
որի վերայ դրած են բանահան, գրիշ եւ բափած  
են ըդրեւ: Սէխպէն Իրանիմի նսելուց յետյ երկիւ-  
դածութեամբ մօտենում է նեան, բղանցիներ նումաշ-  
երին, նակատին եւ նորից վերադառնում իր տեղը):

ԻԲՐԱՀԻՄ. Սէխպէ եղբայր, իմ սիրելի  
թիկնապահ Մուսա բէկը ընկաւ ֆէտայի

Արմէնի սրից, ի հարկէ մանրամասութիւն-  
ները գիտես, աւելնորդ է պատմել. բայց  
ինձ համար հետաքրքիր է, թէ ի՞նչպէս  
պատահեց այդ բոլորը:

ՍէխՊէ. Զերդ վսեմափայլութիւն, դուք  
լսել էք, բայց էութիւնը չը գիտէք. Մու-  
սային սպանողը ֆէտայի Արմէնը չէր, այլ  
ուրիշները:

ԻԲՐԱՀԻՄ. Ի՞նչպէս ուրիշները, միթէ  
շատերն էին մասնակից այդ ոճիրին:

ՍէխՊէ. Այն, շատերը և ես այդ ոճիրի  
բուն պատճառ եղողներին կարող եմ ցոյց  
տալ:

ԻԲՐԱՀԻՄ. Բայց զինւորները պատմե-  
ցին, որ երեկ գիշեր երր դու նրանց տա-  
րել ես Մուսային օգնելու, ասել ես, որ  
Մուսա բէկը և Արմէնը սրերով մենամար-  
տում են:

ՍէխՊէ. Այն, շատ ճիշտ է, սպանողը ֆէ-  
տայի Արմէնն էր, բայց դրզողը ուրիշները,  
ֆէտայի Արմէնը գործիք էր ուրիշների ձե-  
ռում, ուրիշները նրան կաշառել էին, որ-  
պէս զի սպանէր Մուսա բէկին:

ԻԲՐԱՀԻՄ. Ես չիմ հասկանում, թէ ու-  
րիշները ինչ հաշիւներ ունեն Մուսայի հետ:

ՍէխՊէ. Փաշայ, հաշիւները շատ պարզ  
է, այժմ բոլոր հայերը թշնամի են մուս-  
լումաններին և նրանք ամեն կերպ աշխա-

տում են մի կերպ վնասել նրանց, նամանաւանդ փաշաներին ու բէկերին. իսկ Մուսան լինելով հզօր, քաջ, հարուստ, գառել էր հայերի աչքի փուշը, նամանաւանդ մի քանիսի, որոնց մասին կը պատմեմ, եթէ ձերդ վսեմութիւնը թոյլ կը տայ:

ԻԲՐԱՀԻՄ. Պատմիր, լսում եմ:

ՍէԽՊէ. Երեկ զիշեր, երբ գեռ նոր էր մթնել և ես խանութիւն կողպել նոր էի տուն գնացել, մէկ էլ Գրիգոր աղայի ծառան ինձ հրավիրեց իրենց տունը, թէ աղաս խընդրում է:

ԻԲՐԱՀԻՄ. Գրիգոր աղան, իմ ամենամօտիկ բարեկամը, չեմ կարող հաւատալ:

ՍէԽՊէ. Ձերդ վսեմութիւն, թոյլ տվէք պատմեմ:

ԻԲՐԱՀԻՄ. Լաւ, պատմիր:

ՍէԽՊէ. Ես այդ հրավիրից յետոյ իսկոյն գնացի Գրիգոր աղայի տունը և ինչ տեսնեմ, այնտեղ էր Խաչիկ Տունեանը, մի քանի ուրիշ համբաներ և ովք զարմանք, նրանց մէջ ևս ֆէղայի Արմէնը:

ԻԲՐԱՀԻՄ. Միթէ:

ՔԱԹԻՊ. Անհաւատալի բան:

ՍէԽՊէ. Վկաներ ունիմ, այնտեղ էր քօն Ալօն և շատ ուրիշները, եթէ կամենաք, կարող էք նրանց հարցնել:

ԻԲՐԱՀԻՄ. Լաւ, պատմիր:

ՍէԽՊէ. Ինչ երկարացնեմ, հարց ու բարկից յետոյ Գրիգոր աղան և Խաչիկ էֆենդին սկսեցին մի երկար բարող, որը ուղիղ ասեմ չը հասկացայ, ինչ ոլ տարօրինակ բաներ էին խօսում, միայն այսքանը հասկացայ, որ Գրիգոր աղան բարձր ասաց. «Եղրարք, գիտեցած եղէք, որ մեր ամենասոխերիմ թշնամին Մուսա բէկն է, նրան պէտք է մէջ տեղից վերցնել և այդ բանը կարող է անել մեր սիրելի հիւր Արմէն էֆենդին»: Այդ խօսքերից յետոյ բոլոր ժողովականնրը աղաղակեցին «Կեցցէ՛ Արմէնը, կեցցէ՛ Արմէնը»: Իսկ ես ու քօն Ալօն շվարած չը գիտէինք թէ ինչ անհնք, ոչինչ չէինք կարող ասել, որովհետև վախենում էինք թէ սպանեն: Վերջապէս ժողովականները ցրվեցին, ես ականջս կախել էի իմանալու համար թէ որտեղ կամ ինչպէս պիտի այդ ոճիրը գործէ ֆէղայի Արմէնը: Գրիգոր աղան, Խաչիկ էֆենդին և ֆէղայի Արմէնը բշխում էին, վերջապէս ականջիս դիպաւ, որ Արմէնը Մուսային պէտք է սպանէ փաշայի պարտէզի մօտերքը, երբ նա իր սովորութեան համեմատ գիշերային շրջադայութեան է գալիս: Այդ որ լսեցի, իսկոյն վագեցի Մուսային զգուշացնելու, բայց նա փոխանակ զգուշանալու, կատաղեց, հրացանը խլեց, զէնքերը կապեց,

Քայլերը ուղղեց դէպի ձերդ վսեմութեան  
պարտէզը. ևս դողողալով հետեւմ էի նը-  
րան, որովհեակ Մուսան ինձ չէր թողնում,  
ասարկելով թէ զինուրներ հարկաւոր չէ,  
ևս միայնակ կարող եմ նրա հոգոցը կար-  
գալ: Պարտէզում պատահեցին իրար, կովի  
բռնվեցին, ևս նրանց թողնելով վազեցի  
զօրանոցը օգնութիւն կանչելու, մինչև վե-  
րապահնալս Մուսան մեռած ընկած էր, իսկ  
Արմէնը չփացած. ահա բոլոր պատմութիւնը,  
վսեմափայլ տէր:

ԻԲՐԱՀԻՄ. (Կատաղած): Եւ այդպէս, իմ  
հպատակ հայերը իմ դէմ դավեր են սար-  
քում. լաւ. կը տեսնենք, իսկ դու այդ բո-  
լորը հաստատելու համար վկաներ ունիս:

ՍէկնՊէ. Ուսիմ, կամենաք կանչեմ:

ԻԲՐԱՀԻՄ. Քաթիպ էֆենդի. գրիր հրա-  
ման, որ նախ և առաջ կալանաւորիլ Գրի-  
գոր աղային, Խաչիկ էֆենդի Տունեանին և  
հրամայել զօրապետներին. որ պատրաս-  
տութիւն տեսնեն արշավելու Զէյթունի  
լեռները: Պէտք է պատժել այդ լեռնցինե-  
րին, որովհեակ եթէ այդ յանկուզն Փէդա-  
յին այսօր քաղաքացիների հետ համախոհ  
սպանեց Մուսա թէկին. ով գիտէ էգուց  
ինչեր կարող է անել իր լեռնցիներով. քա-  
նի գեռ նոր է ծնում անիրավութիւնը, դա-  
վաճանութիւնը պէտք է խեղդել իր բնում:

Առ այժմ այսքան. վկաներին հարցնելուց  
յետոյ, ևս գիտեմ թէ ինչպէս կը վարգեմ  
ապստամբների հետ: (Քարիպը սկսում է  
գրել): Իսկ դու, Սէխապէ, կանչիր վկաներիկ  
և երբ հաստատվեց ասածներդ, այն ժա-  
մանակ աչքի առաջ կունենամ քո անձնա-  
նվէր և հաւասարիմ ծառայութիւնը:

ՍէկնՊէ. (Երկիրածութեամբ զլուխը խո-  
նարիելով): Մտրուկ եմ ձեր մեծութեան,  
հրամայիր, ևս պատրաստ եմ կատարելու:  
(Գլուխ տալով նեռանում է):

### Տ Ե Ս Ի Լ Պ

#### ԻԲՐԱՀԻՄ ԵՒ ՔԱԹԻՊ

ՔԱԹԻՊ. (Թուղթն ու գրիչը ձեռին մօ-  
տենալով Իբրահիմին): Զէրդ մեծութիւն,  
վերջացրի, կը հրամայէք կարգալ:

ԻԲՐԱՀԻՄ (Մուալլ): Կարգա:

ՔԱԹԻՊ. (Կարգալով): «Հրամայում եմ  
կատիր և իրօ հազարապետներին պատ-  
րաստել զօրքը, մի շաբաթից դէպի Զէյթու-  
նի լեռները արշավելու համար: Նոյնպէս  
հրամայում եմ Ալի հարիւրապետին անմի-  
ջապէս կալանաւորել Գրիգոր աղային և Խա-  
չիկ էֆենդի Տունեանին, իսկ ամբողջ ոս-  
տիկանութիւնը պատրաստ լինի նոր կար-  
գագրութիւնների համար»:

ԻԲՐԱՀԻՄ. Լաւ է: (Առնելով բռւղբը ու  
գրիչը, ստորագրում է): Այժմ տուր մէկին,  
որպէսզի շուտով հասնի ըստ պատկանելուն  
ՔԱԹԻՊ. (Գլուխ տալով): Շատ բարի:  
(Դուքս է զնում):

### Տ Ե Ս Ի Լ Ե

#### ԻԲՐԱՀԻՄ, ՄԻԱՅՆԱԿ

ԻԲՐԱՀԻՄ. Գրիգոր աղան, Խաչիկ էֆեն-  
դին և այդպիսի բաներ. Ուր Փէզայի Ար-  
մէն, ուր նրանք, ուր արիւնարբու աւազա-  
կը և ուր հանգիստ, պարկեշտ իմ քաղա-  
քացիները: Ես զարմանում եմ, չեմ հաւա-  
տում, բայց Բնչ կարող եմ ասել, քանի որ  
բացի Սէլսպէից և կան ուրիշներ, իսկ եթք  
մի քանի մարդ վկայում են, չի կարելի չը  
հաւատալ մանաւանդ որ Արմէնը միայնակ  
չէր վստահիլ գալ մինչի իմ պարտէզը և  
եթէ զրդողներ չը լինէին. ախր ինչու  
պէտք է գայ մինչի իմ դուռը. այստեղ մի  
դավագրութիւն կայ, օր առաջ պէտք է  
խեղդել, օր առաջ ոչնչացնել, թէ չէ կարող  
է վատ հետեանքներ ունենալ: (Կատաղած):  
Իսկ դու, Փէզայի շուն, փախիր քանի ազատ  
ես, ապավինիր քո լեռներում, մի քանի օ-  
րից այնտեղ պիտի հոսեցնեմ արեան գե-  
տեր, գետեր, որի մէջ և զու պիտի խեղ-

դըվիս, Ա՛լս, Մուսա բէկ, ջանել, ջիւան հա-  
սակում ընկար վատի սրից, ես կը լուծեմ  
վրէժը, սարսափելի վրէժ, որը շատ դարեր  
կը լացացնէ թշնամու մայրել:

### Տ Ե Ս Ի Լ Ե

#### ԻԲՐԱՀԻՄ ԵՒ ԽԱՓՇԻԿ

(Ներս է բերում Խափէիկ ծոռան կայլան, սուրճ եւ  
զնում է երահիմի առաջը. Երահիմը սկսում է ա-  
գան, ազան ծել կայլանի ծուխը ու խմել սուրճը):

ԽԱՓՇԻԿ. (Բարեւ բռնած): Զերդ վսե-  
մափայլութիւն, Սէլսպէն և մի ուրիշը ցան-  
կանում են ներկայանալ:

ԻԲՐԱՀԻՄ. Թոյլ տուր: (Խափէիկը հե-  
ռանում է),

### Տ Ե Ս Ի Լ Ե

#### ԻԲՐԱՀԻՄ, ՍԷԼՍՊԵ ԵՒ ԱԼԾ

(Ներս են մտնում Սէլսպէն եւ Ալօն. Սէլսպէն կանգնում  
է դռան մօս բարեւ բռնած, իսկ Ալօն երկիրդածու-  
թեամբ կոանում է մինչի գետին, ձեռք խփում յատ-  
կին, կրծին, բերանին, նակատին, իսկ յեսոյ մօտենա-  
լով համբուռում է երահիմի բդանցները եւ բարեւ  
բռնած կանգնում):

ԻԲՐԱՀԻՄ. (Ծուխիք բուլաներ գուրս բող-  
ելով): Ասա, Ալօ, Բնչ գիտես:

ԱԼԾ. Ինչու մասին է հարցնում իմ տէրը:

ԻԲՐԱՀԻՄ. Այն ժողովի մասին, որտեղ վճռվից Մուսային սպանիլ:

ԱԼՕ. Չերդ վսեմափայլութիւն, երեկ իրիկուն տանը հանգիստ նստած էի, մէկ էլ եկաւ Գրիգոր աղայի ծառան և ինձ ասաց, թէ տէրս ինդրում է: Ես իսկոյն զնացի Գրիգոր աղայենց և ինչ տեսնեմ, բացի մեր հարկաններից այստեղ էր և Փէդայի Արմէնը:

ԻԲՐԱՀԻՄ. (Կատաղած): Ա՛խ երախտամոռ շներ:

ՍէԽՊէ. {Գլուխը Տըմպտրմպացնելով}: Այն, այն:

ԱԼՕ. Ես շփոթված ուզեցի հեռանալ, բայց իմ ազնիւ բարեկամ և ձեր խոնարհ ծառայ Սէխպէ էֆենդին, (Սէխպէն օւրծվում է եւ ժպտում) փեշից քաշեց և ականջից ասաց. «կաց բարեկամ, կաց տեսնենք ինչեր են անելու»: Մի քիչ յետոյ Տէրտէրը հանեց խաչ և աւետարանը և առաջարկեց երդվել որպէսզի ժողովի գաղտնիքը դուրս չասենք:

ԻԲՐԱՀԻՄ. (Կտրելով): Եւ քահանան խնչով, աւետարանով: (Գլուխը բափահարում է):

ՍէԽՊէ. Այո, մոռացայ ասելու ձերդ վըսեմութեանը:

ԱԼՕ. Մենք երդվեցինք, մի քիչ յետոյ

սկսեցին իրենց ճառերը Գրիգոր աղան և Խաչիկ էֆենդին, վերջը երկար ճառերից յետոյ ժողովը կայացրեց վճիռ, որ սպանեն Մուսա բէկին և այդ բանը յայտնեցին Փէդայի Արմէնին: Մենք ցրվեցինք, իսկ թէ յետոյ ինչ է պատահել, այդ ըը գիտեմ:

ԻԲՐԱՀԻՄ. (Կատաղած): Լաւ, շատ լաւ: Ալօ, ինչ որ պատմեցիր, բոլորը Քաթիպին գրել կը տամ և զու պարտական ես ստորագրելու, իսկ այժմ ազատ ես:

ԱԼՕ. Պատրաստ եմ, իմ տէրը ինչ որ հրամայէ կը կատարեմ:

ՍէԽՊէ. Չերդ վսեմափայլութիւն, եթէ կը ցանկաք կարող եմ և ուրիշ վկաներ բերել:

ԻԲՐԱՀԻՄ. (Մոալլ): Ո՛չ, բաւական է. Ալօ, չեմ մոռանայ քո ծառայութիւնը, այժմ ազատ ես. իսկ զու, Սէխպէ, կաց այստեղ: (Ալօն գլուխ տալով գնում է):

Տ Ե Ս Ի Լ Ի

ԻԲՐԱՀԻՄ ԵՒ ՍէԽՊէ

ԻԲՐԱՀԻՄ. Սէխպէ, հայերի մոլորութիւնը վաղուց է, թէ միայն այժմս են սկսել նրանք ոչ մի բանով մինչև այժմս ցոյց չեն տվել իրենց ըմբոստութիւնը, այժմս էլ եթէ քո մերկացումները չը լինէին, մի այն-

պիսի նշանաւոր փաստ չը կար նրանց մեղադրելու:

**ՍէլլՊէ.** Տէր, իսկապէս շատ վաղուց է, միթէ այս վերջին տարիների անցքերը ձեր մէջ մի փոքր կասկած էլ չէր ծնեցնում. միթէ կոշտ Զէյթունցիների յամառ կոիւները արգասիք չէին հէնց Ադանայի հայերի գրդան. Ո՞վքեր էին Զէյթունցիներին տեղեկութիւն տփողները Օսմանցի զինւորների շարժման, քանակութեան, որականութեան մասին. որքեր էին Զէյթունցիներին զէնք, պաշար մատակարարողները. այդ բոլորը այստեղի հայերն էին Գրիգոր աղայի և Խաչիկ էֆենդու զեկավարութեամբ:

**ԻԲՐԱՀԻՄ.** Էլ ինչու տեղեկութիւն չէիր տալիս:

**ՍէլլՊէ.** Զերդ վսիմափայլութիւն, վախինում էի, ևս անպաշտպան մէկն եմ, ինձ բոլորը թշնամի են, չէ որ Մուսա բէկին սպանող Փէզային ինձ աւելի շուտ կարող է մորթոտել իսկ իմ որդիքը մվ պէտք է պահէ: Հէնց այժմս էլ դողում եմ, մվ գիտէ, այսօր ևս իմ տիրոջ ծառայութիւն եմ մատուցանում, էգուց կարող է այս գլուխս չը լինել ուսերիս վերայ, էգուց կարելի է խեղճ Սէլլպէի լեշի վերայ հոհոան նրա թշնամիները:

**ԻԲՐԱՀԻՄ.** Ո՞վ կը համարձակվի, Իբ-

րահիմ վաշան է քո պաշտպանը: Արանից յետոյ քո ապահովութեան համար, թող քեզ հետեւին երկու ոստիկան: (Հանելով մի բանի ոսկի եւ տալով Սէլլպէին): Իսկ առ այժմ թող այս լինի քո վարձատրութիւնը, յետոյ կը տեսնենք:

**ՍէլլՊէ.** (Առելով խակը, ժպիթը երեսին մօտենում է երահիմին եւ բղանցքները համբուրում) Շնորհակալ եմ, տէր, շնորհակալ Սէլլպէն քո ստրուկն է: (Նորից կանգնում է իր տեղը):

### Տ Ե Ս Ի Լ Ը

ԻԲՐԱՀԻՄ, ՍէլլՊէ եւ ՔԱԹԻՊ

**ՔԱԹԻՊ.** (Ներս մօտելով): Տէր, բոլոր հրամաններդ կատարված է, իսկ ոստիկանութիւնը սպասում է նոր կարգադրութիւնների:

**ԻԲՐԱՀԻՄ.** Լաւ, այժմ պէտք է կալանաւորել միւսներին, Սէլլպէ եղբայր, այդ գործը քեզ եմ յանձնում, առ հետդ ոստիկաններ և բոլոր մեղաւորներին կալանաւորիր, գիմազրութեան դէպում քո տրամադրութեան տակ կը լինեն զօրքերը. իսկ երբ կատարեցիր քո պարտականութիւնը, անմիջապէս բոլոր կալանաւորներին բեր այստեղ, պէտք է շուտով դատով դրանց,

որպէսզի միւս շաբաթ էլ արշավենք դէպի  
Զէյթունի լեռները, բռնելու համար այն  
յանդուկն ֆէղայուն:

**ՍէլՊէ.** Շատ բարի, տէր, միայն մի հը-  
րամանագիր ձեր վսեմափայլութեան կող-  
մից, առանց այդ թղթի ով կը լսէ խեղճ  
Սէխտէին:

**ԻԲՐԱՀԻՄ.** Քաթիպ էֆենդի, գրիր հը-  
րամանը:

**ՔԱԹԻՊ.** (Գրելը): Շատ բարի:

**ՍէլՊէ** (Առանձին, դառն ժպտով): Ուրա-  
խացիր, Սէխտէ, մինչև այժմ խեղճ ու մոլոր  
էիր, իսկ այժմ...

**ԻԲՐԱՀԻՄ.** Սէխտէ, Զէյթունի արշաւան-  
քի համար ինձ պէտք են հայ լրտեսներ,  
կարժղ ես գտնել մեր հաւատարիթներից:

**ՍէլՊէ.** Զերդ վսեմափայլութեան, ին-  
ձանից հաւատարիմը չէր կարող գտնել, ես  
պատրաստ եմ այդ դժվարութիւնն էլ յանձն  
առնել:

**ԻԲՐԱՀԻՄ.** Իսկ դու ծանծթ ես Զէյթուն-  
ցիներին կամ Զէյթունին:

**ՍէլՊէ.** Ենչպէս չէ, ես ծանօթ եմ այն-  
աեղի ամեն մի քարին, հինգ երկար ու ձիգ  
տարիներ ոտքիս տակն եմ տվել այդ լեռ-  
ները:

**ԻԲՐԱՀԻՄ.** Ի՞նչպէս, առետուրով էիր  
պարապում:

**ՍէլՊէ.** Այս, համարես թէ այն ժա-  
մանակ հոգեոր առետուր էր իմ գործը:  
Սրանից մի քանի տարիներ առաջ սարսա-  
փելի խեղճութեան մէջ էի. մի գեղեցիկ օր  
մօտեցաւ ինձ մի ֆռանգ վարդապետ և  
սկսեց քարոզել, ես թէի ոչինչ չէր հասկա-  
նում, բայց լսում էի, որովհետեւ վնաս չու-  
նէի: Ես նկատեցի, որ վարդապետիս մօտ  
գեղին ոսկիներ շատ կայ. մտերմացայ և  
նրա բոլոր քարոզները ընդունելով դարձայ  
մոլեսանդ ֆռանգ, իսկ գեղին ոսկիին էլ  
գլորվում և լցվում էին գրպանս: Մի գեղե-  
ցիկ օր էլ վարդապետս ինձ առաջարկեց  
գնալ Զէյթունի լեռները և քարոզել  
իր լոյս հավատը, ես ի հարկէ ուրախու-  
թնամբ ընդունեցի, որովհետեւ ձանապար-  
հորդական պայուսակիս մէջ բացի աւետա-  
րանների, սազմոսների կապոցից, կար և  
մի կլորիկ պարկ սիրունիկ ոսկիներով: Դը-  
րանից յետոյ անգործ շրջում էի Զէյթու-  
նի լեռները, ֆռանգ վարդապետս իմ պա-  
հանջմամբ անընդհատ ուղարկում էր գրքե-  
րի կապոցներ և ոսկու պարկեր. գրքերը  
այսպէս թէ այնպէս ցըվում էի, իսկ ոսկի-  
ները գրպանս ամբարում: Բայց իմ բազ-  
դից երկար չը տեսց այդ երջանիկ օրերը,  
անցեալ տարի խառնակութիւնների ժամա-  
նակ սպանվելով իմ վարդապետը, կտրվեց

ոսկու աղբիւրը, ես էլ այլկո շահ չը տես-  
նելով քարոզութեան մէջ, վերադարձայ  
Աղանայ:

ԻԲՐԱՀԻՄ. Իմ ուզած մարդն ես, շատ  
լաւ է, եթէ Զէյթունի լիռներում պարտքդ  
ճանաչես, սրանից յետոյ քեզ համար կը  
քացվի ոսկու նոր աղբիւր:

ՔԱԹԻՊ. (Փուղը ներկայացնելով Իբրա-  
հիմին): Զերդ վսեմափայլութիւն, հրամա-  
նագիրը պատրաստ է, կը բարէհաճէք ստո-  
րագրելու:

ԻԲՐԱՀԻՄ. Կարդա, Էֆենդի:

ՔԱԹԻՊ. (Կարդալով): «Հրամայում եմ  
ոստիկանութեան, հետեւ Սէխապէ ազայի  
խորհրդներին և նրա ցուցմունքներով կա-  
լանաւորել մեղաւորներին: Իսկ երբ վերջա-  
ցրիք այդ ամենը, բոլոր կալանաւորներին  
բերել ատեան ինձ մօտ»:

ԻԲՐԱՀԻՄ. (Առելով քուղը իւ սօրտա-  
գրելով): Գեղեցիկ. (քուղը տալով Սէխապին):  
Առ հրամանը, աղատ ես, միայն շատ շու-  
տով, կալանաւորների հետ միասին վերա-  
դարձիր այստեղ:

Սէխապ. (Խոնարհ գլուխ տալով) Լսող և  
կատարող եմ ձերդ վսեմափայլութեան հը-  
րամանները: (Առանձին քուղը բարձրա-  
ցնելով, դիւային ծպտով), Այժմ ամբովշ Ա-  
ղանան իմ ստների տակն է և նրանց ամ-

բողջ հարստութիւնն ու կայքը իմ ձեռում:  
(ԴՅՈՒՄ է):

Շներս է մենում Խավօնիկ ծառան, հավաքե-  
լով կայլանը, սուրենի գավարները,  
դուրս է գնում),

### Տ Ե Ս Ի Լ Թ

#### ԻԲՐԱՀԻՄ ԵՒ ՔԱԹԻՊ

ԻԲՐԱՀԻՄ. (Յետ ու առաջ մանգալով):  
Էֆենդի, այս մարդը հաւատարիմ է երկում,  
այս գործը բանալով, մեծ ծառայութիւն  
արաւ մեզ:

ՔԱԹ. Նրա կատարած գործերից երկում  
է, որ կեղաստ մարդ է, մի քանի աարի  
առաջ քարոզիչ իսկ այժմ մատնիչ: Ինչ որ  
կասկածելի է:

ԻԲՐԱՀ. Ե՛, դրանք դատարկ բաներ են,  
խելօք և հավատարիմ մարդ է երկում:

ՔԱԹ. Այս խելօք, միայն անխիղճ. խե-  
լօք, որ այս գործը ստեղծելով կը շահվի,  
իսկ անխիղճ, որ անմեղ մարդիկ է դատա-  
պարտել տալիս:

ԻԲՐԱՀ. Անմեղ, ինչեր ես խօսում, է-  
ֆենդի, միթէ չը զիտես, որ ուրիշ վկաներ  
էլ կան:

ՔԱԹ. Զերդ վսեմափայլութիւն, եթէ  
կարող է կեղծել, զրպարտել Սէխապէն և կը

գտնվին Ալօներ, որպէսզի հաստատեն: Ի՞նչ  
արժէ կեղառու մարդու համար սուս վկա-  
յութիւնը, ոչինչ, իսկ երբ շահ տեսնվի,  
այն ժամանակ զարհուրելի կը լինի վկա-  
յութիւնը:

ԻԲՐԱՀ. Ո՞չ, ձեր կասկածները անհիմ,  
են, միք կարծէ թէ Սէխափէն ստում է, նրա  
ասածները ճշմարտութիւն է, միթէ աշ-  
խարհում կեանքից թանկագին մի բան  
կայ, չէ՞ որ Սէխափէն այդ քայլը անելով,  
ենթարկում է իր կեանքը վտանգի:

ՔԱԹ. Կարելի է, ես ոչինչ չունեմ,  
միայն կասկածելի է, քաղաքացիք մաս չու-  
նեն այդ սպանութեան մէջ, ոչ մի գավա-  
գրութիւն չը կայ, այդ բանը տեղի է ու-  
նեցել պատահմամբ:

ԻԲՐԱՀ. Ել ի՞նչ պատահմունք, չէ՞ որ  
ամբողջ պատմութիւնը մեզ յայտնի է, չէ՞  
որ գաղտնի ժողովի վճիռ է եղել այդ: Եւ  
այդ բանը շատ պարզ է, թէ չէ ի՞նչ գործ  
ունէր ֆէղայի Արմէնը իմ պարտէզում:

ՔԱԹ. Կարող է պատահել ես ոչինչ  
չունիմ, միայն ինդրում եմ անաչառ քննու-  
թիւն անէք և երեսն հանէք ճշմարտու-  
թիւնը: Զերդ վսեմափայլութիւն, պէտք է  
խղճար, պէտք է տեսնել այժմ, թէ ի՞նչպէտ  
ողբում են խեղճ կալանաւորների կանայք  
ու որդիքը:

ԻԲՐԱՀ. (Կրտն): Խղճալ... Ի՞նչեր ես ա-  
սում, էֆենդի: իսկ չե՞ս տեսել Մուսա բէկի  
մօր, քոյրերի, եղբայրների արտասունքը ու  
մղկոցը. ով է մեղաւոր, թող չ'անէին և  
այս պատիճը չը կրէին:

ՔԱԹ. Բայց արդիօք մեղմաւոր են:

ԻԲՐԱՀ. (Կատաղած): Վերջապէս, էֆեն-  
դի, չափու ճանաչիր, դա իմ գործն է, ես  
համոզված եմ, դա բաւոկան է, ոչ մի խօսք:

ՔԱԹ. (Երկիւլով): Ներիր, ձերդ վսեմա-  
փայլութիւն, ես ոչինչ չունեմ, ձեր կամքն  
է: (Փաղոցում լսվում է իրարանցում. ներս է  
մտնում Խափէիկը):

ԽԱՓՇԻԿ. Տէր, կալանաւորներին բերին:

ԻԲՐԱՀ. Ասա թող ներս բերեն: (Խափ-  
շիկը գնում է): Օ՛, դուք կը տեսնէք, թէ  
ի՞նչ կը նշանակէ զավագրութիւն, սպանու-  
թիւն. ձեր դատավճիռը ծանր կը լինի:  
Հէյ, Մուսա բէկ, ուր է, լինէիր կենդանի,  
քո ձեռով կարդայիր սրանց դատավճիռը:

### Տ Ե Ս Ի Լ Փ

ՆՈՅՆՔ, Սէխափէ, ԳՐԻԳՈՐ, ԽԱԶԻԿ, ՄԻ  
ԵՐԿՈՒ ԿԱԼԱՆԱԿԻՈՐՆԵՐ ԵՒ ԶԻՆԻՈՐՆԵՐ  
(Ներս են մտնում կալանաւորները ողբայա-  
կապ, որդապատված զինւորներով, սրանց  
յիշելից Սէխափէն):

ԻԲՐԱՀ. (ԿՐՔՈՒ): Ապերախտներ... այդ է ձեր հաւատարիմ հպատակութիւնը, մյու է ձեր շնորհքը: Ի՞նչպէս համարձակվեցաք ձեր ձեռները թաթախել խղճ Մուսա բէկի արհան մէջ, ի՞նչպէս համարձակվեցաք գործել այդ ոճիրը. միթէ կարծում էիք հեշտ է մարսել այդ բանը. Ասացէք, ապերախտներ, ասացէք, ի՞նչը դրդեց ձեզ անելու այդ ոճիրը.

ԿԱԼԱՆԱՀՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ. Ո՞վ փաշա, իմ տէր, մենք անմեղ ենք, մենք տեղեկութիւն չունենք այդ ոճիրից, դա զրպարտութիւն է, խղճա մեզ:

ԻԲՐԱՀ. (Դառն կրքով): Հա, հա, հա... զրպարտութիւն է... անմեղ ենք... ի հարկէ անմեղ էք, ես եմ սպանել Մուսային, գուք չէք, անմեղ գառներ էք... այդպէս էր առում և ֆէղայի Արմէնը, երբ նրան դրդում էիք սպանել խղճ բէկին:

ԿԱԼԱՆԱՀՈՐ. Ֆէղայի Արմէն և մենք, նոյն է թէ երկինք ու երկիր, մինչև անգամ չենք ճանաչում նրան և ի՞նչ ունէինք մեր սիրելի Մուսա բէկի դէմ. մենք անմեղ ենք, դա զրպարտութիւն է:

ԻԲՐԱՀ. (Կատաղած): Սէխպէ, (Սէխպէն առաջ և զալիս), ասա, պատմիր, ովքեր էին ֆէղայի Արմէնի դրդողները, ովքեր էին ու գորված քարոզները ասողները: Ասա, պատ-

միր այս լրբերին: Օ՛, ծանր է ձեր յանցանքը:

ՍէխՊէ. (Սառն, մատով ցոյց տալով): Ահա քարոզներ խօսողները, ահա և Արմէնին փառարանողները: (Դառնալով դէպի կալանաւորեները), Դուք էիք, անպիտաններ, դուք դրդեցիք Արմէնին, որ սպանէ բէկին:

ԿԱԼԱՆԱՀՈՐ. Պապանձվիր շուն, դողմ Աստուծոյ ահեղ դատաստանից, դողմ քոսուտ մատնութիւնների հետևանքից. մտածիր, ով դափանան, թէ ի՞նչ ես անում, հիմնայատակ քանդում ես քո հարևանների տուն ու տեղը. անմեղ զոհերի արիւնը և անէծքը քեզ կը հետևեն մինչի դժոխք, ով գազան:

ԻԲՐԱՀ. Լոյիր, զու աւազակ... (Դառնալով Սէխպէին): Պատմիր, խօսիր, ասա, այս քաջերին, որ նրանց արարքը շատ ծանր է, ասա...

ՍէխՊէ. Երդուում հմ պատւովս, իմ գերգաստանով, իմ Աստուծով, երկնքով, գետնով, ամենայն սրբութիւններով, որ սրանք դրդեցին սպանել Մուսա բէկին:

ԿԱԼԱՆԱՀՈՐ. Ո՞ւր է քո պատիւը, քոնամուսը... միթէ զու ճանաչում ես Աստված, միթէ զու ունես սրբութիւն. ոչ, ոչ, երդվիր զու դժոխային ոգիներով, երդվիր սպայելի գահով, գայսոնով, երդվիր քոնրբութիւններով և ոչ թէ սրբութիւններով...

ԻԲՐԱՀ. (Կուրելով): Տեսնում էք, որ արդարանալու ոչ մի միջոց չունէք. ոճիրը ակներեւ է. այժմ՝ կը տեսնէք թէ ինչ զարհուրելի վրէժ կը լուծեմ, քիչ յետոյ ձեր պիերը կը տարուբերվի սիւների վերսոյ, իսկ ձեր կանայք, որդիք իրենց վայնասունով կը կատարեն ձեր յուղարկաւորութիւնը դէպի կախաղանի սիւների տակ փորգած գերեզմանները... այնտեղ ժողով կազմեցէք և կանչեցէք հզօր ֆէղայուն, թող զայ, ազատէ ձեզ, թող փրկէ... միք վախինայ, այդ անզգամ աւազակն էլ շուտով կը հետեի ձեզ, միք քանի օրից Օսմանլուի բիւրաւոր սկինները կը փայլեն այդ սինքով աւազակների լիներում և վայ նոցա... կը մորթվի մինչև անզգամ զառամհալ ծերուկը և օրօրոցի ծձկեր մանուկը:

ԿԱԼԱՆԱՀԻՈՒ. Տէր, ողորմած փաշա...

ԻԲՐԱՀ. Լոիր, ոչ մի խօսք, սրանց հարկաւոր չէ մինչև անզգամ գատաստան, ոճիրը ակների է, միք ժամից բոլորը պէտք է կախված լինեն... Տարէք, դա է իմ կամքը:

### Տ Ե Ս Ի Լ ՓԸ

#### ՆՈՅՆՔ ԵՒ ՑԱԹՄԱՆ

(Երբ ուզում են կալանաւորներին տանել, նարման հերարձակ ներս և վազում, բոլոր

ւիարած, զարմացած նայում են նրան):

ՖԱԹ. Սպասեցէք... ուր էք տանում այս խեղճերին, արձակեցէք սրանց, սրանք մնմեղ են, կախեցէք ինձ, մեղաւորը ևս եմ:

ԻԲՐԱՀ. (Նփարված, զարմացած): Ի՞նչ եմ տեսնում, ի՞նչ եմ լսում... Ֆաթման, աղջկսի... ցնորվել ես... խեղճ:

ՖԱԹ. Ոչ, հայր իմ, ցնորվել չեմ, ներողութիւն համարձակութեանս, որ ես մուսլիման կին, առանց մի որևէ ծածկոցի համարձակվեցայ ձեր դէմ երնելու... Բայց իմ պարարը ինձ ստիպից այդ բայլը անելու, որովհետև ինձ մեղաւորիս փոխանակ, շատ մայրեր լային, շատ երեխաններ որբանային... ես եմ մեղաւորը, սրանք անմեղ են...

ՍԵԽՊԵ. (Առաջ զայով եւ մօտենալով ԻԲՐԱՀԻՄԻՆ): Տէր, Մուսա բէկի սպանվելը ազգել է զստերդ վերայ, աղջիկը ցնորված է, լաւ չէ որ թողնում էք խօսելու:

ԻԲՐԱՀ. Այո, տեսնում եմ, խեղճ ֆաթման:

ՖԱԹ. (Ցուզված Սէխպէին): Ի՞նչ ես փնթիվնթում հօրս, ով դժոխային ոգի, զուես այս բոլորը ստեղծողը, իմ հօր խաբողը և նրա ձեռները այս անմեղ մարդկանց արեան մէջ թաթախողը... Դու եղար պատճառ և Մուսա բէկի սպանման, որովհետեւ

գու դրզեցիր Մուսա բէկին, հետամուտ լինելու Արմէնին, Սիրելի հայր, յարգելիք բարեկամներ, երեկ գիշեր Արմէնը չէր եկել այստեղ ներկայ լինելու այն ժողովին, որը ստեղծել է այս գաղանը, այլ եկել էր մեր պարտէզը, ինձ եղկելուս տեսներն, ինձ սիրելու, սիրվելու, որովհետև ես սիրում էի ֆէղայի Արմէնին:

ԻԲՐԱՀ. (ԱՅԻՆԵՎՔԻՍ): Աղջիկս... Ֆաթման...

ՖԱԹ. Լսիր հայր, աղաչում եմ, լսիր... եւ երբ Արմէնը ինձ մօտ էր, (Ցոյց տալով Սէխպէին), Այս լսիրշ սրիկան իմանալով այդ կամ տեսնելով Արմէնին, իմաց տվեց իմ փեսացու Մուսա բէկին, որը և զինված շտապեց դէպի ֆէղայի Արմէնը. Նրանք պատահեցին իրար, ես փախայ, հեռվից լուրմ էի սրերի շաչունը և տեսայ փախչող Սէխպէին, իսկ մնացեալը դուք գիտէք...

ՍէԽՊԷ. (Բարձր): Խելագարվել է, խեղճ, ցնորվել է...

ԻԲՐԱՀ. (Մօրմոք): Այս, խելագարվել է... (Թաքնալով կալանաւորներին), Ամաչեցէք ձեր արածից, Մուսա բէկին, իմ աղջկայ փեսացվին սպանելու պատճառով, խելագարվեց և իմ դուստրը: (Կատաղած ցոյց տալով կալանաւորներին), կախել սրանց, խեղդել, մաս մաս անել. տարէք, այլհս չեմ

կարող նայել այս անպիտանների երեսին. իսկ ֆէղայի Արմէնին, այս ոճիրի բուն պատճառին մի շաբաթից կը տեսնենք իր լեռներում: (Դ.Ա.Նալով Քարիպին եւ ցոյց տալով ֆարմանին): Կանչիր աղախիններին, թող իր սինեակը տանեն այս խեղճին: (Զինուրները շարժիում են, պատրասլում են դուրս տանելու կալանաւորներին):

ՖԱԹ. (Աղաչական): Հայր, լսիր գըստերդ...

ԻԲՐԱՀ. (Ցաւալի): Ցնորվել ես, ինդ աղջիկ...

Վարագոյրը իշնօւմ է:



## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ III

(Տեսաբանը ներկայացնում է թիւրքական հարեմի մի փառահեղ սենատի, զարգարված հայելիներով, ջահերով, թափշեայ բարձերով, փառցներով և զորդերով։ Բեմի դիմաց երեսում է մի փոքրիկ զուս, կողքերին երկու պատուհանն, որոնք նայում են զէպի պարտէզ, իսկ աչ կողմը երեսում է զլխաւոր զուսը, որտեղից առհասարակ ներս և զուրս են զնում):

### Տ Ե Ս Ի Լ Ա

#### ՍէԽՊէ, ՄԻԱՅՆԱԿ

ՍէԽՊէ. (Կանգնած բեմի առաջ): Ո՞ՌՔԱՆ յիմար են մարդիկ, մի որև է Սէխպէ իր մատների վերայ է խաղացնում փաշային, նրա հարեմը և ամբողջ Աղանան։ Փաշայի ամենալաւ բարեկամը այժմ ես եմ, եթէ ուղենամ, մոխիր կը դարձնեմ ամբողջ նահանգը. բայց ի՞նչ օգուտ մոխիրի կոյտերից, ինձ պէտք է բարգավաճ, կենսատու երկիր. որ այնտեղից ծծեմ հիւթը. իսկ մի որև է ֆէղայի Արմէն, մի որև է զէվզէկ Քաթիպ և ուրիշ մի բանիսը, որոնք իմ հարթած ճանապարհիս վերայ տնկված են իրու փըշեր, կարելի է արորել, ջարդել։ Այժմ իմ միակ ցանկութիւնն է ոչնչացնել Զէյթունի լիուների առիւծին, որի մոնչոցը հեռվից ճանանում է ականջիս, որը ճանելիը սրած

յարմար բոպէի է սպասում ինձ կիշատելու։ Բայց ես իմ բանս գիտեմ, թէև չունեմ սուլք սուր ճանկեր և ահեղ մոնչոց, բայց ունեմ սառ սուռ ազդող ֆշուց և քստմնեցող զալարներ։ որոնցով կը խեզդեմ ամեն մի արգելը, ամեն մի բան, որը ինձ կը խանգարէ նպատակիս հասնելու։ (Կատաղի)։ Ա՛, Սէխպէն եմ, երեսանց հեզ, խոնարհ, վէհերոտ, բաղցրաբոյ, բարեացակամ, բայց բացէք սիրոս, տեսէք իմ հոգու աշխարհը, կը սարսիք, կը գողաք։ Սէխպէն եմ, իմ կրքերին յագուրդ տալու համար, կը զոհեմ ամեն ինչ, ամեն բան։ Կավերեմ գիւղեր, հբգէնի ճարակ կը տամ աներ, վանքեր, եկեղեցիներ։ մորթուտել կը տամ հաղարաւոր մարդիկ, մինչեւ անգամ անմիզ մանկիկը, որը իր մրայուն աչքերը զէպի լոյսը ուղղած փափլիկ ձեռներով խազ է անում իր օրօրոցում, խեղդել կը տամ իր արեան մէջ։ Սէխպէն եմ, ինձ համար չը կայ որբութիւն, դա մարդկային նախապաշարմունք է, ինձ համար չը կայ պատիւ, պատիւ փառքի և հարստութեան մէջ է. ինձ համար չը կայ խիղճ։ (Դիւալին ծիծաղով)։ Հա, հա, հա, խիղճ։ ողորմելի բառ, խղճուկ դարձվածք, ծիծաղելի խօսք, խիղճ, ափսոսանք, զութ, դաթող փնտրեն մայրերը և զէվզէկ Արմէները ու Քաթիպները, թող երկնքում անէծք

Կարգան երեկեան օրը կախված Գրիգոր աղաները, Խաչիկ էֆենդիները. թող ֆէգայի Արմէնները իրենց լեռներում մոքնչան. այդ անէծքները, այդ մոնչոցը ինձ գուրգուրող երաժշտութիւն է, նրանց որբացած որդկերանց մղկտոցը քաղցր մեղեղի, իսկ հրդեհված տների բոցն ու մուխը մի լուսոյ կոթող որը լուսաւորում է իմ ճանապարհը դէպի փառքը, հարսաւութիւնը, պատիւը, Սէխալէն եմ, ամենազօր եմ, մինչև անգամ փաշայի գուրգուրած իր սիրասուն աղջիկը, որը գեղեցիկներից գեղեցիկն է և խելօբներից խելօբը, իր հօր բերանավ խելագար հրատարակվեց և այժմ այս պալատում այդ գեղանի դիցուհու ամեն մի խօսքը համարվում է ապուշի ցնդաբանութիւն, խենթի բարբաջանք... (Լսում ե ոս ների ձայն): Եկան, Սէխալէ, հագիր դիմակդ, յիմարներին խարելու համար, պէտք է մտնել յիմար գրութեան մէջ:

### Տ Ե Ս Ի Լ Բ

#### ՂՈՒՏՈՒԹՅ ԵՒ ՍԷԽՊէ

ՍէխՊէ. (Տեսնելով ներս մտնող Պուտոաթին, ձեռքերը կրծքին, զլուխը խոնարհեցնելով մինչեւ գետին): Բարի լոյս, խանում մարի, երկի այս գիշեր լաւ անցկացրեց Ֆաթման խանումը:

ՂՈՒՏՈՒԹՅ. (Տխուր): Սէխալէ եղբայր, ես զարմանում եմ, խելագարութեան ոչ մի նշան, էլի այն Ֆաթմանն է, խօսում է հանգիստ, հանդարտ, բայց այնպիսի բաների մասին, որով իսկոյն երևում է, որ խառնված է:

Մէկ. Այս, առհասարակ այդպէս է, մի անգամ Պօլսում մի այդպիսի դէպք պատահեց: Ցայտնի տոնմերից տղայ և աղջիկ սիրահարված էին. մի գիշեր տղային զտան սպանված. նրա սիրուհին իմանալով այդ գոյժը, խեղճը խելագարվեց: Այդ օրից նա սկսեց խօսել իրը թէ տղային սպանողը իր վերայ սիրահարված լինելով, կատարել է այդ ոճիրը և միթէ ինքը այնքան անխիղճ կը լինի, որ չը յարդէ նրա այդ իղձը և չը գուրգուրէ այդ սէրը:

ՂՈՒՏ. Իմ Ֆաթմանը այդպիսի բան չունէր:

Մէկ. Դուք չը զիտէք, խանում. բայց այդ բանին վկայ են ձեր պարտէզի բարձրարերձ ուսենիները, սալարդախիտ նոճիները և հեղիկ լուսինը, երբ գեղանի Ֆաթման խանումը ու ողորմած հոգի Մուսաթէկը իրար սիրում էին, իրար գուրգուրում, իրար հետ մնջում, բայց մի չար ոգի, մի դժոխային գերիկ խանգարեց այդ երջանիկներին, իր սայրասուր սուսերը ցցեց

բէկի կուրծքը, խլեց նրանից նորաբողբոչ  
կեանքը, իսկ ֆաթման խանումից առողջ  
միտքը... Այս. այդ բոլորը ձեզանից ծա-  
ծուկ էր, բայց ձեր խոնարհ ծառան այդ  
գիտէր:

**ՂՈՒՏ.** (Տրուվելով): Ա՛, ուրեմն գրա  
համար է, որ խեղճ աղջիկս միշտ տալիս է  
այդ պիղծ ֆէկայու անունը և միշտ կըրկ-  
նում, թէ՝ «իր սէրն է պատճառը, որ ըս-  
պանվեց Մուսա բէկը, մեզաւոր չէին այն  
խեղճերը, որոնց երեկ կախեցին»:

ՍէԽ. Այս, խանում, առհասարակ այդ-  
պիսի խելազարները իրենց թշնամիներին  
բարեկամ են կարծում: (Խորհրդաւոր): Մէկ  
էլ որ, աղջկանդ խելազարութիւնը առաջ է  
եկել թալիսմանից: Այդ ֆէկային բացի  
բաջութիւնից և գիտէ հմայել, նա թալիս-  
մանով զբագիլ է ֆաթման խանումի սիրտը:

**ՂՈՒՏ.** իսկ գրա ճարը:

ՍէԽ. Դա հեշտ է, ես ճանաչում եմ մի  
մոլլա, «որը քանդում է ամեն մի թալիս-  
ման, մինչեւ անդամ գեերի, սատանաների  
գէմ է կովում»:

**ՂՈՒՏ.** (Աղաջական): Ողորմի հօրդ, Սէխ-  
պէ, ես միշտ քեզ որդի եմ համարել, ի սէր  
Աստուծոց, ի սէր քո որդկերանց, իբրև թէ  
ֆաթմանն էլ նրանցից մէկն է, շուտով  
գոտիր այդ մոլլային և բեր այստեղ:

ՍէԽ. Դա հեշտ է, խանում, բացի այդ  
մոլլայից ճանաչում եմ և ուրիշներին, այն-  
պիսին կայ, որ երկինք է կապում, օձերին  
թովչում, դազաններին հեզ գառնուկ դար-  
ձնում և այնպիսի բաներ, որ երեակայել  
անդամ չի կարելի:

**ՂՈՒՏ.** (Աղաջական): Սէխպէ եղբայր,  
Դուտոաթը մայրդ է և ինդրում է քեզա-  
նից, եթէ փող ես ուզում, ինչքան կամե-  
նաս, միայն շուտով գրանց այստեղ բեր:  
(Լացով): Խեղճ աղջիկս, գեղանի ֆաթման,  
իմ սիրասուն զաւակս խելազար. վոյ կու-  
րանայ մայրդ, ֆաթման, ինչ ձիւն էր գըլ-  
խիս եկաւ:

ՍէԽ. Միք տրորվի, մարի, եթէ իմ ասած  
մոլլան գայ, երեք չորս օրից ֆաթման  
կառողջանայ:

**ՂՈՒՏ.** Դէ շտապիր, որքան շուտ, այն-  
քան լաւ:

ՍէԽ. (Գնալով): Իսկոյն, իսկոյն, խա-  
նում մարի: (Պուրս և գնում):

## Տ Ե Ս Ի Հ Պ

**ՂՈՒՏԾԱՐԹ ՄԻԱՅՆԱԿ**

**ՂՈՒՏ.** (Տխուր լուզված): Է՛, որքան  
գժրախտ եմ, աչքիս լոյս ֆաթման, իմ  
գուրգուրած հրեշտակը խելազար, ցնորված-

Խեղճ աղջիկ, Մուսա բէկի սպանվելը, քո  
սիրած տղամարդու մահը քեզ մի այնպիսի  
ցափի բերեց, որ աւելի լաւ էր մեռնէիր,  
մեռնելը փառք էր, այն ժամանակ քո մայ-  
րը կը ողբար քո դիմ վերայ, կը կոծէր իր  
գլուխը, յաւետեան կուլար, բայց չէր լինի  
այսպիսի խայառոակ դրութեան մէջ. խեղճ  
աղջիկս, սիրելի ֆաթման, դու խելագար.  
(Լացկոն): Ո՛չ, ոչ, չեմ հավատում: Բայց  
Բնչպէս չը հավատամ, նա, իմ համեստ,  
հեղ աղջիկը եթէ խելագար չը լինէր, մի-  
թէ երեսրաց, հերարձակ կը վազէր այնքան  
մարդու մէջ և կասէր, թէ ես սիրում եմ  
Փէղայի Արմէնին, այդ պիղծ շանը, օ, Ար-  
մէն, թող Աստված անէ քո դատաստանը,  
թող դժոխըը իր բոլոր արհավիրքներով  
փլի քո գլխին, թող քո մայրն էլ լայ այն-  
պէս, ինչպէս այժմ ես, անիծվիս դու...  
(Հեկեկում է):

### Տ Ե Ս Ի Լ Գ

ԻԲՐԱՀԻՄ, ՔԱԹԻՊ ԵՒ ՂՈՒՏՈՒՄ

ԻԲՐԱՀ. (Ներս մտնելով Քարիպի հետ,  
տեսնելով Ղուտումը): Մի լար, Ղուտումթ,  
բաւական է, Աստված ողորմած է, եթէ  
նրան ապավինենք, կառողջանայ մեր սիրելի  
ֆաթմանը:

ՔԱԹԻՊ. Ոչինչ չկայ, խանում մարի, նա  
խելագար չէ, այնպէս, թեթև, մի խօսքով  
թեթև խանգարվել է:

ԻԲՐԱՀ. Ի՞նչ ես ասում, էֆենդի, եթէ խե-  
լագարված չը լինէր, միթէ կը համարձակ-  
վէր այդքան մարդկանց ներկայութեամբ,  
նամանավանդ իմ առաջ ասել, թէ սիրում  
է հայ Արմէնին, այդ Զէյթունցի շանը: Դա  
մինչև անգամ խելքի մօտ բան չէ, որտեղ  
Փէղային, մրտեղ իմ աղջիկը, մինչև անգամ  
չի ճանաչում նրան:

ՔԱԹ. (Երկիւղած ուսերը վեր հաւելալ):  
Կարող է պատահել:

ՂՈՒՏ. (Աշխերը սրբելով): Այդ բոլորը  
թալիսմանի հետևանքն է:

ԻԲՐԱՀ. Ի՞նչ թալիսման:

ՂՈՒՏ. Այդ շուն Փէղային հմայող է, նա  
թալիսման է արհել աղջկանս, Սէխալէն ա-  
սաւ, նա լաւ է ճանաչում նրան:

ԻԲՐԱՀ. (Մասը կծելով): Ա՞:

ՔԱԹ. Խանում մարի, տէր իմ, միք հաւա-  
տա այդ մարդուն, դա անկարելի է:

ԻԲՐԱՀ. (Կտրելով կրքոս): Էֆենդի, ինչու  
այդ մարդը քո աչքին փուշ է դառել. Բնչ  
է արել նա քեզ, չէ՞ որ հայերի կազմած  
գալադրութիւնը նա բացեց և ապացուցեց.  
մի այդպիսի մարդու չի կարելի կասկածել,  
նա ինձ հաւատարիմ է:

ՔԱՅԹ. Տէր իմ, կարող է պատահել, բայց  
և այնպէս...

ԻԲՐԱՀ. Ո՞չ, ոչ մի բայց, նա հաւա-  
տարիմ մարդ է:

ՂՈՒՏ. (Գառնալով Քարիպին); Եփենդի,  
թողնենք այդ բոլորը, այժմ մի միջոց, մի  
ճար աղջկանս համար: Սէխաղէն ասաց, որ  
մի յայտնի մոլլայ կայ և զնաց նրան բե-  
րելու:

ՔԱՅԹ. Է՛, դադարկ բաներ, ի՞նչ մոլլայ,  
ի՞նչ բան: Այսօր առավօտ մէկը եկաւ ինձ  
մօտ և յայտնեց, որ Ալէքսանդրէտից Ա-  
դանայ է եկել մի յայտնի եւրոպական  
բժիշկ:

ԻԲՐԱՀ. Իմ կործիքով բժիշկ բոլորովին  
աւելորդ է, թող մէկ Սէխաղէն մոլլաներին  
բերէ, եթէ նրանք չը օգնեցին, այն ժամա-  
նակ բժիշկ կանչենք:

ՂՈՒՏ. Ոչ, իմ տէր, թող բժիշկն էլ գայ,  
(Գառնալով Քարիպին); Եփենդի, ի սէր  
Աստուծոյ, բեր, թող տեսնէ, դրանից ի՞նչ  
վնաս:

ԻԲՐԱՀ. (Ուսեր վեր հաւելով): Ի՞նչ վե-  
նաս, թող բերէ:

ՔԱՅԹ. (Գնալով): Իսկոյն, կէս ժամից  
բժիշկը այստեղ կը լինի:

(Գնում է):

Տ Ե Ս Ի Լ Ե

ԻԲՐԱՀԻՄ ԵՒ ՂՈՒՏՈՒՄ

ԻԲՐԱՀ. Մինչև այժմ ես չէի կարող ինձ  
հաշիւ տալ, թէ դա ինչ տեսակ խելազա-  
րութիւն է, բոլորովին առողջ շարժմունքը,  
մանգալը կանոնաւոր, միայն տարօրինակ  
խօսակցութիւններ: Այժմ հասկանում եմ,  
այս բոլորը թալիսմանի հետեւանքն է:

ՂՈՒՏ. Այո, տէր իմ, թալիսմանի, թէ  
չէ Ֆաթէմանի բերանից երբ ենք լսել այդ-  
պիսի բաներ: Նա երբ երեկ իմացաւ յան-  
ցաւոր հայերի կախվելը, սկսեց լար, ող-  
լար, նա զլիին տալով ասում էր, «Ի՞նչ  
էին ուզում այդ անմեղներից, եթէ մեղա-  
ւորներին էին ուզում պատժել, թող պատ-  
ժէին ինձ, մեղաւորը ես էի:

ԻԲՐԱՀ. Պարզ է, բայց ոչինչ, թալիս-  
մանը կարելի է թալիսմանով ոչնչացնել և  
իմ կործիքով աւելորդ է եւրոպայի բժշկին  
կոնչել:

ՂՈՒՏ. Տէր, թող գայ, ի՞նչ վնաս, նա  
էլ թող տեսնի:

ԻԲՐԱՀ. Լաւ, թող ձեր կամքը լինի,  
կին էք չէ, երբ մի բան ասացիք, վերջա-  
ցաւ, պէտք է կատարվի:

ՂՈՒՏ. Է՛, տէր իմ, մայր իմ, մայր, ե-  
թէ ասեն թէ կհանքդ տուր՝ աղջիկն կ'ա-  
սողջանայ, կհանքս էլ կը տամ:

## S E U H L. 2

### ՆՈՅՆՔ, ԱԷԽՊԵ ԵՒ ԵՐԵՔ ՄՈԼՎԱՆԵՐ

(Ներս են մտնում Սէխապէն եւ երեք մոլլաներ: Մոլլաները թէւերի տակ ունեն զանազան գրեր եւ կլոր փարաված ջղբեր, իսկ հաս զօշիների մէջ խռած ունեն պղինձեայ բանահամաներ: Ներս մտնելով խորին կերպվով բարեւում են, իսկ Սէխապէն երահիմին տախու է իր սովորական բժնող բարեւը, համբուրելով հղացեր:

Պուտուաքը բողով փարարում է երեսը):

**ՍէխՊԵ.** (Խոնարհ, ցոյց տալով մոլլաներին դառնալով երահիմին եւ Պուտուաքին): Ահա տէր իմ, խանում մարի, այն հոչակաւոր մոլլայ մուտերիսները, որոնցից դողում է մինչև անգամ դժոխքը, որոնց համար անապատի առիւծը գառն է, իսկ կատաղի վագրը նապաստով. ես յոյս ունեմ, որ սըրանք կը բժշկեն մեր աչքի լոյս ֆաթման խանումին:

**ՄՈԼՎԱՆԵՐԻՑ ՄէկԸ.** (Զեռները վեր բարձրացնելով): Եւ թող Աստված պահէ բոլորիդ, Մահմեդ փեղամբարի շնորհիւ կը փառատեմ այդ ցաւը:

**ԻԲՐԱՀ.** Յարգելի իմամների յաջորդներ, եթէ փարատեցիք իմ աղջկայ ցաւը, կստանաք ինձանից մեծ վարձատրութիւն, թողվկայ լինի այս մարդը, որը ձեզ բերեց այստեղ:

**ՄՈԼՎԱՆԵՐ.** (Գլուխները խոնարհելով): Պատրաստ ենք, թող Աստուծոյ շնորհը լինի ձեր վերաբ:

**ՂՈՒՏ.** (Երեսը ծածկած): Իմաստուն մոլլայ մուտարիսներ, ես ևս չեմ մոռանայ ձեզ վարձատրել, միայն թէ շուտով:

**ՄՈԼ.** Խանում մարի, Աստուծոյ շնորհիւ կը բժշկվի քո աղջկեր, միայն խնդրում եմ, որ դուք բոլորդ հեռանաք և հիւանդը ուղարկեք այստեղ մեզ մօտ:

**ԻԲՐԱՀ.** Շատ լաւ, իսկոյն. Ղուտուաթ, Սէխպէ, թողնենք այս իմաստուններին միայնակ: (Գլուխ տալով հեռանում է, նոյնը անում են Պուտուաք ու Սէխպէն):

## S E U H L. Ե

### ՄԻԱՅՆ ԵՐԵՔ ՄՈԼՎԱՆԵՐ

(Երբ բոլորը դուրս են զնում, Մոլլաներից մէկը նսում է մէջ տեղի, իսկ միւսները դէմ ու դէմ անկիւններում դրված բազմոցների վերայ, բաց են ունում գրեւեր, հանում են բրնձեայ բանահամանը ու փետուրեայ գրիչը, բանալով կլոր փարաված բղբեր, սկսում են այդ բղբերի վերայ զանազան ուղղութեամբ ճզմզել եւ գրել, մեր լին մեր բնդմիզում են, միասին ձեռները վեր բարձրացնում, հայեացներ երկինք ուղղում եւ աղօրում, գնրինքալով կրօնական երգեր):

## Տ Ե Ս Ի Լ Հ

### ՆՈՅՆՔ, ՖԱԹՄԱՆ ԵՒ ԱՅԻՇԱ.

(Ներս է մտնում հարման դժգայն, լազոս հայեցնով, հեռարձակ, հագուստը սպիտակ: Այիշան նետեւում է նրան ուստ հեռաւուրաւետքի: Փարման պալ-պաղ, խորագինի դիտում է մօլլաններին, ուսին բոլորովին ու-  
սադրութին չեն դարձնում, խորասուզվուծ նզմզում  
են եւ մերը թեղ մերը աղօրում):

**ՖԱԹՄԱՆ.** (Առաջ զալով. առանձին):  
Խեղճ մարդիկ, ցաւում եմ ձեր վերայ, որ  
խաղալիք էք գառել մի լրի, մի անխիղճ  
զաղանի ձեռում, որը պատճառ կառաւ շատ  
անմեղների կախվելուն, որը լացացրեց  
շատ մայրեր, որբացրեց շատ ու շատ ան-  
մեղ երեխաններ և որի պատճառով էզուց  
կամ միւս օրը, իմ հօր, Ադանայի հզոր  
փաշայի գոռ բանակը պիտի շարժվի դէպի  
Զէյթուն և որքան անմեղ արիւն պիտ հո-  
սէ, որքան աւելրմունք, որքան խուժգու-  
ժանք, տակն ու վրայ պիտի լինի ամրողջ  
նահանգը, պիտ կոտորվին թէ մերոնցից և  
թէ նրանցից, որոնց առաջնորդում է իմ  
սիրելին, իմ հոգու հատոր Արմէնը... (Յուզ  
ված աչերը արտավախառն): Ա՛, ուր է  
երկնային արդարութիւնը, ինչու են ապ-  
րում Սէխպէի նման ճիւազներ, ինչու չի

թավգում նրանց գլխին Աստվածային կը-  
րակ, էլ ուր փնտրենք արդարութիւն, ուր  
գիմենք... Մի ոզորմելի մարդ, մի ճիվաղ,  
գժոխքից փախած մի գե, խաղ է անում  
ամրողջ երկրի հետ, ստեղծում մի դիվային  
գործ, մի գործ, որտեղ հըգեհների բոցը  
պիտ լուսավորէ բիւրաւոր մարդկանց յու-  
շոտված գիակները, քար ու քանդ եղած  
գիւղ ու ավանները, վայող և ողբացող  
մայրեր ու որբերը... Որտեղ ահարկու ար-  
եան գետերը պիտ ողողեն ամրողջ երկիրը  
և կարմիր ներկեն ամեն ինչ և դարէդար  
յիշեցնեն, թէ եղել է ժամանակ, որ այս  
տեղ մարզիկ իրրե արիւնուշտ գաղաններ  
իրար յոշոտել են և մի որե է ճիվաղի  
գրդմամբ. այդ ոճիրի գլխաւոր հերոսը և  
պատճառը եղել է իմ հայրը, իմ հարազատ  
ծնողը... (Լալով): Օ՛, հայր իմ, հայր, լսիր  
գստերդ կանչը, յետ գիր սուրդ պատեանդ,  
մի յոշոտիր անմեղներին, մի թաթախիր  
ձեռներդ նրանց արեան մէջ, նրանք անմեղ  
ին, նրանք քո եղբայրներն են, վերջապէս  
նրանք էլ մարդ են, որոնք իրաւունք ու-  
նեն ազատ ազրելու ինչպէս մենք ամենքս:  
Նա ինձ չի լսում, նա փախչում է իր սի-  
րելի գստրից, նա խելազար է կանչում  
ինձ, նրա համար շատ անբնական է, որ  
մի թիւրք, մի մուսլուման աղջիկ այդպիսի

բաներ է խօսում... Ի՞նչ է թիւրք կինը, ոչինչ, մի զարդ, հարեմի մի իր, մի գրաստ և ի հարկէ, եղբայրութեան, խղճի, գութի մասին խօսող մուսլուման աղջիկը կը համարվի իսկնթ, ցնորված, խելակորոյս... Ա՛, գժրախտ եմ, էլ ինչո՞ւ սովորել, կրթվել-էլ ինչո՞ւ սնվել ազատ, զարգացած եւրոպացու մօտ, թող մնայի կոյր, թող մնայի վայրենի և այն ժամանակ կարող էի տանել այս բոլոր արհավիրքները և տանել այս վայրենի, ցնդված ծերուկների հմայքն ու հրաշագործ հուլունքը: (Աշխեր ձեռներով բոնած հեկեկում է. միջոց, աշխեր սրբելով մօտենում է մոլլաներին): Հայրիկ, ի՞նչ էք գրում, ո՞ւմ համար էք աղօթում:

**ՄՈԼՅԱ.** (Առանց նայելու հարմանին, ձեռները դեպի երկինք պարզելով եւ բարձր աղօթելով): Աստված, քո անունով, Մահմէդ մարգարէի շնորհով, հօթանասուներկու իմամների աղօթքով, Մէքայի, Մեղինայի գերեզմաններով, իսայի վերջին դատաստանով, փարատվին դերը, սատանաները, չար ոգիները և բանտարկվին ահաւոր գըտիքում, ամէն:

**ՄԻՒԾ ՄՈԼՅԱՆԵՐ.** (Զեռքերը երկինք պարզած): Աստուծոյ անունով, Աստուծոյ անունով:

**ՖԱԹ.** Հայրիկ, ասա, ի՞նչ ես գրում, ո՞ւմ համար ես աղօթում:

**ԱՌԱՋԻՆ.** ՄՈԼՅԱ. Փարատվիր չար, փախիր գե, փակվիր դժոխքում, Աստուծոյ անունով, Մահմէդ մարգարէի աղօթքով: ՄԻՒԾ ՄՈԼՅԱՆԵՐ. Աստուծոյ անունով, Մահմէդ մարգարէի աղօթքով:

**ՑԱԹՄԱԾԱՆ.** (Ձեռանալով նրանցից): Զեն պատասխանում, նրանք զբաղված են իրենց թալիսմաններով և իրենց աղօթքներով: (Գառնալով Ալիքային): Այիշա, սիրելի Այիշա, ասա, ի՞նչ անեմ, այս չորս պատերի մէջ միայն դու ես, որ մտնում ես իմ գըտիքութեան մէջ, ասա, ի՞նչ անեմ:

**ԿՅԻՇԱ.** Խանում, էլ չեմ կարսղ համբերել, ես կը գնամ իմ տիրոջ փաշայի մօտ և կասեմ, որ ֆաթման խանումը ոչ թէ խելագար է, այլ ինչ որ պատմում է ճիշտ է և այդ բանը ես էլ գիտեմ, պահապան Ահմետն էլ:

**ՖԱԹ.** Իենթ աղջիկ, ի՞նչ օգուտ, քեզ էլ ու քո Ահմետին էլ կը հրատարակեն խելագար և ես իմ միակ միսիթարանք Այիշայից էլ կը զրկվեմ:

**ԱՅԻՇԱ.** Խանում, թող խելագար հրատարակեն, գոնէ ճշմարտութիւնը յայտնի կը լինի:

**ՖԱԹ.** Քանի որ չար ոգին շըտում է մեր շուրջը, էլ ինչ ճշմարտութեան մասին ես խօսում, զուր է, համբերիր Այիշա, համբերիր:

(Թուրք բացվում է, երեւում են Քարիպը,  
Ղուսաւը եւ Եւոպալի բժեկի անունով  
ձափված Արմենը, որի ձեսքում կայ մի պա-  
յօւսակ):

### Տ և Ս ի լ թ

**ՆՈՅՆՔ, ՔԱԹԻՊ, ՂՈՒՏՈՒՄԹ ԵՒ ԲԺԻՇԿ**

(Ներս են մտնում Քարիպը, Ղուսաւը եւ բժիշկը,  
կրօնաւորներ տեսնելով սրանց վեր են բռչում եւ հա-  
ւախում են իրենց իրերը):

**ՄՈԼՎԱ.** (Դառնալով դեպի Ղուսաւը,  
որը պատկառելով սրանցից, երեսը ծածկել է  
գոզով): Խանում, խանգարեցիք մեզ, Գար-  
րիէլ հրեշտակապետը բոցոս սուրը ձեռին  
այն է սկսում էք հալածել գերբին, դուք  
ներս մտաք և թալիսմանը խանգարվեց:

**ՂՈՒՏ.** (Քոյի տակից միայն երեսի մի  
մասն է երեւում): Ներեցէք, իմաստուն մու-  
տերիսներ, այս բժիշկը օտար մարդ է,  
պէտք է շուտով վերադառնայ հայրենիք,  
զրա համար էլ ձեզ իանգարեցինք. միւնոյն  
է մի ժամից յետոյ շարունակեցէք ձեր  
հմայքը:

**ՄՈԼ.** Եթէ մի հասարակ մարդ լինէիք,  
միայն մեր անէծքին կարժանանայիք, բայց  
քանի որ Աղասիայի հզօր փաշայ իբրահիմի  
զստեր բժշկութեան համար է, կը տանհնք

ամենայն զրկանք: (Գլուխը խոնարհեցնելով):  
Աստված ձեզ հետ: (Հեռանում է):

**ՄԻՒՄ ՄՈԼՎԱՆԵՐ.** (Գլուխները խոնար-  
հեցնելով): Աստված ձեզ հետ:  
(Հեռանում էն):

### Տ և Ս ի լ ժ

**ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՄՈԼՎԱՆԵՐԻ**

**ԲԺԻՇԿ.** (Ցոյց տալով ֆարմանին): Այս  
է հիւանդը:

**ՑԱԹ.** (Ալլայլված, առանձին): Այս ինչ  
ձայն է:

**ՔԱԹԻՊ.** Այս, յարգոյապատիւ տէր:

**ԲԺԻՇԿ.** Վազուց է հիւանդութիւնը:

**ՑԱԹ.** (Ալլայլված, առանձին): Նրա  
ձայնն է:

**ՔԱԹ.** Մի քանի օր է միայն:

**ՂՈՒՏ.** Չորս օր է պ. բժիշկ, չորս օր, ի  
ոէր Աստուծոյ, փրկեցէք:

**ԲԺԻՇԿ.** Մայրիկ, բան չը կայ, առող-  
ջացնելը հեշտ է, միայն այժմ ինդրում եմ  
բոլորդ հեռացէք և ինձ միայնակ թողէք  
հիւանդի հետ:

**ՂՈՒՏ.** Շատ լաւ, ինչ զոհողութիւն ու-  
զում էք, պահանջեցէք, միայն թէ բժշկեցէք:  
(Ցաւակցաբար ֆարմանին նայելով նեռա-  
նում է):

### ՏԵՍԻԼ ԺԸ

ՆՈՅՆՔ ԱՌԱՆՑ ՀՈՒՏՈՒՄԹԻ

ՔԱԹԻՊ. Պ. բժիշկ, դուք ինձ պէտք  
ունէք:

ԲԺԻՇԿ. Ոչ:

ՔԱԹ. (Բժշկին առանձին): Ի՞նչպէս ես  
պատմեցի, այս ըոլորը մի վատի կողմից  
հասրած բան է:

ԲԺ. Երեսում է, այդ բանը նշմարւում է.  
յամենայն դէպս ինձ միայնակ թողէք:

ՔԱԹ. (Գլուխ տալով): Յաեսութիւն:  
(Գնում է):

ԲԺ. (Նոյն կերպ): Յաեսութիւն:

### ՏԵՍԻԼ ԺԸ

ԲԺԻՇԿ, ՖԱԹՄԱՆ ԵՒ ԱՅԻՇԱ.

ԲԺ. (Դառնալով Այիշային): Դուք էլ  
գնացէք, ազնիւ օրիորդ:

ՖԱԹ. Ոչ, նա թող մնայ, առանց նրան  
ես չեմ կարող մնալ:

ԲԺ. Յարկելի օրիորդ, վստահացէք ինձ,  
թող մի երկու րոպէ անջտովի ձեզանից  
ձեր հաւատարիմ աղախինը:

ՖԱԹ. (Վայլի ծ. առանձին): Նա է,  
նրա ձայնն է, Աստված իմ, մի՞թէ... Ո՞չ..  
անկարելի է:

ԱՅԻՇԱ. (Պատրաստվելով հեռավալու): Խա-  
նում, քանի որ պ. բժիշկը պահանջում է,  
թոյլ տուր մի երկու րոպէով հեռանամ:

ՖԱԹ. (Ալլալված, յուզված նայելով բըժ-  
տկին, յետոյ գառնալով Այիշային): Կարող  
ես, սիրելի Այիշա:

(Այիշան հեռանում է):

### ՏԵՍԻԼ ԺԳ

ԲԺԻՇԿ ԵՒ ՖԱԹՄԱՆ

ԲԺ. (Նայելով Այիշայի ետևից մինչեւ  
դռան փակվելը, յետոյ երեսի կեղծ մօրուքը  
վայր առնելով եւ դեպի Փարմանը ուղղվե-  
լով): Ֆաթման, ես եմ, քո Արմէնը...

ՖԱԹ. (Արմենի վզովք փարվելով): Արմէն,  
դու ես, քեզ եմ տեսնում... Ա՛, թնչու ե-  
կար այստեղ, չէ՞ որ քեզ կը յոշոտեն, չէ՞  
որ զժոխային ճիւաղը այստեղ է. փախիր  
Արմէն, ի սէր Աստուծոյ, փախիր:

ԱՐՄԷՆ. Փախչել, ժըր, քեզ թողնեմ այս  
գրութեան մէջ և փախչեմ, լաւ է մեռնեմ,  
լաւ է յոշոտվեմ, լաւ է Սէխապէի այդ զա-  
զիր զեռունի, այդ վստահեցնող օձի գալար-  
ներով խեղղվեմ, քան թէ քեզ այս գրու-  
թեան մէջ թողնեմ:

ՖԱԹ. Արմէն, մտածիր թէ ինչ ես ա-  
նում, ինձ հղկելուս համար թողնում ես մի

ամբողջ ժողովուրդ իր բաղդին։ Մտածիր,  
հօրս ահաւոր բանակը մի երկու օրից շարժ-  
վելու է գէպի Զեյթուն, զէպի քաջերի օ-  
րօրանը. զու պէտք ես նրանց, քո քաջարի  
լիոնցիք քեզ են սպասում։ (Համբաւելով)  
Փախիր սիրելիս, թող ես զոհվեմ, ի՞նչ ար-  
ժէ մի սրեւ է Փաթման մի ամբողջ ժողո-  
վերի համար։

ԱՐՄԵՆ. (Գգիլով): Փախչենք միասին,  
առանց քեզ մի քայլ անգամ չեմ անի,  
պարտէզի հանում տասը կտրիչներ մեզ են  
սպասում։

ՖԱԹ. Ոչ, Արմէն, թող ես տանջվեմ  
այսուեղ, թող ինձ իբրև խելազար բժշկեն,  
իբրև ցնդված ինձանից խորշեն, բայց դու  
թող ինձ և սլացիր գէպի քո լիոնցիք, զէ-  
պի քո մամոստ, նվիրական ժայռերը, զէ-  
պի թշվառները, որոնց գլխի վերել կախ-  
ված է դամոկլեան սուրը... Շտապիր, քանի  
ուշ չէ, Արմէն, հոգիս, փախիր։

ԱՐՄԵՆ. (Գգիլով): Փաթման, ես քեզ  
չեմ ստիպում, որ ինձ համար կատարես  
այդ բանը, այլ ժողովրդի անունից խընդ-  
րում եմ քեզ, որ հետեւս ինձ։ Մի մոռա-  
նա մեր ուխտը, զործենք թշվառի, ընկա-  
ծի, կարօտի համար։ Այսօր էգուց կսկսին  
արիւալի անցքեր, այսօր էգուց զանազան  
ձիւաղներ իրար դէմ կը կանգնեցնեն երկու

ժողովուրդ, երկու հարիան ազգեր, որոնց  
բաժանում է ավետարանը ու զուռանը. Նը-  
րանք տգէտ են, նրանք անխիղճ մարդկանց  
ձեռքում գործիք դառնալով կը յոշոտեն ի-  
րար... Մի բարի ողի է պէտք, որ նրանց  
մէջ կանգնի և եղբայրութիւն, մէր քարոզէ.  
մի խաղաղութեան հրեշտակ է պէտք, որ  
նրանց գլխի վերեւում պարզէ հաշտութեան  
ծիածանը... Այդ սիրոյ ողին, այդ խաղա-  
ղութեան հբեշտակը գու պէտք է լինես։  
(Գգիլով): Դու, սիրելի Փաթման, քեզ  
պէտք ունէ թշվառ, անտէր ժողովուրդը,  
Մի քանի օրից կոփների մէջ ընկած վի-  
րավորները, նրանց տանջանքների միջից,  
աչքերը յառած այս ու այն կողմ, պիտի  
սպասեն ողաճապան հրեշտակի գալստեան,  
այդ գու պէտք է լինես. (Համբուրում է)  
Դու, իմ զիցուհի, իմ չքնաղ, իմ գեղանի,  
Շտապիր, փախչենք այս զժոխքից և թըռ-  
չենք այն ծերպերը, որտեղ պատսպարգած  
են տէտ, թշվառ, իրար դէմ սիերիմ հայ  
ու թիւրը ժողովուրդը...  
(Արմենի այս խօսակցութեան ժամանակ դբա-  
նից ներս է մցցնում իր գլուխը Սէխապէն,  
տեսնելով Արմենին, երեսին փայլում է դի-  
ւալին ծափի։ Սէխապէն նորից անյալանում է)։

ՖԱԹ. Քո այդ կոչի առաջ կը հալչի ա-  
մեն մի պարտականութիւն, ամեն մի ազ-

գակցական կապ, որդիական սէր. պատրաստ եմ հետևելու քեզ և դիմելու գէպի քաջարի մարդկանց լեռները:

**ԱՐՄԵՆ.** (Փարարվելով): Ո՞վ չքնաղ դիշուհի, եղիք վրիժառու ոգի անգութներին, արիւնարբու. զազաններին, իսկ սէր ու գութ ըաշխող բարի հրեշտակ՝ անկեալին, կարօտին...

### Տ Ե Ս Ի Լ ԺԴ

ՆԱՅՆՔ, ԵՒ ԱՅԻՇԱ.

**ԱՅԻՇԱ.** (Ահաբեկված ներս գավելով): Խանում, Աէխպէն ու Ալի բէկը մի քանի զինւորներով զալիս են (Ցոյց տալով Արմենին): Եւ ուզում են ձերբակալել այս պարոնին: (Տեսնելով Ֆարմանին ալլայլված): Ի՞նչ եմ տեսնում, խանում, բնչու ես այդ պէս այլայլված:

**ՖԱԹ.** Լոիր, Այիշա, այս մարդը Արմէննէ, այն դիւցազնը, որի մասին պատմել եմ. ես պիտի փախչեմ այս գժոխբից.

**ԱՅԻՇԱ.** Խանում... (Լսվում է իրաւանցում):

**ԱՐՄԵՆ.** Ժամանակը սուղ է, փախչենք:

**ՖԱԹ.** (Շատպով մատից նանելով մատանին, կրծքից վզնոց ոսկիները եւ տալով Ալի-

շային): Առ, Այիշա, յիշատակ ինձանից, մի մոռանար թշվառ ֆաթմանին:

**ԱՅԻՇԱ.** (Ուզում է ձեռքբ համբուրել, ֆարման չի բողնում): Թող խանում, թող վերջին անգամ հպիվի իմ շրթունքները սիրելի խանումիս ձեռներին:

**ԱՐՄԵՆ.** (Բանելով ֆարմանի ձեռից): Շտապէնք, զինւորները մօտենում են:

**ՖԱԹ.** (Փարվելով Այիշային): Մնաս բարեաւ, հոգիս: (Արմէն ու ֆարման շօապավ փախչում են դէպի պարտեզը բացող դռնից. Այիշան Շվարած կանգնած է, լսվում է իրաւունցում, շվոր, շօապով ներս են մտնում Ալի բեկը մերկ որօք. զինւորները հրացաններով եւ Սէխպէն):

### Տ Ե Ս Ի Լ ԺԵ

ԱՅԻՇԱ, ՍէխՊէ, Ալի բէկ եւ ԶինիՈՐՆԵՐ

**ԱԼԻ.** Անէծք, փախել է որսը, այ թէ կը քռնէինք, ես նրան մաս մաս կանէի:

**ՍԷԽՊէ.** (Լրբաբար): Է՛, խանում աղջիկ, մւր է խանումդ և նրան հմայող Փէդայի Արմէնը:

**ԱՅԻՇԱ.** Զը գիտեմ, ես նոր եկայ և նրանք չը կային:

**ԱԼԻ.** Միթէ ֆաթման խանումն էլ չըկայ: **ԱՅԻՇԱ.** Այս, տէր իմ:

ՍէԽՊէ. (Յլիթն եւ զինվորներին): Ի՞նչ  
շվարված կանգնել էր, այդ անպիտան ֆէ-  
քային կախարդական գլխարկ ունէ, խարե-  
լով յիմար Քաթիպին, իրու բժիշկ մեհակ  
մնաց հիւանդ Ֆաթման խանումի հետ և  
հմայելով նրան, փախցրեց... Ամօթ մհզ,  
իբրահիմ փաշայի հարազատ դուստրը փախ-  
ցրեց Փէղայի Արմէնը:

ԱԼԻ. Անէծք, ուր որ լինի պէտք է բըռ-  
նել նրան, յառաջ բաջերս, պէտք է սրբել  
մեր ճակատին դրոշմված ամօթը: (Դիմում  
է դեպի պարտեզի զուրը, նրան հետեւում են  
զինվորներ):

Վարագոյր իշխում է:



## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ I V

(Ցեսարանը ներկայացնում է ձիթենիների անտառ, չորս  
կողմը ահարկու լեռներ, հեռուն լեռան լանջի վերայ  
երևում է մի մեծ աւան շրջապատված պարտէզներով,  
որտեղ երևում են մի քանի եկեղեցու գմբեթներ, աւա-  
նից սարերի լոնջով ձգվում է մի նեղ ճանապարհ):

### S E O H L U

#### ՍՈՒՐԷՆԵԱՆ, ԱՇՈՒԴ ԵՒ ԶԷՅԹՈՒՆՑԻՔ

(Եթեմի վերայ երեւում են զարդարված, պննված զէլ-  
րունցիք, զանազան կողմեր գետնի վերայ սեղան է  
բացված, ամեն մի սեղանի շուրջը բոլորված են մի  
խանի մարդիկ, ուսնի իշաւ նետ խօսում, իշաւ հեմբե-  
տում, ծիծաղում են: Եթեմի մէջ տեղը բացված է մի  
աւելի օնդ սեղան, որի շուրջը ծալապատիկ նստած  
են Սուրենեանը իր մտեհմնենով, ուսնց մէջ եւ երե-  
ւում է կոյժ առաղի ջուրակը ձեռին. իսկ հեռվաւմ  
ժայռերի բեկորների վերայ նստած են երկու մէյի նվա-  
զող եւ մի բմբկանա: Բայորը զինված են սից զգր-  
յուս, իսկ նրանները կաւզ կարգ դասաւորված են  
սեղանների շուրջը: Նախ բան վարագոյրի բացվելը  
մէյի ածոնները սկսում են մի աշեւելիան եղանակ,  
տիուր, մելամախճն, որոնց նետ ձայնակցում է բմբկա-  
նարը, մասներով դմբդմբացնելով բմբուկը: Վարագոյրը  
բացվելուց յետոյ մի որոշ ժամանակ նվազում են. հե-  
ռունց դէպի աւանը տանող ճանապարհի վերայ, երե-  
ւում են երթեւեկոյ կանայք եւ սղամարդիկ):

**ՍՈՒԻՐԵՆԵԱՆ.** (Գինու բաժակը բարձրացնելով): Եղբայրք, այսօր մեզ համար մեծ տօն է, իմ եղբօր որդի Արմէնը, գազանի որջից յափշտակելով իր սիրած աղջիկը, բերում է մեր լեռները. խնդանք, ուրախանանք, բայց և այնպէս բանբերը, որը մեզ աւետեց Արմէնի այդ քայլը, նոյնպէս գուժեց, որ Աղանայում մեծ անիրաւութիւններ է տեղի ունեցել, կախել են մի քանի միհամեծներ և թալանել են համարեա ամբողջ հայոց թաղը. Խմելով մեր Արմէնի և իր սիրած աղջկայ կենացը, բարեմաղթենք, որ Աղանացոց էլ Աստված համբերութիւն տայ և հասնի նրա ողորմութիւնը այս նեղ օրվայ մէջ:

**ԲՈԼՈՐԸ.** Կեցցէ Արմէնը, կեցցէ իր հարսը:

**ՄԻ ԶԵՅԹՈՒՆՑԻ.** (Կանգնելով): Իշխան, արեան գէմ արիւն, եթէ հոսել է հայի արիւն, էլ մինք ո՞ր օրվայ համար ենք: (Կուրծքը եւ սուրբ ցոյց տալով): Ահա սուրս, ահա կեանքս...

**ՍՈՒԻՐԵՆԵԱՆ.** Սիրելի եղբայր, հեշտ է այդ բոլորը, այժմ ուրախանանք, խնդանք, երբ Արմէնը եկաւ, նրանից կը լսենք մանրամասնութիւնները և կը գարվենք ինչպէս կարգն է: (Դառնալով առուղին): Դէ՛, գարպէտ Պայծառ, կարօտ ենք զութակի

ձայնին և բո բաղցրիկ տաղին (Խօսող զեյրունցին նստում է):

**ԱՇՈՒԿՂ.** (Հազարով եւ ջուրակը լարելով): Ծառագ եմ, այս բուկէիս:

**ԲՈԼՈՐԸ.** Դէ՛, Պայծառ վարպետ, նվագիր, նվագիր մեր անմահ քաջելի կեանքից:

**ԱՇՈՒԿՂ.** (Սկսում է ջուրակի վերայ ածել մի սրտառուց մեղմ մեղեղի եւ յիսոյ երգել):

«Դէմ Զէյթունի քաջ անվէհներ,  
Թնդանօթի գոռ շարքեր,

Սուլէ գնդակ, շաշեն սուսեր,

Մամոռտ, սուր, սեպ ժայռ ի վեր:

Ալ-օսմանի ռազմի բանակ,

Դէպի Զէյթուն արշաւէ,

Հրացանի ահեղ գնդակ,

Նրանց գետին տապալէ:

Ով գու թիւրքի անգութ սվին,

ինչո՞ւ պատռես կուրծք հային,

ինչո՞ւ հայի դաշտ բարէրեր —

Մնան աւեր ու անտէր:

Մոայլ, խաւար է Հայաստան,

Թառամած հայ բուրաստան,

Ոչ երբ լուսոյ յոյս արշալոյս,

Աւետես ծագ արեռւս»:

(Նայն երգը սկսում է կրկնել խումբը, իսկ երգին չը մասնակցողները խորասուզված մասմաւեի մէջ, լսում են):

### Տ Ե Ս Ի Լ Բ

#### ՆՈՅՆՔ ԵՒ ԵՐԿՈՒ ԶԵՅԹՈՒԽՆՑԻՔ

(Երբ վերջացնում են երգը, նեւալով, երտնարուց ներս են մտնում երկու կտրիճներ, որոնք ոտից գլուխ զինված են):

**ԳԱԼՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԸ.** Բարեկամք, Արմէնը իր կտրիճներով լոյս աղբիւրի մօտ թողինք, մի երկու րոպէից այստեղ կը լինեն:

**ԲՈԼՈՐԸ.** (Վեր բոչելով եւ խլելով հրացանները): Դիմաւորենք քաջին, դիմաւորենք Արմէնին: (Գնում են):

### Տ Ե Ս Ի Լ Գ

#### ՍՈՒՐԵՆԵԱՆ, ԱՇՈՒԴ ԵՒ ՄԻ ԾԵՐՈՒՆԵ

(Բոլոր զնում են դիմաւորելու, բեմի վերայ մնում են Սուրենեանը, առւղը եւ մի ժերունի):

**ՍՈՒՐԵՆԵԱՆ.** Հէյ երիտասարդութիւն, մւր է, սառն է արիւսն, ինչո՞ւ չը պէտք է լինէի նժոյգիս վերայ, որ գետինը ոտնիրիս տակ դողար:

**ԾԵՐՈՒՆԻ.** (Յենված ցուպին): Այն, այն, յիշում ես, իշխան, Թոնուզի կոիւը, յիշում ես մեր Դէլի Քեշիշը. (Գլուխ սմբամբացնելով) Հէյ, անցան այն օրերը, օրեր, որոնք անդառնալի կորան:

**ԱՇՈՒԴ.** (Գլուխ սմբամբացնելով): Ես այդ կովի օրը սուրը Տիրամօր քարայրի մէջ սպասում էի կովի վախճանին: Կոիւ ահաւոր, կոիւ ահարկու, մեր հինգ հարիւր կտրիճները դիմադրում էին Ալի փաշայի վաթսուն հազարեայ բանակին. մեր հինգ հարիւր չախմախ հրացանները մրցում էին վաթսուն հազար այնալու և վեց թնդանօթների կրակի դէմ... Թշնամու բանակը դառնել էր մի դժոխային հնոց, միայն հուր էր ժայթքում: Թնդանօթների զոռոցը, հրացանների թնդիւնը դողացնում էր մեր սէգ ու հպարտ լեռները: Մերոնք չէին վհատվում: անմատչելի գիրք բռնած, վերեկց ներքե անվրէպ փառում էին զետին Օսմանլու զինւորներին: Թշնամին կատաղում էր, սուլում էր վերեկց մեր չախմախլու հրացանները և նորից հնձում թշնամու շարքերից հարիւրաւոր զինւորներ: Օսմանլին վաշտ վաշտի ետևից զրոն էր տալիս գէպի վեր, գէպի մի բուռն գիւցազունները, բայց մերոնց ահարկու գնդակների տարափը դիզել էր տալիս զիակ զիակի վերայ: Մորչչում էր Ազիզ փաշան, կատաղում, բայց իզուր, անմատչելի էր զիրքը, անընկճելի մեր կտրիճների կամքը: Վերջապէս և երեւեցաւ մեր պանծալի իշխան Սուրենեանը իր երեք հազար կտրիճներով, հինգ հարիւ-

բակը սիրտ առաւ, Սուրէնեան իշխանը մի՛  
կողմից, մեր պաշարվածները միւս կողմից  
սաստկացրին կրակը, թշնամին շշմեց, դո-  
ղաց, սկսեց սեղմվել, բայց երկու կողմից  
քարձրաբերձ ժայռերից անընդհատ թափ-  
վում էր կրակ, լոեց թշնամու թնդանօթ-  
ները, որովհետև մի կենդանի թնդանօթա-  
ձիգ չը մնաց, Փաշան հրաման տվից ետ  
քաշվելու, մերոնք սկսեցին հետեւ և այն-  
քան նեղեցին, մինչև որ թշնամուն բոլորո-  
վին դուրս վանեցին մեր լեռներից: Այդ  
օրը մերոնցից նահատակվեցան երկու հա-  
րիւր յիսուն կարիճ, իրենց հետ տանելով  
դէպի գերեզման երեք հազար Օսմանլու:  
Այդ օրը մերոնք գերեցին հազար հինգ  
հարիւր զինուր և առան վեց թնդանօթ:

ՍՈՒԻՐԷՆ. Պայծառ եղբայր, որտեղից  
գիտես այդ բոլոր մանրամասնութիւնները,  
քանի որ դու փակված ես եղել ս. Տիրա-  
մօր քարայրում և զուրկ ես եղել տեսնելուց:

ԱՇՈՒԻՂ. Իշխան, հոգով էի զգում այդ  
բոլորը. սրերի շաշիւնը, հրացանների թըն-  
դիւնը, թնդանօթների գոտոցը և մերոնց  
յազթական կանչիւնները կարծես ինձ  
պատմում էին այդ բոլորի մասին, կարծես  
թէ ես էի առաջնորդում մեր կտրիճներին,  
կարծես թէ կանդնած կրակի ու գնդակնե-  
րի տարափի տակ, խրախուսում էի մերոնց:

(Շարժելով ջութակը): Ա՛, ինչու ջութակն  
էր իմ ձեռում, ինչու դրա տեղ չէր փայ-  
լում վրիժառու սայրասուր սուսերը, որ  
սլանայի դէպի թշնամին, դէպի Ալի փա-  
շան, պատառոտէի նրա կուրծքը... Աւախ,  
թոյլ հմ մարմնով, թոյլ կամքով: (Զգացված  
նվազում է մի բայլերգ):

ՍՈՒԻՐԷՆ. (Նայելով հեռուն): Ահա երե-  
ւում են մեր կտրիճները, ահա և Արմէնը,  
ահա մեր պարձանքը, մեր լեռների դիւ-  
ցազնը. բայց ուր է այն թիւրք աղջիկը,  
որին փախցրել է գաղանի որջից: (Առուղը  
դադարեցնում է նվազելը), Հէյ երիտասար-  
դութիւն, ինչպէս ուրախ են, ի՞նչպէս  
զպարդ:

ԱՇՈՒԻՂ. Այդպէս է, իշխան, նրանք գա-  
րուն են, որտեղ փայլվում է զոյնզգոյն,  
երփներանգ ծաղիկներ, որտեղ հովը շոյում  
է նրանց, որտեղ է կարմիր վարդ, տոչոր  
սոխակ և նրանց հետ անբաժան անուշիկ  
զեփիւու: Աւախ, մենք ձմեռ ենք, ձմեռ  
միակերպ, սառն, լուռ ձմեռ, որտեղ աիրում  
է միապաղաղ ձեան սպիտակ սավանը և  
պաղ, ոռնացող քամին, բայց ունայն, բո-  
լորը ունայն... (Լսվում է մեյիթ մելմ նվազը  
եւ մարդկանց իրարանցում):

ՍՈՒԻՐԷՆ. Եկան, մօտենում են: Ահա և

նա, որքան ընթոյշ, որքան գեղանի է,  
որքան յարգում է նրան Արմէնը: (Զայթերը  
մօտենում են):

### Տ Ե Ս Ի Լ Դ

#### ՆՈՅՆՔ, ԱՐՄԷՆ, ՖԱԹՄԱՆ ԵՒ ՄԻՒՄ ՀԵՅԹՈՒՆՑԻՆԵՐ

(Ներս են մտեաւ բոլորը, առաջ մէյի ածողները, յե.  
տոյ մի եւկու երիսասարդ, նորացից յետոյ Արմէնը,  
ֆարման իրենց հետեւղիներով եւ միւս գեյրութցիք:

Մէյիները դադարեցնում են նվազելը):

**ԱՐՄԷՆ.** (Առաջ գալով եւ համբուրելով  
Սուրենեանի ձեռը, իսկ նա Արմէնի նակատը):  
Հօրեղայր, ներիր. ներիր, որ առանց քո  
համաձայնութեան այսպիսի մի քայլ արի:

**ՍՈՒԻՐԵՆ.** Արմէն, իմ աչքի լոյս, ներե-  
լու ոչինչ չը կայ, գիտեմ, որ քո ամեն մի  
քայլը չափված է շնորհալ ու խելքով:  
(Ֆառնարով ֆարմանին): Ուրեմն սա՞ է այն  
հիւրին, որը խլել էիր փաշայի պալատից:

**ԱՐՄԷՆ.** (Ֆարմանի ձեռից բռնելով եւ  
ներկայացնելով Սուրենեանին): Այն, հօրեղ-  
բայր, սա նա է, որը ինձ համար յանձն  
առաւ այս զոհողութիւնը:

**ՖԱԹ.** (Համբուրելով Սուրենեանի ձեռը):  
Հայր, ես նա եմ, որի համար վտանգի մէջ  
գրեց իր կեանքը Արմէնը:

**ՍՈՒԻՐԵՆ.** (Համբուրելով) Փարմանի նա-  
կատը: Աղջիկս, արժանի ես Արմէնիս, նրա  
նման նորափթիթ, գեղանի, շնորհալի...  
(Փառնալով դեպի միւսները): Բարեկամներս,  
ահա իմ տղան և իմ հարսը:

**ԾԵՐՈՒԽՆԻ.** (Մօտենալով շնորհաւորում ե  
եւ նակատները համբուրում, իսկ երանք ձեռը):  
Որդիք, ցանկանում եմ ամենայն բախտա-  
ւորութիւն ու բարիք, ծերանաք, ծլիք ու  
ծաղկիք:

**ԱՇՈՒԻՂ.** (Չեսներով որոնելով ու մօտենա-  
լով զոյգին, համբուրում է նակատները, իսկ  
նրանք ձեռը): Ոչինչ չունիմ ասելու, մեղա-  
ւոր բերանովս ազաշում եմ Աստվածանից,  
որ ձեր կեանքի ճանապարհը ծածկվի վար-  
դիրով, որ զուք բացցիք ինչպէս ծաղիկներ  
և ծերունիներիս օրհնենքը իրեւ կենսատու  
ջրի կաթիւներ ցողէ ու ցողցողէ ձեզ, ով հր-  
շանիկ որդիքաւ: (Հեռանում է, միւսները կարգով  
զալով չնորհաւորում են, սեղմելով ձեռները):

**ՍՈՒԻՐԵՆ.** Դէ, բարեկամներ, բոլորվենք  
սեղանների շուրջը, Արմէնը և մեր գեղանի  
հիւրը յոգնած ու քաղցած կը լինեն: (Հան-  
դիսականները բալորվում են սեղանների շուր-  
ջը: Սուրէնեանը, Արմէնը, Փաթման, աշուղը,  
ծերունին և մի քանի ուրիշ ականաւոր Զէյ-  
թունցիք բալորվում են մէջ տեղի սեղանի  
շուրջը):

ԱՇՈՒՂ. Արմէն, ի՞նչ է անունը մեր գեղանի հարսի:

ԱՐՄԷՆ. Ֆաթման, սիրելի վարպետ:

ԱՇՈՒՂ. (Դառնալով Սուրէննետնին): Իշխան, թոյլ տվէք այսօրվայ սեղանը ես կառավարեմ, թոյլ տվէք այս մեր խմբակցութիւնը, ի պատիւ Արմէնի ու Ֆաթմանի, առաջնորդեմ՝ դէպի անհոգութեան, ուրախութեան աշխարհը:

ՍՈՒԻՐԵՆ. Կարող էք, վարպետ, այդ ձեր իրաւունքն է:

ԱՇՈՒՂ. (Բարձրացնելով գինով բաժակը): Խնդանք, ուրախանանք: Ցնծութիւն թող պատէ մեր լեռներում. ափսոս, որ աշուն է, ափսոս, որ բնութիւնը մեզ հետ խնդակից չէ, ուր է վարդ ու ծաղկունք, ուր է երես գուրգուրող մեղմ, քնքոյշ գեփիւոը, ուր է թռչոց ուրախ հրզն ու սուլոցը և վարդից հալ ու մաշ տոչոր սոխակը: Լուս է գետ առվակ, դժգոյն է երկինքը, դժգոյն գետին, մշուշապատ է մեր սիրապանձ լեռները: Միայն ուրախ է Զէյթուն, ուրախ ենք մենք զէյթունցիք, որովհեան մեր ժայռերի ստորոտում, մեր նվիրական ձիթենեաց տակ փայլվում է մի լոյս, բուրում է մի անմահական հոտ: Լոյս են արձակում, հոտ են բուրում մի զոյգ, մի զոյգ պանծալի, մի զոյգ գեղանի, Արմէն ու Ֆաթման, կեցցէ

այդ զոյգը, կեցցէ յաւիտեան: (Խմում է):

ԲՈԼՈՐԸ. (Բարձրացնելով բաժակները): Կեցցէ այդ զոյգը, կեցցեն Ֆաթման ու Արմէնը: (Խմում են):

ՍՈՒԻՐԵՆ. Վարպետ, բողոքում ես բնութեան ծերութեան դէմ, բայց չես բողոքում մեր ծերունիներիս դէմ, որոնք այս ծաղկափթիթ երիսասարդութեան մէջ թոշմած աշուն են, որոնց երեսին ինչպէս սառն մըշշուշ պատել է ծերունիական ալիքները:

ԱՇՈՒՂ. Իշխան, թէև մարմնով թոյլ թէև սպիտակ ալիքներս իրը մշուշ պատել է իմ զլուխը, բայց կորովի եմ հոգով, երիտասարդ զգացմունքներով: «Հիմքինն է շնորհը», ասում է առածը. իսկ մենք այս երիտասարդութեան հիմքն ենք կազմում:

ԱՐՄԷՆ. (Կանգնելով): Սիրելի հօրեղբայր, ազնիւ վարպետ և յարգելի բարեկամներ, այն, ուրախանանք, ցնծանք, որովհետև Զէյթունը իր նվիրական լես ու ձորերով մեր աշքի առաջն է, որովհետև վաթսունը չորս թվականի անմահ քաջերի օրօրանը ժպտում է մեզ, որովհետև դիւցազունների շիրիմները պատմում են այնպիսի սիրագործութիւնների մասին, որը պարծանք է մեզ: Բայց աւազ, կարճ պիտի լինի մեր ուրախութիւնը, որովհետև իմ մի անզգոյշ քայլից մի այնպիսի փոթորիկ

բրդաւ, որը իր հետևանքներով շատ ծանր և շատ զգալի է: Մի գիշեր իբրահիմ փաշոյի պարտէզի մէջ ես պատահելով Մուսա բէկին, կովի բռնվեցի. լաղդը ինձ ժամաց և ես Մուսային գետին տապաշեցի, բայց մի անզգամ, որը ինչն էր Մուսա բէկին առաջնորդել դէպի իմ թագստեան տեղը, օգուտ քաղեց այդ սպանութիւնից և մի ահագին սուստ յօրինելով, սաեղծեց մի ահանելի զրպարտութիւն: Իբր թէ Ադանայի հայերն էին ինձ դրդել, որ Մուսային ըսպանէի և իբր թէ այս սկիզբն է, սրան պէտք է հետևեն մի շարք ուրիշ սպանութիւններ: Այդ բանից իբրահիմը կատաղեց, նոյն վատի ցուցմունքով մի քանի մեծամեծների դատապարտեց կախաղանի, մի քանիսին բանտարկութեան, իսկ հայոց ամրող թաղը ենթարկվեցաւ թիւրք խուժանի և զինուորների կամայականութեան: (Յոյց տալով Փաթմանին): Սա էր, որ ուզեց առաջն առնել բռնութիւնների, անիրաւ դատաստանի, մի կողմը ձգեց ամօթխածութեան քողը և բողոքեց, բայց վատի ցուցմունքով խելագար հրատարակվեց հէնց իր հօր իբրանով և խեղճը ենթարկվեց հոգեկան առաջանքի, իսկ վատի կողմից ծաղրի, ծանակի: Սիրսս մորմոքում էր, խիդաս տանջվում, բայց ի՞նչ կարող էի անել

իբրահիմի հազարաւոր սվինների գէմ, ուշինչ, միայն խլեցի նրանից իր աղջիկը և բերի ձեզ: Այժմս յայտնում եմ, որ իբրահիմ փաշան վրէժով լցված դէպի ֆէդայի Արմէնը, որը սպանել է նրա մտերիմ թիկնաւպահ Մուսա բէկին և փախցրել սիրելի աղջիկը, հետոն առած քառասուն հազար կանոնաւոր և բաշի բողուկ զօրաց բանակը, զիմում է դէպի մեր լեռները: Ես մեր կտրիչներից մի քանիսին թողի սուրբ Ծերի ստորոտը, որ իբրահիմ փաշայի բանակը երեալուն պէս մեզ իմաց տան: Այս է բոլորը, և իթէ ես մեղաւոր եմ, կարող էք դատել և գատապարտել լստ պատշաճի:

ՑԱ.Թ. Եւ եթէ պէտք է պատժի մէկը, այդ ես եմ, որովհետեւ իմ պատճառով Արմէնը կատարեց այդ սպանութիւնը:

ԲՈՂՈՐԾ. Ոչ մի պատիժ, ոչ մի գատապարտութիւն. թող զայ իբրահիմը, նըրանց համար պատրաստ է մեր շիկացած գնդակները:

ԸՈՒԻՐԵՆ. Եղածը անցել է, ես էլ եմ երիտասարդ եղել սէրը չի կարելի գատապարտել. զտտապարտելի է այն մարդու արարքը, որը խանգարել է մնչող զոյգերի խաղաղութիւնը. մոռանանը այդ, Այժմ մեր առաջ կայ մի ծանրակշիռ հարց, Ադանայից լսվում է մի չարագուշակ, խուլ ձայն, ու

երկաթի, գնդակի, հրոյ, հեղեղի ձայնն է, որը հոսում է զէպի մեր լեռները, որը սպառնում է ոչնչացնել ամեն ինչ, կրակի ճարակ տալ տուն, տեղ, արեան մէջ խեղդել բոլորը, թէ ծեր, թէ կին, թէ մանուկ: Բայց մէր լեռները շատ են տեսել այդպիսի հեղեղներ, շատ են եկել այդպիսի Ալիներ, իբրահիմներ և կորագլուխ փախել: Այժմս էլ նորից է վիճակվում մեզ զիմազրել Աստված կօգնէ մեզ, որովհետև արդար է մեր գործը: Հինգ հարիւր տարի է, որ մեր և մուսլումանների մէջ կրկնվում է այս կոխները և քանի որ կայ Զեյթուն ու իր քաջ զաւակներ, կը տեէ յաւիտեան:

ԱՐՄԵՆ. Հօրեղբայր, մի անարդիր մուսլումանին, որի մի ներկայացուցիչն էլ (ցոյց տալով Ֆարմանին) ահա այստեղ է Մուսլուման ժողովուրդը մեղաւոր չէ, նա էլ նոյն ժողովուրդն է, նա էլ նոյն մարդն է, նա էլ մեր եղբայրն է, միայն մեր և նրանց մէջ կայ ավետարան ու զուռան, որոնք իբր մի զիթիսարի պատնէշ զիմազրում են միութեան, սիրոյ և լաւ յարաբերութեան: Նրանք մեղաւոր չեն, մեղաւոր է վատը, մեղաւոր է արիւն ու շահ պարող զազանը, մեղաւոր է մի որեէ անքոր Սէխապէ, մի որեէ Մուսա, իբրահիմ, բայց մեղաւոր չէ մուսլուման ժողովուրդը,

որի տգիտութիւնից օգուտ են քաղում վատերը:

ԹԱԹ. Թոյլ տվէք խօսելու և մուսլուման կնոջ, որը զարմանք կը պատճառէ ձեզ, որովհետև մինչև այժմ տեսել էք մուսլուման կնոջ փակված հարեմում կամ պլված իր էյրամի մէջ, իսկ այժմ ձեր առաջ կանգնած նա, աղատ, համարձակ խօսում է այնպիսի բաների մասին, որը շատ տարօրինակ է ձեզ համար: Այրելի հայ եղբայրներ, ես թիւրք աղջիկս, խնդրում եմ ձեզանից սիրել թիւրք ժողովուրդը, թիւրք երկրագործը, թիւրք արհեստաւորը և թիւրք խաղաղ քաղաքացին, որոնց և պիտի քարոզեմ նոյնը, եղբայր էք զուք, Աստվածանից ստեղծված մի տեսակ մարդկեկ, մի երկրում ծնված, միասին անված, եղբայր էք զուք, մի կողմ սուր, հրացան, մի կողմ զարենոր թշնամութիւն, տվէք ձեռք ձեռքի և զիմեցէք զէպի միութիւն, եղբայրութիւն, որը կը պարզեէ ձեզ երջանկութիւն: (Շտապ քրնարու ներս են մենում երկու զիլրունցիք):

Տ Ե Ս Ի Լ Ե

ՆՈՅՆՔ ԵՒ ԵՐԿՈՒ ԶԵՅԹՈՒՆՑԻՔ

ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻՑ ՄԷԿԸ. (Կտրելով

Փարմանի խօսքը, բոլորը վեր են քռչում եւ շրջապատում նորեկներին) Թիւրքաց ըանակը հասաւ մինչի սուրբ Ծերի ստորոտը, փախստական հայերը պատմում են սարսափելի բանիք. ճանապարհին պատահած գիւղերը աւերում, բանդում, մարդկանց կոտորում, աղջիկ, տղայ գերում և ինչքը յափշտակում են: Փախստականների տեսքը և պատմածը քստմնելի է:

ՍՈՒԻՐԵՆ. (Բոլորը Շվարած կանգնում են, ատուդի ջուրակը սեղմում կը ծիծին եւ տարութերփում ե): Տղերք, միք շվարզի, թշնամին մտել է մեր լեռները, շտապեցէք դէպի աւան և հավաքեցէք մեր կտրիձներին: (Դառնալով Արմենին): Դու, Արմէն, այստեղ եղած կտրիձների հետ շտապիր դէպի թշնամուրանակը և հետեւր նրա շարժման, իսկ այստեղ ես կը կարգագրեմ, ի զէն, բաջերս, շատ ենք տեսել այսպիսի օրեր, շատ են բաղիվել մեզ հետ այսպիսի գոռ բանակներ:

ԱՐՄԵՆ. (Դառնալով երթասարդ զեյթունցիներին): Տղերք, յառաջ, իսկ դու, Յաթման, հօրեղբօրս հետ վերադարձիր Զէյթուն: (Տղայիր հրացանները առաջ ուզում են գնալ Արմենի հետ):

ՖԱՄ. Ուր Արմէն, այնտեղ էլ ես, մի վախիր, թէկ թոյլ, բայց կարող եմ հետեւել քեզ:

ԱՐՄԵՆ. Գնա գիւղ, հոգիս, դժվար է քեզ, ի կնոջ սիրաը չի կարող ատնել պատերազմ արհավիրըները:

ՖԱՄ. Այս, կին եմ, թէկ չեմ կարող կովել թէկ սուրը խորթ է ինձ համար, բայց կարող եմ սփոփել վիրաւորի ցաւն ու տանջանքը, կապել վերըները և սրբել օրհասի արտասունքը, որը կը թրջէ մեռնողի թերթերունքը:

ՍՈՒԻՐԵՆ. (Փարմանի նակատը համբուրելով): Գնա, աղջիկս, քեզ պէս անվեհեր էսկը, իսկ որ արժանի էր Արմէնիս: (Փարմանը համբուրում է ձեռը. Սուրենեանը Արմենի նակատը համբուրելով, իսկ Արմենը ձեռը): Իսկ դու որդիս, եղիր պահապան այս չըթնաղ էսկին, եղիր զգոյշ, քաջ և յամա: (Պառնալով միւսներին) Որդիկ, վերադարձէք դէպի Զէյթուն պատվով և փառըով, այժմ ձեր պարագն է միայն զիտել թշնամուն, իսկ կոիւը տեղի կունենայ սուրը Յովանու վանքի մօտ, որտեղ մեր զէյթունցիք առաջնորդութեամբ կտրիճ Աթօյի և իմ, կսպասեն թշնամուն:

ԱՐՄԵՆ. Յառաջ քաջերս, երթանք դէպի թշնամին, դէպ մեր ոսոխ Օսմանլին: (Փարմանի ձեռը բանած գնում են):

ՏՂԵՐՔ. (Հետեւելով Արմենին, եւ օդի մէջ հրացանները շարժելով): Յառաջ, ահա մեր

բազուկ, ահա մահառիթ զնդակ, յառաջ՝  
(Գնում են, բեմի ետելից լսում է զեյրուց-  
ցիների խայերգը: Սուրենեանը, ծերունին եւ  
առուղը նայելով նրանց ետելից, ձեռքերը բա-  
փահարելով գոշում են):

«Դնաք բարեաւ, զնաք բարեաւ...»:

Ապասզուրբ իշխում է:



## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ V

(Ցիսաբանը ներկայացնում է մի հինավուրց վանքի կա-  
մարաւոր նախագավիթ, յատակը սալատակված, ձախ  
կողմը վանքի քանդակագործ ներքին դուռը, աչ կողմը  
նոյն տեսակի վանքի արտաքին դուռը: Բեմի տառչ  
պատի մօտ զրգած է ծառերի ճիշտերից զործքած  
պատգարակ, որի վերայ ննջում է վիրաւոր նրբանիմ  
փաշան, նրա վերայ ձգված է մի սպիտակ սալան: Բե-  
մի խորքում նոյնպէս երկուու են այդպիսի պատգարա-  
կներ, որոնց վերայ նստած կամ պառկած են մի  
քանի վիրաւոր թիւրք զինուրներ: Վիրաւորները հազած  
են կոշտ շալից երկար ֆարանձիներ, որի ձեռն է կապ-  
ված, որի ճակատը, որի թերը, իսկ նրբանիմ փաշայի  
սոսն է փաթթված: Վանքի ներքին դռան վերից կախ-  
ված է մի միջակ զանգ):

S t Ս ի Լ Ա

## ԱՐՄԷՆ ԵՒ ՎԻՐԱԿԱՌՆԵՐ

ԱՐՄԷՆ. (Կանգնած նրբանիմի պատգաւա-  
կի մօս, ձեռներ կրծքին, մտախոն. Նրբա-  
նիմը բնած է): Ննջիր, ով փաշայ, ննջիր  
խաղաղ քնող, քեզ համար ոչինչ այն մայ-  
րերի վայնասունը, որոնք ողբում են իրենց  
որդիկերանց զիերի վերայ, քեզ համար ո-  
չինչ հրդեների այն ծուխն ու բոցը, որը  
լափում է մարդկանց գառն ըլտինքով կերտ-  
ված վանքն ու եկեղեցին, տուն ու տեղը  
և խղճուկ զեղջուկի անշուր խրճիթը: Քո-

քունը չի խանգարում վիրաւորների տնքո-  
ցից, տանջվողների հառաջից և մահամերձ  
զինւորի օրհասական հոնջոցից։ Այդ բոլորը  
բնական է, օրինական, կանոնաւոր և խե-  
լագար է այն մարդը, որը կը բոլորէ այդ-  
պիսի կարգերի դէմ։ (Առաջ գալով)։  
Օ՛ մարդիկ, հեռու չէք դնացել վայրի գա-  
զանից. ինչպէս կատաղի վագրը արիւն-  
ուուշա ճանկերով պատառում է իր որսը,  
նոյնպէս և դուք պատառում էք իրար. ինչ-  
պէս արիւնարբու յովազը խմում է իր ոտ-  
ների տակ թափալիող ձրէի արիւնը, նոյն-  
պէս էլ դուք խմում էք իրար արիւն։ Էլ  
ի՞նչ խիդէ, էլ ի՞նչ գութ, դրանք խօսքեր  
են, պատիր ձեւեր. ամեն մի քայլ փոխելիս  
պատահում ես քստմեցնող գործերի, ներ-  
կայ ես արիւնալի անցքերի, վկայ ես սիրտ  
պատառող եղեռնագործութեան։ Ո՞վ է  
փառք վաստակում, նա, որը յաջողութեամբ  
սրի, հրի ճարակ է գարձնում թշնամու-  
րանալը. ով է գովարանվում, նա, որը  
տաղանդ է հազարաւոր մարդիկ կոտորելու  
արհեստում։ Թերթենք պատմութիւնը, հա-  
յեացքներսուղղենք դէպի մարդկանց անցած  
ճանապարհը, ովքեր են իրենց զլուխը պը-  
սակել դափնիներով. զանազան Ռամզէսներ,  
կամբիւզներ, Հռովմէական կեսարներ, նա-  
պօլէօններ և գրանց նմաններ. ի՞նչ է եղել

գրանց գործը. հրածութիւն և սրածութիւն,  
համեմված մարդկանց լաց ու կոծով, աւե-  
րակ երկրի մոխրակոյտերով և լուսաւորված  
հրդեհի բոցերով։ Իսկ նրանք, որոնք քարո-  
գում էին սէր, գութ, խիդ։ որոնք քարո-  
գում էին հաւասարութիւն, եղայրութիւն։  
գրանց գլխին զրված է վշեայ պսակ, զրանք  
հալածված են, անարգված, ոտնատակ տըր-  
ված։ (Միջոց, երկու քայլ անելով, նորից կանգ  
նելով)։ Խիզն տանջում է, հոգիս անհանգիստ  
է, երեկեան կովում ընկած հազարաւոր մարդ-  
կանց ուրվականներ հիտեւում են ինձ, ի-  
րենց արիւնոտ պատկերը մի կինդանի բո-  
զոք է դէպ մարդկանց անիրաւութիւնը։  
Բայց միթէ եղկելիս մեղաւոր եմ, որ ա-  
ռաջնորդեցի մերայնոնց դէպի պատերազմ,  
դէպի Օսմանլու գոռ բանակը. միթէ մե-  
զաւսը էի, որ մեր բաջերի հետ միասին  
փշրեցի իրահիմի բանակը, որոնցից սպան-  
վեցին երկու հազար անմեղ մարդիկ, իսկ  
հազարաւոր զինւորներ այժմ տնքում են  
վէրքերից։ Պարաւոր էի այդպէս վարվե-  
լու, ստիպում էին ինձ այդ քայլն անելու,  
որովհետեւ իրահիմ փաշան գլուխ անցած  
երեսուն հազար կատաղիների, իրեն ավե-  
րող հեղեղ արշավում էր դէպի մեր նվի-  
րական լենները. որովհետեւ Օսմանլու երե-  
սուն հազար սվինները և տասնեակ մահա-

ոիթ թնդանօթները սպառնում էին մեր նվիրական օջախին. մեր մայրերն ու քոյրերը աչքերը դէպի մեզ յառած, պաշտպանութիւն էին խնդրում: Պարտաւոր էի պաշտպանել մեր նվիրական լեռները, պարտաւոր էի պաշտպանել մեր նվիրական օջախը, մեր մայր ու քոյրերը: (Նստում է կամարի պատվանդան հարի վերայ. ձեռք ծնոտին, մտախոն):

### Տ Ե Ս Ի Լ Բ

#### ՆՈՅՆՔ ԵՒ ՑԱԹՄԱՆ

ՖԱԹ. (Ներս մտնելով մօտենում է իբրահիմի պատգարակին): Արմէն, ինչպէս է հայրս ԱՐՄԷՆ. (Մատը բերանին): Զգոյշ, քնած է. ոչինչ, անվտանդ է վէրբը, մի քանի օրից կարող է վեր կենալ, գնդակը անցել է փափուկ մսից:

ՖԱԹ. Խոկ միւս զինւորները:

ԱՐՄԷՆ. Խեղճ վահրատը գիշերս մեռաւ, նա իր վերջին հառաչի հետ, ինչ որ Գիւլիկարի անուն ավեց:

ՖԱԹ. Խեղճ, ով գիտէ իր փայփայած ոէրն էր այն, որի անունը յիշեց մեռնող վահրատի շրթունքները, ով գիտէ ինչ յոյշեր, ինչ գեղեցիկ մտքեր, ինչ քաղցր յոյշեր ձմլում էին նրա սիրտը, բայց մի

գէյթունցու գնդակ վերջ դրեց այդ բոլո՞րին և զեռ կեանքի զարունը չը բոլորած, թշվառը մտաւ սառն գերեզման: Օ՛, անգութենք մինք, Արմէն:

ԱՐՄԷՆ. Մեղաւոր չենք, ֆաթման, գիտեմ, քեզ համար շատ դժվար է այս խեղճների մահն ու տանջանքը, իրրե կին դութոյլ ես տանելու այս արիւնային, գաղտնական տեսարանները. բայց սաս խնդրեմ: (Ցոյց տալով վիրաւորներին): Ի՞նչու էին սըրանք արշավում դէպի ուրիշի տուն ու տեղ, ի՞նչու էին բռնանում ուրիշի իբրավունքի, ազատութեան վերայ, ի՞նչու էին թալանում օտարի ինչքն ու ստացվածքը, ասա, ի՞նչու էին ավերում, քանդում, կրակի, սրի ճարակ դարձնում ամեն ինչ:

ՖԱԹ. Մեղաւոր չէ զինւորը, այլ մեղաւոր են նրանք, որոնք մկում են խեղճերին դէպի այլպիսի պժգալի զործեր: Մեղաւոր են սրանց ստիպողները, մեղաւոր են սրանց գրգողները. մեղաւոր է մի որեէ միամիտ, բայց և բռնակալ իբրահիմ, իմ հայրը և նրան գրգող գարշելի, սլնքոր ԱԷխոպէն:

ԱՐՄԷՆ. Մի յիշեր վատի անունը, մի պղծիր այս սուրբ կամարները: Մեղաւոր չէ իբրահիմը, մեղաւոր չեն ամեն մի մոլեսանդ, ազէտ բէկ կամ փաշա, այլ մեղաւոր են այլպիսի զաղիր գրդիչներ. հարիւրաւոր

պէյթունցու, հազարաւոր օսմանլու արիւնը  
և քար ու քանդ երկրի ամբողջ մեղքը  
ծանրանում է այդ քստմելի սողունի վերայ:

Մի վիրԱկՈՐ. Օ՛ Աստված, ցավում է:  
ՖԱԹ. (Գնալով դեպի վիրաւորը): Ի՞նչ  
է հոգիս, որտեղդ է ցավում:

ԱՐՄԷՆ. (Մօտենալով): Երկի փշրված ոս-  
կորն է ցավում, երեկ շատ աշխատեցինք,  
բայց գնդակը չը կարողացանք հանել, մի  
ժամից նորից պէտք է նայել:

ՎԻՐ. Օ՛, տէր իմ, բավական է, թող  
մեռնեմ, միք տանջէ, չեմ կարող տանել,  
բաւական է... (Հեկեկալով): Ա՛խ, իմ որ-  
դիքը, իմ կինը:

ԱՐՄԷՆ. Մի լար, բարեկամ, ամօթ է,  
զինւորը պէտք է տանի բոլոր զրկանքները,  
վէրքդ վտանգաւոր չէ. կարելի է մի իղձ,  
մի բաղձանք ունես, ասա ինձ:

ՖԱԹ. (Աշխերը սրբելով մի կոլմ) ԽԵՂՃ:  
ՎԻՐ. Ոչ մի բաղձանք, տէր իմ, չնորհա-  
կալ եմ, Աստված թող վարձատրէ ձեզ,  
դուք խանումիս հետ, իրբե պահապան  
հրեշտակ պահում, պահպանում էք մեզ,  
մեղաւորը մենք ենք, մենք եկանք ձեր եր-  
կիրը, մենք էինք թալանում ձեր տուն ու  
տեղը, գերում ձեր հարս ու աղջիկ. դուք  
ստիպած զէնք բարձրացրիք, վշրեցիք մեր  
զօրութիւնը, իսկ այժմ մեզ պատժելու,

մեզ մաս մաս անելու փոխան, այսպիսէ  
գուրգուրանք, այսպիսի հոգս. հրեշտակներ  
էք գուր, մենք արժան չենք:

ԱՐՄԷՆ. Մարդիկ միշտ պարտական են  
այդպէս վարգելու, միայն վայրի գուզան-  
ներին է վայել իրար պատառուել:

ՖԱԹ. Մի վշտանար եղբայր, գու մեղա-  
ւոր չէիր, բեզ հրամայում էին: Ո՞վ գիտէ  
ինչ դժվարութեամբ թողիր բո մանրունք  
որդիքը, քո տուն, բո տեղ, ինչ դժվարու-  
թեամբ առար այն հրացանը, որը տվին  
բեզ հրամայողները:

ՎԻՐ. Եյա, դժվար էր ինձ բաժանվել իմ  
որդկերանցից, իմ անտէր կնոջից, ես փայ-  
տահատ եմ, հազիւ մի բրդուչ հաց էի տա-  
նում իմ ընտանիքին, հազիւ հակցնում,  
հազիւ ծածկում էի նրանց մերկութիւնը.  
բայց գոհ էի իմ վիճակից, որովհետև իմ  
մանրունք որդկերանց կայտառ, զվարդ  
թռչկոտոցը միխթարանք էր ինձ համար:  
Բայց յանկարծ մի օր կանչեցին ինձ ա-  
տեան և յայտնեցին, որ ութը օրից պէտք  
է արշավենք Զէյթուն, չը գիտէի թէ ի՞նչու  
պէտք է արշավենք Զէյթուն, ի՞նչ էր նրանց  
միտքը, բայց պիտի զնայինք, որովհետև  
պարտաւոր էինք, Ութ օրը լրացաւ, թողի  
իմ ընտանիքը, հրացանը ուսիս դիմեցի  
զէպի այս լեռները, իսկ մնացեալը գուր

զիտէք: (Յուզիված հեկեկում է): Իսկ թէ  
ինչ է անում այժմ իմ ընտանիքը, իմ մահ-  
րուք որդիքը, այդ ես չը զիտեմ: Թող ես  
այստեղ վէրքից մեռնեմ, իսկ նրանք այն  
տեղ բաղցից մղկան:

ՅԱԹ. (Յուզիված): Մի լար, եղբայր, մի  
լար, Աստված ովորմած է, վատ օրերին կը  
յաջորդեն և լաւ օրեր, մի լար:

ԱՐՄԵՆ. Որտեղացի ես, եղբայր, կարելի  
է գանեմ մէկին և ապրուսի համար մի  
քիչ փող ուղարկեմ քո ընտանիքին:

ՎԻՐ. Ա՛, տէր իմ, որքան բարիք, դուք  
կը փրկէք սովի ճանկերից մի խեղճ ընտա-  
նիք: Ես Աղանայի մօտ Գեագուրշի զիւ-  
զիցն եմ, անունս Ղահրիման Կատիր օղլի  
է. ծ, արդեօք ես աշխարհումն եմ, թէ վե-  
րացել իմ հրկինը, արդեօք դու հրեշտակ  
չե՞ս, ֆէրայի Արմէնի պատկերով: Կարելի է  
երազ է. ի՞նչպէս դուրս զամ ձեր երախտի-  
քի տակից:

ՅԱԹ. Ղահրիման եղբայր, այստեղ եր-  
կինք չէ, ոչ էլ ֆէրայի Արմէնը հրեշտակ,  
նա մի զէյթունցի հայ է, որը բոլոր մարդ-  
կանց ընդունում է իրրի եղբայր, նրա հա-  
մար մի է թիւրք թէ հայ, քրիստոնեայ թէ  
մուսուման, նա դահիճ է զահիճնիրի, իսկ  
հրեշտակ քիզ պէս թշվառնիրի:

ՎԻՐ. Ո՛չ, խանում, դուք հրեշտակ էք,

դուք Աստվածանից ուղարկված բարի ողի-  
ներ էք:

ԱՐՄԵՆ. Ո՛չ բարեկամ, մենք էլ քիզ  
պէս մարդիկ ենք, իսկ մարդիկ պարտական  
են իրար օգնելու: Ես այսօր քիզ տեսայ  
ընկած վիրաւոր, թէի դու մուսլուման, ես  
քրիստոնեայ, բայց պարտական էի քիզ  
խնամելու, վէրքերդ կապելու: իսկ եթէ մի  
օր էլ դու կը պատահես մի ուրիշն ընկած  
վիրաւոր, կամ անօթի, կամ մերկ, եթէ  
կարող ես պարտական հս օգնելու, կշտա-  
ցնելու, հազցնելու: Մարդիկ եղբայր են և  
պարտական են իրար սիրելու:

ՎԻՐ. Տէր, մինչև այժմ մհղաւոր էի,  
բայց սրանից յետոյ կաշխատեմ մհղբեր  
քավելու, որովհետեւ տեսնում իմ, որ իրար  
սիրելուց վեհ բան չը կայ:

ՅԱԹ. Այս, որովհետեւ սէրն ազրիւր է,  
որից լզիսում է ամենայն բարիք:

### Տ Է Ս Ի Լ Գ

#### ՆՈՅՆՔ ԵՒ ՄԻ ԶԵՅԹՈՒԽՆՑԻ

ԶԵՅԹՈՒԽՆՑԻ. (Ներս մ.նելով): Արմէն  
էքիսպի, էկէնձննքի հիւանդանոցում մի-  
սկօնէր Ձքանսվան քիզ է սպասում:

ԱՐՄԵՆ. Ուզիղ, ժամը 12-ին այստեղ  
պէտք է լինէի. Ֆաթման, գնանք, պէտք է

կտրել մի խեղճի ոտը, արդէն գանգռենի նշանները երկում են: (Դառնալով վիրաւոր: Տերին): Մի կէս ժամից այսաեղ կը լինենք, հանգիստ եղէք, իսկ բո ընտանիքին, Ղահրման, մէկի հետ կուղարկեմ մի քանի կոպէկ: (Դուրս են զնում):

### S E U H L - 9

#### ՄԻԱՅՆ ՎԻՐԱՀՈՐՆԵՐԸ

Վիր. (Աղօրելով): Աստված իմ, ջնորհաւ կալ եմ քեզանից, ֆէկայի Արմէնի պատկերով քո հրեշտակն է, որը ոչ միայն ինաւմում է մեզ խեղճերիս, անտէր, անձար վիրաւորներիս, այլ և հոգս է քաշում մեր ընտանիքի, մեր մանրուք որդկիրանց համար: (Կրաից զանգահարաւմ են վանի զանգը): Քո հրեշտակի բերանով պատվիրում ես սիրել իրար, սիրել մարդկանց: Մրանից յետոյ կը սիրեմ, որովհետեւ, ով երկնային Տէր, մեղանից այդ ես պահանջում:

### S E U H L - 6

#### ՆՈՅՆՔ, ՄԷԽՊէ, ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ԱԼՕ.

(Վանի զանգը ընդմիջումներով զանգահարում են, եթես են մտնում վարդապետը, չո՞յ է չո՞յ Սէխպէն, եթա ետեւից մատուցարն ձեռին Ալօն, որի վերայ կայ

արծարեայ եկեղեցական անօրները հալատամբ բռնած, զլուխը կախ, չորեշով մատենում է վանի ներին. դռանը, որտեղ մինչի դուռը բանալը աղօք է մրմնջում, յետոյ մի բանի անգամ երկրպագում եւ դուան սիւներն է համբուրում, զլուխը բնելով բարերին):

**ՎԱՐԴԱՊԵՏ**. (Վանի դուռը բանալով):

Ո՞վ բարեպաշտ, մտիր Աստուծոյ տունը:

ՄէխՊէ. Ո՞չ, արժանի չեմ, ես մեղաւոր եմ, ուխտել եմ երեք հարիւր անգամ համբուրելու այս դռան չէմքը, մեղաւոր եմ, Տէր, Արարկերից մինչ այստեղ եկել եմ այդ ուժուս կատարելու համար:

ՎԱՐԴԻ. Կարող էք, ո՞վ բարեպաշտ, ես էլ ձեզ չը խանգարելու համար կը հեռանամ:

Մէխ. (Ցոյց տալով մատուցարանը): Նախ ընդունեցէք այս չնչին նվէրները. Էհ, ուսնայն է, ամենայն ինչ ունայն: Սկսում է չուխած երկրպագել, համբուրում է վանի տէմբը, չերմեռանդութամբ ձեռներ վեր պարզում եւ աղօք է մրմնջում, առանց ուսադրութիւն դարձնելու ոււշը):

ՎԱՐԴԻ. (Սլոի ձեռից առնելով մատուցարան): Աստված թող հարիւրապատիկ վարձատրէ սրա փոխարէն: (Մտնում է վանի):

### S E U H L - 9

#### ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՄԷԽՊէ. Ձեռներ վեր պարզած իր քէ աղօրում

է, կանչելով Ալօհին): Ալօ, աչքերդ չորս արա, գուրս գնա, սպասիր գուանը, երբ նկատեցիր Փէղայի Սրմէնի, Ֆաթմանի կամ մի ուրիշ մեզ ծանօթ մարդու գալը, ինձ իմաց անելու համար, վանքի զանգը խփիր, մեր աղքանշանը թող այդ լինի, իսկ այս յիմար վարդապետին խարելը հեշտ է:

ԱԼՕ. Շատ բարի: (Դուրս է զնում, իսկ Սէխապէն ժարունակում է ջերմեռանդ աղօթել):

### Տ Ե Ս Ի Լ Ի

ՎԻՐԱԿԱՌՆԵՐ, ՍԷԽՊԵ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ

ՎԱՐԴԱՊԵՏ. (Դուրս գալով վանքից, նայելով ջերմեռանդ աղօթող Սէխապէին, զգուշութեամբ անցնում է մօտից եւ չը խանգարելու համար երա աղօթի՝ յառաջանում է բեմի առաջը): Ես այսպիսի բարեպաշտ, սուրբ մարդ տեսած չէի, վանքի գուանը այնպէս լաց էր լինում, այնպէս աղերսալի աղօթում, որ հազիւ կարողացայ հանդարտացնել և երբ ասի թէ ի՞նչու էր այդքան յուզված, նա պատասխանեց. «Ի՞նչպէս չը լամ, ի՞նչպէս չը ողբամ, մի այնպիսի մեղք եմ գործել որ ինձ թողութիւն, յարութիւն չը կայ»: Նա մօտենալով ինձ, ականչից դողալով կամացուկ շնչաց. «անցեալ տարի անհավատների մէջ լինելով, մեղան-

չի եմ, կերել եմ մեծ պասը. վայ ինձ, վայ ինձ... իսկ այժմ եկել եմ ո. Յովհաննու գուոը, որ գտնեմ մեղքերիս թողութիւն»: Ես զարմացայ, մի այնքան չնչին մեղքի համար այդքան վիշտ, այդքան թախիծ, իրհամբոյրներով մաշեց վանքի որմները:

ՍԷԽՊԵ. (Վերջացնելով աղօթի, վւսացած, բախնու. Վերկենալով եւ մօտենալով վարդապետին): Հայր սուրբ, թոյլ կը տաք մի երկու ժամ առանձին աղօթելու սուրբ խորանի առաջ:

ՎԱՐԴԻ. Երբ որ կամենաք, վահնքի գըռները բաց է ձեզ համար.

ՍԷԽ. (Խպուտ ապուտ նայելով վիրաւութերին): Ո՞վքեր են այս վշտացեալները, հայր սուրբ:

ՎԱՐԴԻ. (Ցոյց տալով իբրահիմին): Սա Աղանայի անհավատ Իրրահիմ փաշան է, իսկ միւսները նրա զինուորները:

ՍԷԽ. (Խաչակենելով): Մեղա, մեղա, ի՞նչու են այստեղ հավաքվել անհավատները:

ՎԱՐԴԻ. Միթէ չէք լոէ երեկեան ճակատամարտի մասին, որից ամբողջ աշխարհը գործաց. զարմանալի է, որ դուք չը գիտէք:

ՍԷԽ. Ի՞նչ ճակատամարտ, ովքեր էին կովողները:

ՎԱՐԴԻ. (Ցոյց տալով իբրահիմին): Այս

շունը իր բանակով, ֆէղայի Արմէնը, Ա-  
թօն և Սուրէնեան իշխանը զէյթունցի-  
ներով:

**ՍէԽ.** Ֆէղայի Արմէնը, այն ուսեալ  
կատարեալ մարդը, ափսոս, ափսոս, որ  
մարդիկ զբաղված են իրար կոտորելով:  
(Չեռները երկինք բարձրացնելով): Տէր, նե-  
րիր սրանց, որովհետև չը գիտեն թէ ինչ  
են գործում:

**ՎԱՐԴ.** Ի՞նչ արած, այս անհավատնե-  
րից ազատվելու համար, ստիպված էինք  
զէնք բարձրացնելու:

**ՍէԽ.** Եւ յաղթվեց Արանայի հզօր փա-  
շան:

**ՎԱՐԴ.** (Յոլց տալով վիրաւուներին): Ահա  
տեսնում ես:

**ՍէԽ.** Օ՛, դժվար է ինձ մնալ այս ան-  
հավատների մօտ. հայր սուրբ, նիրիր, որ  
առանձնանալու հմ վանքում, պիտի աղօ-  
թեմ առ Աստված: Օ՛, դժվար է ինձ տես-  
նել արիւն, զէնք, զրահ և նրանց զոհեր:  
(Աշքերը ծածկում, խոնարհ, ընկնված, դող-  
դող բայլերով մնում է վաներ):

**ՎԱՐԴ.** (Նայելով Սէխապէի ետելից): Ես  
այսպիսի սուրբ և բարեպաշտ մարդ տեսած  
չէի:

(Պուրս և գնում):

## Տ Ե Ս Ի Լ Ը

**ՎԻՐԱԿՈՐՆԵՐ,** ՅԵՏՈՅ ՍԷԽՊէՆ

(Մի առ ժամանակ բեմը դադարէ է մնում, միայն  
այնտեղ են վիրաւուները, որը պահած, որը նստած:  
Վաներից լավում է Սէխապէի մեղմ երգի ձայնը, որը  
երգում է մի նոգեւոր մեղեղի):

**ՍէԽ.** (Զգուշութեամբ զլուխը դուրս հանելով  
վաների գռնից, չար կողմի նայելով եւ մօտենալով եր-  
րահիմի պատգաւակին, նէխնական ժափիր երեսին):  
Ննջիր, ննջիր անուշ ընով Արանայի առ-  
իւծ. Սէխապէն քեզ զինեց Զէյթունի կա-  
տաղիների զէմ, քեզ ուզարկեց քաջերի  
լեռները, որպէսզի դու սրով ու հրով նրա  
համար ձանապարհ բանայիր դէպի փառք,  
հարստութիւն ու պատիւ: Բայց բազով չը  
ժպտաց, ընկար թակարդը և վիրաւոր  
նվում ես պիզծ Գեավուրի վանքի պատերի  
տակ: Բայց քո բանակը փշընողը, քեզ զե-  
քողը այնքան յիմար գտնվեց, այնքան  
միամիտ, որ քեզ խղճաց և իր ոտների  
տակ չը տրորեց, որովհետև (հեքնելով) նա  
ասպետ է, նա խիզճ ունէ, գութ ունէ, ինչ-  
պէս կարելի է ձեռներ ընկածին, վիրաւո-  
րին... (Զար ծիծաղսվ): Հա... հա... հա...  
ինդա, Սէխապէ, այն զէնքը, որ ուղղել էր  
զէպի ֆէղայի Արմէնը, նորից քո ձեռումն

է, շնորհիւ Արմէնի յիմար մեծահոգութեանց այդ զէնքը նորից դարձուր զէպի նրա կուրծքը. չը կարողացար նրան ճզմել գոռ բանակով, այժմ կարող ես ոչնչացնել մի կանակի հարգածով: Ողորմելի Արմէն, (ցոյց տալով հբրահիմին): սրան խնայելով, սրան քո կրծքի վերայ տաքացնելով, քո ձեռներով քեզ խեղդեցիր, որովհետև Սէխապէն եմ, չը կարողացայ քեզ ոչնչացնել այն կերպ, կը ոչնչացնեմ այս կերպ: (Մօտենալով հբրահիմին եւ մեղմսւրեամբ ձայն տալով): Տէր իմ, տէր իմ, զարթիր, ժամանակ է:

ԻԲՐԱՀ. (Զարբելով եւ բիշ օհիկվելով): Ո՞վ է ինձ ձայն տալիս, ո՞վ խանգարեց իմ անուշ քունը և թելը կտրեց քաղցր երազիս: ՍէԽ. (Երկիւլով չօրս կօդմը նոյելով): Ես եմ, քո խոնարհ ծառան, քո սարուկ Սէխապէն:

ԻԲՐԱՀ. (Զարհուրած): Հեռու, հեռու, իմ կորստեան պատճառը դու եղար:

ՍէԽ. Ես միշտ հավատարիմ եմ եղել զէպի քիզ, ես միշտ աշխատել եմ յօգուտ իմ ողորմած տիրոջ, բայց ի՞նչ մեղք ունեմ, եթէ քո բաղդը չի ժպտում, ի՞նչ մեղք ունեմ, երբ պիղծ գեավուրների գլխին փայլում է յաջողութեան աստղը...

ԻԲՐԱՀԻՄ. Լոիր, վերջ տուր քո աղտեղի խօսքերին, ի՞նչու զրկեցիր ի՞նձ քաղցր

տեսիլից: (Ինքը իրան): Ոհ, այն ինչ տեսիլ էր, Արմէն ու Թաթման կանգնած էին մի բարձր ժայռի վերայ, որոնց չորս կողմէն պատած էր մի լոյս, մի լոյս հրաշալի: Նրանցից բուրում էր մի քաղցր հոտ, նըրանց գգվում էր վարդ, երփներանգ ծաղկունք, նրանց շոյում էր սոխակ իր անուշ, նրանց շոյում էր կերպիկ, մարդիկ անտէր, անտէրունջ, մարդիկ անկեալ մարդիկ դադրած, վաստակած, մարդիկ սոված ու հիւծված, մարդիկ վիրաւոր. իսկ նրանք, այդ հրաշալի զոյգը, սրբում էին արտասունքը թշվառի, միխթարում անտէր սգաւորին, քրտինքը սրբում դադրած վաստակածին, վէրըերը կապում տնքացող վիրաւորին: Ես դիւթված, զմայլված դիտում էի, նրանք նկատեցին ինձ և իրենց ձեռների շարժմամբ զէպ իրենց կանչեցին: Իսկ ես գրավված այդ բոլորից, թողի ձիուս սանձը, ձիու թոչում էր զէպ նրանց, բայց ափաղ, զէպ ինձ սուրաց մի դն, մի անոելի, մի պժպալի ողի և բռնեց ձիուս սանձը, զարթնեցի: (Դառնալով Ուկիսկին): Այդ դու էիր, դու, ով դժոխային ողի:

ՍէԽ. Տէր իմ, մի խարպիր չարից, այդ բոլոր տեսիլները սատանէական հնարներ է, այդ բոլորը թալիսմանի արդիւնք է:

ԻԲՐԱՀ. Լոիր, ամաչիր այս խնամքից, ամաչիր նրանց վարմունքից, չես տեսնում թէ ինչպէս են խնամում իրենց վերայ արշավող, իրենց տուն ու տեղ ավերող իրաահիմին. միթէ կուրացել են աչքերդ, թէ բոլորովին մեռած է խիզճդ:

ՍԵԽ. Տէր իմ, զգաստացիր, քեզ խարում են, որպէս զի յետոյ ծաղըն:

ԻԲՐԱՀ. Ո՞չ, ոչ, շնորհակալ եմ նրանցից, նրանք ոչ միայն ինձ, այլև զինւորներիս են խնամում:

ՍԵԽ. Այդ բանը նրանք են ասում, նըրանք կեղծում են: Դուրս արի, տէր, տեսքո աչքերով թէ ինչեր է կատարվում. երեկ այս վանքից քիչ հեռու երկու հարիւր Օսմանի լու զինւոր բարձրացրին անարգ կախաղան և նրանց լեշերի վերայ հոհուացին, նրանց ծաղրեցին... Սիրոս ցաւում էր, հոգիս տանջվում, բայց ի՞նչ կարող էի անել: (Լալով): Ոչինչ, միայն դառն լացի: Եւ գու ասում ես թէ նրանք խնամում, նրանք բժշկում են զինւորներիդ: (Հաստատ ձայնով): Ո՞չ, չարաչար խարում են. այդ շուն ֆէրային իր զանազան թալիսմաններով գըրաւում է քեզ, վէրքերդ բժշկում, որովհետեւ դու նրան պէտք ես: Ո՞վ փաշա, դու մոլորվում ես:

ԻԲՐԱՀ. (Հետաքրիր): Ի՞նչպէս, ինչու

համար եմ նրան պէտք, նա ինչու ինձ խընամում, ինչու է ցանկանում իմ առողջութիւնը:

ՄԵԽ. Ինչու, նրա համար, որ Ադանայի նզօր իրահիմ փաշային ողջ առողջ տանեն Զէյթուն և բարձրացնեն անարգ կախաղան, որպէսզի զէյթունցիք, այդ պիղծ գեավուրները նրա լեշի վերայ հոհուան:

ԻԲՐԱՀ. (Ձեռներով զլուխը բանելով, կատաղած): Ի՞նչ, ինձ կախել և ծաղրել իրահիմ փաշային, սուլթանի նզօր կուսակալին... Այժմ հասկանալի է ֆէրայի Արմէնի վարմունքի պատճառը, այժմ զիտեմ, թէ ինչու է այսքան խնամք տանում ինձ վերայ իմ ոխերիմ թշնամին. այժմ հասկանում եմ: (Յուզված): Ա՛, էլ ի՞նչու ապրէի, ի՞նչու սիրոս չը ծակեց զնդակը, ի՞նչու, միթէ նրա համար, որ ինձ ծերունի փաշայիս բարձրացնեն անարգ կախաղան և ծաղրեն: Շնորհակալ եմ, Սէխպէ, շնորհակալ, որ ինձ զգուշացրիր, զեռ ժամանակ կայ, նախ քան ինձ ծաղրելը, վերջ կըդնեմ իմ գժբաղդ կեանքին: Աւելի լաւ է մեռնեմ, քան թաւալիեմ ամօթի, ծաղրի և անարգանքի մէջ:

ՍԵԽ. Միք վհատի, տէր իմ, քո ծառան այստեղ է, նա քեզ կը փրկէ և իմ տէրը էլի իր փառքով կը մտնէ Ադանա:

ԻԲՐԱՀ. Ի՞նչպէս, դա անկարելի է, չեմ  
տեսնում թէ որտեղ ենք. այս լեռնցիք  
մարդիկ չեն, այլ գերբնական, անընկճելի  
էակներ: Ո՞չ, Սէլիպէ, թող մեռնեմ, բայց  
չը անարգիմ:

Սէլ. Տէր իմ, ուզիղ է, սրանց չի կա-  
րելի բռնի ուժով յաղթել, բայց կը յաղ-  
թենք խելքով, խորամանկութեամբ:

ԻԲՐԱՀ. Ի՞նչպէս:

Սէլ. Ես միայնակ չեմ, քո հաւատարիմ  
թիկնապահներից քսանը հինգ կտրիճներ  
կազմ և պատրաստ սպասում են վանքի  
պարտիզում. նրանք իմ առաջի նշանից խո-  
կոյն ներս կը խուժեն, բայց նախ քան այդ...

ԻԲՐԱՀ. Ի՞նչ:

Սէլ. (Խօրհրդաւոր): Մէջ տեղից պէտք  
է վերցնել ֆէղայի Արմէնին.

ԻԲՐԱՀ. Արմէնին... Ի՞նչու:

Սէլ. Ինչու... Տէր իմ այդ դու ես ա-  
սում, միթէ չը փորձեցիր այդ կտրիճ հայի  
անպարտելի ուժը, ինչ օգուտ մի երկու  
պահապաններ սպանելներս և քեզ աղատել-  
ներս. Եթէ ֆէղայի Արմէնը կայ, ձեզ ա-  
զատութիւն չը կայ, նա հեռու չէ մեղանից,  
դեռ հարիւր քայլ չարած նորից կը բռնվենք  
և ամեն բան ի կորուստ կը մատնենք:

ԻԲՐԱՀ. Բայց չէ որ այս կատաղիներից  
ամեն մէկը մի մի ֆէղայի Արմէն է:

Սէլ. Ո՞չ, սխալվում էք, Առաջինը, որ  
այստեղ գէյթունցիք քիչ են, երկրորդ, թէն  
նըանք քաջ են, բայց չունեն ոչ Արմէնի-  
խելքը, ոչ նրա ճարպիկութիւնը. սատա-  
նան է նրա ընկերը: Գործի յաջողութեան-  
համար պէտք է սպանել ֆէղայի Արմէնին:

ԻԲՐԱՀ. Բայց չէ որ Արմէնը մի ան-  
պարտելի ուժ է, չէ որ նրանից բոլորը  
փախչում են ինչպէս ոչխար. ով կարող է  
այդ բանը անել:

Սէլ. Դու, տէր իմ:

ԻԲՐԱՀ. Ե՞ս, վիրաւոր թոյլ ծերժէկս:

Սէլ. Այն, միայն գոււ, Երբ այդ կեղծա-  
ւոր ֆէղային կը մօտենայ քո վէրքերին  
նայելու, երբ կուացած դէպի քեզ վերքող կը  
խնամէ, (Հանելով ծոցից դանակը). այս  
գանակը խրիր նրա կուրծքը, իսկ դրանից  
յետոյ, ես գիտեմ իմ անելիքը,

ԻԲՐԱՀ. Ա՛, փառաւոր միջոց, միայն  
այդ կերպ, միայն այդպէս կարելի է տա-  
պալել իմ բանակի գահիճին, միայն այդ  
կերպ կը փրկվի իբրահիմ փաշայի պատիւը:

Սէլ. (Զար ծպտով), Այն, տէր իմ և երբ  
տապալեցիր այդ ֆէղայի շանը, իմ մի նը-  
շանով մեր շուրջը կը ժողովւն քո հավա-  
տարիմ թիկնապահները և նրանք իրենց  
սրերով մեզ ճանապարհ կը լանան դէպի  
Աղանա: (Լովում է վանքի զանգի ձայնը,

տապավիլ դանակը տալով հբրահիմին): Առ, տէր, գալիս է ֆէդային, զանգը նշան է նրա մօտենալուն. դանակը պահիր ծոցումդ, ուժ առ, Իրրահիմ փաշայի մորթոտված զինւորները վրէժ են պահանջում:

**ԻԲՐԱՀ.** (Դանակը պահելով ծոցում, մռայլ, կատաղած): Վրէժ, վրէժ սարսափելիս, մի քանի ըրպէից կը պատառեմ այն ժարդու կուրծքը, որը թքեց իմ նամուսին, որը ոտնատակ տվեց իմ պատիւը, փառքը, որը Զէյթունի կատաղիների սրին ճարակ տվեց հազարաւոր Օսմանլու զինւորների:

**ՍԷԽ.** Այս, պէտք է փրկել քո պատիւը և լուծել հազարաւոր ընկած Օսմանլու զինւորների վրէժը: Արիացիր, ուժ առ, մօտ է փրկութիւնդ, յիշիր, որ քեզ սպասում է անարդ կախաղան: (Նապով մենում է վանիք):

### Տ Ե Մ Ի Լ Թ

**ԻԲՐԱՀԻՄ,** Վիրահարներ, ԱՐՄԵՆ, ՖԱԹ-ՄԱՆ եհ ՎԱՐԴԱՊԵՏ

(Ներս են մենում Արմէնը, Ֆարմանը, վարդապետը. Իբրահիմը պառկած է պազգաւակի վերայ մատան, մոայ: Վանիք մեր ընդ մեր լսվում է մեղմ աղօքի եւ շարականի ձայն):

**ԱՐՄԵՆ.** Հայր սուրբ, ինչու այդպէտ տարաժամ զանգահարեցին:

**ՎԱՐԴԻ.** Մի ուխտաւոր ունեմ, երեխ ինձ կանչելու համար զանգահարել տվեց: Այդպիսի տարօրինակ և ջերմեռանդ ուխտաւոր տեսած չէի, գեղ մի կողմը թողած իր բերած ահազին ընծաները, մի կողմը նրա խոնարհ, հեզ գէմքը, շատ Աստվածավախ և բարեպաշտ մարդ է, այս վանքի գմները և շէմքը մաշեց իր համբոյրներով. խեղճը լուրվ իմ սիրահ էլ շարժեց և գիտէք ինչ է մեղքը. մի անգամ կերել է պասը: (Ժայտալով), Շատ տարօրինակ մարդ է, ես զարմանում եմ:

**ԱՐՄԵՆ.** Զարմանալու ոչինչ չը կայ, հավատ ունէ, այդպէս է համոզված, պէտք է յարգել համոզմունքը:

**ՎԱՐԴԻ.** Ես ոչինչ չունեմ, ընկհակառակը շատ ուրախ եմ:

**ՖԱԹ.** (Մօտենալով իբրահիմի պատգարակին): Արմէն, զարթել է հայրս: Հայր, ինչպէս է առողջութիւնդ: (Զեռը համբուրելով): Հայր, ինչու է գէմքդ մոայլ:

**ԻԲՐԱՀ.** (Մռայլ): Շնորհակալ եմ, աղջիկս, ոչինչ. հանգիստ եմ:

**ԱՐՄԵՆ.** Կարելի է ցավում է վէրքդ:

**ԻԲՐԱՀ.** Այս, քիչ ցաւում է, բայց ոչինչ:

**ՖԱԹ.** (Իբրահիմի ծածկոցը յես ձգելով եւ վիրաւոր ոտին նայելով): **Հայր,** վէրքդ ցավում է, անհանգիստ ես: Թող տեսնեմ, փոխիմ վիրակապը, կարելի է սեղմել է:

**ԱՐՄԵՆ.** (Չոքելով իբրահիմի պատգարակի առաջ, բանելով վիրակապը): **Ոչինչ, կ'փոխիմ գեղօրայըը,** կը հանգստանայ ցավերը:

**ԻԲՐԱՀ.** (Մոռալ, ձեռք ծոցը տանելով): **Այս,** կը հանգստանամ: (Արազուրեամբ հանելով դահնակը եւ խելով Արմենի կուրծքը, կատաղի): **Ուրոշինետև կը լուծեմ վրէժը այս բոլորի փոխան, որ կրեցի ես:** (Դանակը ձեռին դադող կանգնում է):

**ՖԱԹ.** (Ճշալով եւ աշխատելով բռնել հօր ձեռք): **Ա՛, հայր իմ, ինչ ես անում, հայր, յետիր դանակդ:**

**ՎԱՐԴ.** (Նտապով մօտենալով իբրահիմին): **Անօրէն, յետ քաշիր դանակդ:** (Բայց ուժ եւ, իբրահիմի դանակը սցում է Արմենի կուրծքը եւ դադող կանգնում. վարդապետ եւ լացող ֆարմանը բբռնում են վիրաւոր Արմենին. ներս են վազում երկու երեք գեյշունցին, տեսնելով վիրաւոր Արմենին եւ իբրահիմի ձեռում արիւնոս դանակը, սրեռով յարձակվում են նրան վերալ):

**ԱՐՄԵՆ.** (Վիրաւոր, հետզիւ հազ ոտի վրայ մնալով, ձեռք մեկնելով դէպի գէյրունցին): **Դարձրէք սրիրդ պատեան, մի մոլուանդ, անդէն ծերուկից վրէժ, այդ ամօթ է Զէյթունցու**

**անվան...** (Վարդապետի օգնութեամբ նստելով պատգարակի վրայ): **Իբրահիմ, ասա, միթէթէ քեզ պէս փաշային վայել էր գողի նման դանակը ցցել քեզ բժշկողի կուրծքը:**

**ԻԲՐԱՀ.** (Նվար, ցնցված Արմենի մեծահոգուրինից): **Չհմ հասկանում... չը գիտեմ խիսթ եմ... թէ ցնդած...**

**ՖԱԹ.** **Հայր, հայր, ինչ արիր, սպանեցիր այս մարդուն, որը խնամում, բուժում էր քո վէրքերը:**

**ԻԲՐԱՀ.** (Այս բոլորից ըսմած, յուզված, կաղեկաղ, դողլող մօտենալով Արմենին): **Խիզն տանջում է, հոգիս անհանգիստ է. ներիր, ով Արմէն, ներիր ինձ, միայն այժմս եմ հասկանում, որ ինձ խափից մի դժոխյային ողի, մի ահոելի, մի պէտքալի մարդ, որը այժմ այդ վանքում աղօթք է մրմընջում. դա անիրաւ, սինքոր Սէխապէն է:**

**ՖԱԹ.** (Ահաքեկի) **Սէխապէն:**

**ՎԱՐԴ.** (Զարմացած): **Բարեպաշտ ուխտաւո՞թը:**

**ԶԷՅԹՈՒԿԻՆՑԻՔ.** **Մահ նըան...** (Նտապով մտնում են վանելը):

**ԻԲՐԱՀ.** **Այս, նա էր ինձ դրգողը, նա էր ինձ մղողը դէպի այս ոճիրը, նա ավեց ինձ այս դանակը:** (Դանակը շպրտում է մի կողմը):

**ԶԷՅԹ.** (Քաշեկած բնեում են Սէխապէին):

Մեռիր անզգամ, մեռիր գարշելի մարդք:  
ԱՐՄԵՆ. (Վարդապետի օգնութեամբ հա-  
զիւ հազ կանգնելով): Սպասեցէք, բարեկամք,  
թող ապրէ դա, թող գեգերէ աշխարհում.  
դուք նրան սպասնելով, կը փրկէք պատժից,  
թող մնայ, սրանից յետոյ կը հետեւն նրան-  
արիւնոտ ուրվականները և իրենց դժգոյն-  
ձեռները գէպի նա պարզած, հաշիւ կը պա-  
հանջեն: Թող մնայ, թող տանջվի:

ՄէԽ. (Դիւային ծիծաղով): Արիւնալի-  
ուրվականներ, խի՛ճ, գաւթ, զրանք չը կան-  
իմ ցանկում: Թէկ չը հասայ իմ բաղձանք  
փառքին, հարստութեան, բայց ոչնչացրի-  
նարան, որը ինձ խանգարեց: (Լայրէ հեֆնա-  
կան): Մեռիր ֆէղայի Արմէն, ես էս կը  
հետեւմ քեզ, որովհետև քո կատաղիները  
ինձ ինայելու չեն: (Յոյց տալով իբրահիմին):

Ափսնս, շատ ափսնս, որ քո քաջերը չը  
սատակեցրին այս ցանցառ ծերուկին, այն-  
ժամանակ ինձ հեշտ էր ապատվել ծուղա-  
կից, իսկ այժմ, մի քիչ յետոյ վերեռում ի-  
րար կը տհանենք և հաշիւներս կը պար-  
զենք:

ԱՐՄԵՆ. (Զզվանեսվ): Օ՛, գարշելի մարդ,  
զզվանք, միայն զզվանք գէպի քեզ: (Զել-  
քունցիներին): Լաւ է, որ չապրէ այսպիսի-  
մի մարդ: Տարէք, զլորեցէք սուրբ Ծերի-  
քարձունքից, թող սրա գարշելի մարմինը:

սէպ սէպ ժայռերն ի վայր գլորվի և գա-  
վանների կերակուր դառնայ, տարէք: (Զել-  
քունցիներից մի երկուսը բաւեկաւ տանում  
Սիխապէին. իսկ մի բանիսն ել մնաւմ են Ար-  
մենի մօս. Արմենը վարդապետի օգնութեամբ  
նորից նստում է):

ՑԱԹ. (Չունելով Արմենի առաջ, Փարվե-  
լով ծենցիներով. լացկոտ): Ներիր Արմէն, նե-  
րիր հոգիս, քեզ սպասնել ուզողը իմ հայրն  
էր, իմ անխիղճ, դաժան հայրը. Ներիր, այս  
բոլորը իմ եղկելուս պատճառով եղաւք  
(Լայիս է),

ԻԲՐԱՀ. (Յուրզված, աղիողորմ, կերկեր):  
Աղջիկս, Ձաթման և գու Արմէն, ներեցէք,  
ներեցէք ինձ դժբաղդ ծերուկիս... Օ՛, մի՛-  
թէ իբրահիմը այգքան տմարդի պիտի լի-  
նէր, որ սպասնէր իրան բուժողին: (Աշխերն  
է սրբում):

ՑԱԹ. Օ՛, հայր, հայր... (Հեկեկում է):

ԻԲՐԱՀ. (Բանալով կուրծէր. չօքելով Ար-  
մենի առաջ): Խրիր կուրծքս դանակդ, պա-  
տառիր, թափիր այն վատի արիւնը, որը  
այդքան ստոր գտնվեց:

ԱՐՄԵՆ. (Բոլորովին բուլացած, կերկեր  
ձայնով): Վեր կացէք... (Ձարմանի ծեռից  
բռնելով եւ իր մօս նստցնելով. իբրահիմը  
վեր է կենում եւ վատացած կանգնում է մի  
կումբ, վարդապետը եւ միւս գելքունցիէ

մռայլ. լուս դիտում են): Մի լար, ֆաթման, մի ողբա և զու ծերուկ, միք լա իմ վերայ. միասին լանք, լանք մարգկանց վերայ, լանք տիրող չարիքների վերայ, ողբանք, որ միշտ արդարութիւնը, մեծահոգութիւնը, հեղութիւնը հալածված է, միշտ շանթահարված մահառիթ գնդակից, մորթոտված, յօշոտված ահաւոր դանակից, կամթէ չէ ծաղրված, հալածված մոլոր, տգէտ ամբոխից... Մեղաւոր չես զու, ծերուկ, մեղավոր չես, որովհետեւ քեզ շոյել, զուրգուրել մնունգ են տվել այնպիսի բարքեր, ոքը ճնիցնում է միայն թշվառութիւն, միայն հեծեծանք, միայն լաց ու ողբ... Դարձրէք աչքերդ, չորս կողմերս անապատ է, փշում է մի դառն, մի պժգալի հով, իրենց գլուխը վեր են բարձրացրել փուշ ու տատասկ... Լսեցէք, այն թնչ մզկտոց է, որ դիպչում է ականջներիս, այն թնչ հեծեծանք, թնչ ողբ, թնչ աղէկտուր հեծկտանք է, որ խանգարում է զգայուն սրտի հանգիստը... Ա՛, զա անտէրունջ ողբի, սգաւոր մայրերի, ոտնատակ թշվառի մեղմ, սրտառուչ մեղեղին է, զա մարգկանց անիրավութեան տակ ձմլված խեղճերի բողոքն է... Տեսէք, այն թնչ լոյս է, որ արտացոլում է մեր լեռներում, թնչ բոցեր են, որ երկինք են բարձրանում և նրանց ծուխի ահաւոր

ոլորները ծածկում մեր աչքերից այդ բոլորը... Ա՛, զա հէք թշվառի անշուք խըրծիթն է, զա անտէր շինուկանի տուն ու տեղն է, զա դարերի ընթացքում ժողովը դեան քրտինքով շաղախված վանքն ու եկեղեցին է, որը ըսնկված անիրաւ մարդկանց ահաւոր կրակով, մոխիր է դարձնում, մոխիր այն բոլորը, ինչ որ նվիրական է թշվառին... Բայց և լսեցէք. մեր ականջին են համսում և երջանիկ մարդկանց երդն ու տաղը, այս անտպատի օաղիսներում և տեսնվում են յղփացած մարդիկ, ոսկով, գոհարով փառաւորված երջանիկներ... Լսեցէք, նրանց ուրախ նվազի զոտ ձայները խառնված լսիրշ հոհոցի, անհոդ քբքիծի և թշվառութիւնը անարգող ծաղը ու ծանակի հետ, խեղդում են այն խեղճերի աղէկտուր մեղեղին... Տեսէք, վարդերի թփերը, սոխակների երամը և փառաց կոթողները ծածկում են այն բոցն ու ծուխը, այն ահաւոր հուրը, որը լափում է թշվառի կայանը... (Ծոյելով Ֆարմանին): Մի լար, ֆաթման, կը զայ մի օր, որ այդ բոլորը տեղի կը տայ եղբայրութեան, տեղի կտայ սիրոյ, որը պիտի քաղէ օաղիսների վարդերը և դրանցով ծածկէ անապատի տատասկ ու փշերը... (Բոլորովին բուլացած): Օ՛, մեռնում եմ... (Փառնալով իբրահիմին):

Ներում եմ քեզ, իրրահիմ... Տղերը և դուք  
ներեցէք... կտակում եմ ձեզ, որ իմ մահից  
յետոյ ձեռք ձեռքի տաք... և կռվէք չարի  
դէմ... ապրեցէք գուք... և ուխտեցէք սփո-  
փել թշվառին... (Թռվանում է, ֆարմանք մի  
քետվ գրկում է Արմենին): Օ՛ ֆաթման...  
անուշիկ ֆաթման...

(Մեռնում է):

ՖԱ. (Արմենին դեելով պատգարակի վե-  
րայ, չուելով առաջը): Օ՛, մարդիկ, արդիօք  
ինչու այս զոհը, ինչու այս պաշտելի մար-  
դու եղեռնական վախճանը! (Հեկեկում է):  
Ել ինչու ապրել, ապրել, արդիօք մութ գե-  
րեզմանը աւելի լաւ չէ, քան այս պատիր  
աշխարհը... Օ՛, հայր, հայր...

ԻԲՐԱՀ. (Յուզված, գլուխը բանելով):  
Ֆաթման, բաւ է որքան տանջեցիր թշվառ  
ծերուկիս: Սպանիր, մորթիր, պատոիր  
կուրծքս, խեղդիր, միայն թէ ներիր: Օ՛,  
ֆաթման, սրանից յետոյ կ'ուխտեմ զոհել  
ամեն ինչ, իմ պատիր, իմ կեանքը, իմ  
էութիւնս ու զօրութիւնը յանուն եղբայրու-  
թեան, յանուն սիրոյ: Ա՛, ֆաթման, ամե-  
նայն ինչի պատրաստ եմ, միայն թէ  
ներիր...

ՖԱ. Հայր, միայն այդ ուխտի համար  
ներում եմ քեզ, (Դառնալով վարդապետին եւ  
վեյրութիւնին): Եկէք և դուք, եկէք ի մի

խմբվենք, մոռանանք չարից խարված այս  
մոլեուանդ ծերունու ոճիրը, մոռանանք գա-  
րերի ընթացքում մեզ բաժանող նախապա-  
շարմունք, կրօնական նեղ հայացքներ, ա-  
տելութիւն, քէն, ոխ և դիմենք դէպի ա-  
ռաջ: Եկէք, չոքենք այս նահատակի, այս  
մեծ մարդու առաջ և երդվենք: (Բոլորը չո-  
քում են Արմենի ուուրջը): Թող վկայ լի-  
նի այս զոհը, վկայ երկինք, գետին, որ  
այս օրից, այս պաշտելի մարդու յիշատակը  
մեզ համար կը լինի սուրբ և մենք էլ սրա-  
նից յետոյ մեր ջանքը, ուժը, զօրութիւնը  
գործ կը գնենք յանուն եղբայրութեան,  
յանուն սիրոյ:

ՎԱՐԴԱՊԵՏ. (Զեռները վեր պարզած):  
Տէր, ընդունիր անարդարութեան այս զոհին  
էլ: Տէր, բաւ է եղեռնական այս դրութիւնը,  
Տէր, լից մեր բոլորիս սրտերը գութ, սէր  
և եղբայրական բարի զգացմունքներ: Երդ-  
վենք, բարեկամք, երդվենք Արմէնի սուրբ  
յիշատակով, մի կողմ քէն, ոխ, մի կողմ  
կրօնական երկպառակութիւն...

ԲՈԼՈՐԸ. (Միահամօւռ): Եղբայր ենք  
մենք... երդվում ենք և ուխտում...

Գ. Ա. Ր. Գ. Ա. Թ.





ՀՀ Ազգային գրադարան



NL0355890

47093

